

6-34

2648

2. Purtejo.

h/ste unyodur Stetjo

10/18/04 19/3p

291 99

P-30

Amboe Apr 1860



891.99

Ե-30

ԼԵՒՈՆ ՇԱՆՔ

# ՀԻՆ ԱՍՏԻԱԾՆԵՐ

ՏՐԱՄԱ

(Հազարամեակ մը մեզմէ առաջ)



1001  
3015

2648

Թ Ի Յ Լ Ի Ս  
1913



ԷԼԵՔՐՕՏԳՐԱՆ  
ՕՐ. Ն. ԱՂԱՆԿԱՆ

Որևէ լեզուի թարգմանելու, ինչպէս և ներկայաց-  
ման թոյլտուութիւն տալու իրաւունքը հեղինակը իրան  
է վերապահում:

Право перевода на другіе языки а также разрѣ-  
шенія постановки на сценѣ авторъ сохраняетъ за  
собою.

Handwritten text in a cursive script, possibly a signature or a name, written in blue ink.

(Handwritten text in a cursive script, possibly a signature or a name, written in blue ink.)

U n z h e U r u n


Faint, mirrored handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, mirrored handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

97379

54624-~~h~~

41628-68



4980-72

# Ա. ՏԵՍԱՐԱՆ

✓ ՍԵՒԱՆԻ ԳԱԳԱԹԸ. ԺԱՅՈՒՐՈՒ ՄԷՋ ԱԻԵՐԱԿ ՄԸ. ԻՐԻԿՆԱՍՈՒՑ.

Վանահայրը ֆաճած է ֆարի մը, ձեռքը ծնօտին ու մտախոն կը նայի վար: Կիսափուլ կամարի մը սակին կամաց քուրս կ'ելնէ ձեռնակաւորը:

✓ Վանահայրը՝ բարձրահասակ, քաւ ու պիտառն. գլխաբաց: ձեռնակաւորը նոյնպէս գլխաբաց, երկար սեւ մազերով, ասորական ձեռքի հիւսած սեւ ու շեղ մօրուով:

Վայրկեան մը երկուքն ալ լուռ կը նային իրար:

ձեռնակաւորը — (Հեզնտա) Կը դիտես. Կը դիտես թագաւորութիւնդ:

Վանահայրը — (Մոժոռ) Ո՞վ ես դուն:

ձեռնակաւորը — Դիտէ, դիտէ: Տես, այդ երկու-երեք խարխուլ խցիկները, չէ՞ որ դուն ես շիներ. հասկա այն մասնաւոր, որ քու աճապարանքն է կանուցեր. և վերջապէս, նայէ, քու այդ նոր եկեղեցիդ, որուն գմբէթը օր-օրի կը բարձրանա վեր և որու գլխուն շուտով քու իսկ ձեռքովդ խաչը պիտի տնկես:

Վաճահայրը — Այն, եթէ Տէրը կամենա:

Ճերմակաւորը — Նայէ ու հպարտացիր: Չէ՞ որ այդ բոլորը քու կամքիդ ծնունդն է:

Վաճահայրը — Ո՞վ ես դուն:

Ճերմակաւորը — Ա՛յ, սեւաւոր, ինչո՞ւ ես ժողովի գլխուդ այդ սեւադգեստ ու սեահոգի մարդիկը, ինչո՞ւ ես եկեր այս հինաւուրց կղզին:

Վաճահայրը — Ո՞վ ես դուն:

Ճերմակաւորը — Ելիր, ելիր. քէ՛ նորէն դուրս դէպի կեանքը այդ թշուառ ու մռայլ ամբոխը: Ելէք դուրս, դուք, որ զգայարանքները չորցընել կ'ուզէք ու կրքերը մարել: Դ՛ուրս այս կղզիէն, դուք, որ թըշնամի էք ամեն գեղեցկութեան, ամեն կեանքի ու շարժումի, ամեն ուժի ու ծնունդի: Դ՛ուրս, մի աղարտէք իմ աստածներուս այս սուրբ դրախտը:

Վաճահայրը — Հոս դրախտ չկա: Այս ժայռի կտորին վրա ես իմ վանքս հիմնեցի. ասկէ ետքը հոս անպատ պիտի կոչուի:

Ճերմակաւորը — Անպատ... այս ծիծղուն ծովակի ծոցին, այս թարմ արևուն դէմ: Հեռո՞ւ, կոխած տեղդ հին տաճար է աստածներու. հեռո՞ւ, հին աստածներու շէմքէն է, որ կը խօսիմ քեզի:

Վաճահայրը — Հին աստածներու աւերակներէն:

Ճերմակաւորը — Աւերակը այս քարերն են, որ քեզի պէսներն են դարսեր. քանդակեր է անոնց դարսածը: Բայց ինքը կեանքի մեհեանը խորտակում չունի, ինչպէս և ինքը կեանքը: Կը թափին քարերը, կը փոխւին անոնները, բայց իրենք աստածները կան ու կը մնան:

Վաճահայրը — Հոս մեռան քու աստածներդ:

Ճերմակաւորը — Հոս ու ամեն տեղ, ուր մարդ իր ոտքը կը դնէ, հոն են անոնք յաւերժ ու անմահ:

Վաճահայրը — Հոս մեռան քու աստածներդ. և անոնց աւերակներուն վրա ես իմ Աստծուս տաճարը կառուցի: Նայէ, մուկի՛ն մէջէն դեռ կը նշմարւի դմբէթին արդէն կազմուող սրութիւնը: Հոն կը թագաւորէ միայն հողին, հոն կը թագաւորէ միայն Աստծու շունչը...

Ճերմակաւորը — Հոն կը թագաւորէ տանջանքի գործիքը ու մահը:

Վաճահայրը — Տանջանքն է, որ կը բարձրացընէ հողին, տառապանքն է, որ կը մաքրէ: Եւ կեանքի ամենէն խոր բանը մահն է:

Ճերմակաւորը — Տանապանքը կեանքի խոցն է, իսկ մահը՝ կեանքի քայքայումը:

Վաճահայրը — Բու բերնով կը խօսի մանուկ մարդկութիւնը:

Ճերմակաւորը — Բու բերնով կը խօսի ցաւազար մարդկութիւնը:

Վաճահայրը — Հերիք է. ո՞վ ես դուն, որ կը հայհոյես: Հեռացիր, այս կղզիին վրա ալ տեղ չկա քեզի ու քու աստածներուդ:

Ճերմակաւորը — Այս կղզին ալ նոյն աշխարհն է, ինչպէս ամբողջ աշխարհը: Երկրպագէ, մոլորւած, յաւերժ աստածներուն:

Վաճահայրը — Հեռացիր:

Ճերմակաւորը — Սոստովանէ, մոլորւած, ու երկըրպագէ:

Վանահայրը — Հեռացիր:

Ճերմակաւորը — Կու գա օրը ու կը խոստովանիս:  
(Աներեւոյթ կ'ըլլա)

Վանահայրը — (Կը նայի շուրջը, անհանգիստ) Ո՞վ էր: Չքացաւ: Տեսիլք, կասկած... (Յանկարծ վճռական) Ա՛, երբէք: Աշխարհքը մուտք չունի, այս կղզին: Աշխարհքը մուտք պիտի չունենան այս կղզին: Ո՛չ:



## Բ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

### ՀՐԱՊԱՐԱԿ ՆՈՐ ԶԻՆՈՂ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՌՋԵԻԸ

Մեկ կողմը սանաթի անդուռ մուտք: Կ'երեւան  
սախսակէ ելարաններ: Հոս ու հոն քափւած են ասաղծ,  
կիսասաւ փաւեր, մաղ, գործիքներ:

Խորքը ծառեր, որոնց բուններուն մեջէն կը նշարուի  
ծովը:

Ամբողջ տեսարանի միջոցին քամի է, երբեմն խիստ  
բուռն քափով: Կը լսի տերեւներուն շրթները եւ ծովուն  
խուլ աղմուկը հեռուէն:

#### 1.

Մեկ-երկու փարսաւ կը վազեն ծառերուն սակէն  
դէպի ծովուն կողմը: Տեսարանի խորքէն արագ կ'անցնի  
ժամկոչը երկար ձող մը ուսին: Եկեղեցիէն դուրս կուգա  
Ազամ վանականը արտօրարով եւ աշխաստով դուրս փա-  
շտու երկար պարան մը, որուն ծայրը ներսն է:

Ազամ վանական — (Ջերմեղանդ) Աստուած հասնի օգ-  
նութեան: Աստուած հասնի օգնութեան:

Քարտաւ մը — (Կու գա ծովուն կողմէն ձեռքերը չոր-  
ցընելով. քաց են ոտներն ու թեւերը) Չգէ, վա՛ր  
ձգէ, հայր-սուրբ, ալ կարիք չկա: Ելան, ամենքն  
ալ ելան ափը:



**Աղամ վանական** — Ամենքն ալ, կ'ըսես՝ ամենքն ալ,  
և ծովը թափւածները:

**Քարաւ** — Ամենքն ալ, թէև յոյսերնիս բոլորովին  
կտրեր էինք. այնպէս կատաղի ծով է. ապշած  
կեցեր էինք ճարահատ. ըսինք՝ հիմա զարնէ պի-  
տի ափի ժայռերուն և փշուր-փշուր ընէ լաստն  
ալ, մէջի եղողներն ալ: Ես ու իմ Աստուածը, շատ  
աժան սլորձան:

**Աղամ վանական** — Փանք քեզի սուրբ Աստուածածին:  
Իսկ ո՞վ էին ծովը թափւածները: Շատերը:

**Քարաւ** — Միայն երկուքը, մեր աբեղան ու օրիորդը:

**Աղամ վանական** — Օրիորդը... Ի՞նչ օրիորդ:

**Քարաւ** — Իշխանին աղջիկը:

**Աղամ վանական** — Վայ, ան ալ իշխանի հեան էր:  
է՛, կենդանի է, ուշքը վրան:

**Քարաւ** — Այո՛, երևի. Հայրն ու իր մարդիկը տարին  
վանահօր խուցը: Տեսնէիր՝ ինչպէս սպրդներ էր  
իշխանը:

**Աղամ վանական** — Կատակ է. խեղճը: Բայց ո՞վ  
կ'ըսէր անոնց՝ այս տեսակ եղանակով ծով դուրս  
գային:

2

Կը մտնեն Անտոն, Մովսէս ու Ծերունի վանականները:

**Մովսէս վանական** — Է՛, ետքը, ետքը:

**Անտոն վանական** — Թո՛ղ, թո՛ղ քիչ մը շունչ քաշեմ:  
«Ետքը, ետքը,» հարցընելը դիւրին է. ետքը սար-

սափելի էր: Վայ... կարծես թւերս ջարդած ըլլան:  
(Կը նստի բարձր բարի մը):

Յաջորդ պատմութեան միջոցին հոն եղողներ կը  
մտնեան պատմողին, այլ եւ կու գան քանի մը բանուր,  
Ղազար, Դաւիթ, Զափարիա վանականները ու կ'աւելա-  
նան ունկրկողիքներուն:

**Մովսէս վանական** — Խօսէ, խօսէ:

**Ծերունի վանական** — Թո՛ղ, տղա՛, թող որ ուշքի գա:

**Անտոն վանական** — (Պահ մ'ը դէմքը կը ծածկէ ձեռ-  
քերովը եւ յանկարծ ըսնալով) Կէսէն արդէն ան-  
ցեր էինք: Մէյ մը վեր կ'իջնէինք ալիքներու ծայ-  
րը, մէյ մը կ'իջնէինք անդունդը, ամենքն ալ լաս-  
տին վրա փակեր էին իրենց տեղը, սպրդներ ու  
չորցեր: Ես ու աբեղան կը քաշէինք թիւրը որքան  
ուժ ունէինք: Կամաց մը դուրսս դարձուցի, տե-  
սա՛ կը մօտենայինք ափին, բայց ի՞նչ ափ. ա-  
լիքները, որ կու գան ու կը զարնեն ժայռերուն,  
կարծես փրփուրի սար ըլլան դէմդ կեցած: Ի՞նչ  
մեղքս պահեմ, սիրտս հալեցաւ, ըսի՝ վերջացաւ:  
Բայց յուսահատ ուժ աւել նորէն թիւրու՛ «Ես,  
Յիսոս, Քրիստոս», ըսի՝ «պի՛նդ նստեցէք, չը վախ-  
նաք»: Աս ըսելուս մէյ մըն ալ տեսնեմ անա-  
գին վիթխարի ալիք մը, կարծես հեռուն ցամա-  
քէն փրթիւր կու գար շիտակ մեր վրա... (Ոտքի  
ելնելով) Ալ մնացածը... ալ ի՞նչպէս ըսեմ. դի-  
տեմ որ լաստը յանկարծ սաստիկ թեքւեցաւ, կախ  
ինկաւ անդունդի բաց շրթունքին. յանկարծ սուր  
ճիչ մը ու կարծես բան մը փրթաւ. մեր լաստէն  
ու սահեցաւ այդ փոսը: «Աղջիկս, աղջիկս...»  
Բարձրացաւ աղմուկ, իրարանցում. ես դեռ հա-

զիւ էի հասկըցեր, որ կողքէս վեր թռաւ արեղան, արագ նետեց վրայէն կապան, ցատկեց ջուրը: Լաստը ուժով ճօճեցաւ, մնացի մէկ թիով, լաւ է՝ ալիքը ինքը կը քշէր, բայց գիտէի նորէն ետ է գալու: Եւ եթէ դուք ժայռերուն վրայէն թռկը ժամանակին չը հասցընէիք՝ կորած էինք մենք բոլորս ալ: Կէս վայրկեան մը աւելի ուշ, կէս վայրկեան մը և վերջացաւ...

Ծերուցի վանական — Աստու հրաշքը:

Աղամ վանական — Իսկ օրիորդը:

Անճոն վանական — (Հպարտ) Մեր արեղան ազատեց:

Աղամ վանական — Լողալով:

Գաւիթ վանական — Այո՛. լողալով. հանեց ափը:

Մովսէս վանական — Միթէ՛ արեղան լող տալ գիտէր:

Գաւիթ վանական — Ո՞րտեղէն. ո՞վ էր լսեր:

Մովսէս վանական — Ուղղակի հրաշք է:

Ծերուցի վանական — Ձեզի կ'ըսեմ՝ Աստու մատը կա հոտտեղ:

Աղամ վանական — Բայց աղէկ, ինչո՞ւ ճամբա ելաք այս եղանակով, Անտոն հայր-սուրբ:

Անճոն վանական — Է՛, այնքան՝ ըսի, համոզեցի, իշխանուհի սրբուհին ինքը այնքան խնդրեց, ո՞վ է լսողը: Իշխանը հրամայեց, որ մտնեն լաստը: «Եթէ կը վախնաք, դուք մի՛ գաք, ըսաւ մեզի. մենք ինքներս կը թիավարենք»: Ալ թ'նչպէս հակառակ էի, ըսի՝ Աստու կամքը:

Մովսէս վանական — Հապա աղջիկը:

Անճոն վանական — Ան ալ հօրը կտորը:

Ծերուցի վանական — Ձէ՛. Տիրամօր կամքն էր ասիկա՛. (Շտկելով իր գուսազանին վրա եւ ոգևորուած)

Նայեցէք, ո՞վ է Տիրամօր այս տաճարը կառուցողը. մեր սրբուհի իշխանուհին չէ՞. ո՞վ է մեր այս վանքը շէն ու պայծառ պահողը, ո՞վ է շինեը մեր այս խուցերը, ո՞վ է, որ շարունակ ամեն մեր պէտքերուն օգնութեան է հասեր մեզի, մենք, որ Տիրամօր աղօթող ճորտերս ենք:

Ձայներ — Իրաւ է, իրաւ է:

Զաւարիտ վանական — Աստուծ երկար կեանք պարգևէ մեր սրբուհի իշխանուհին:

Ծերուցի վանական — Ա՛ն, որ թողեր է ամեն իշխանական կեանք ու վայելք, իր զաւակներն ու իր ապարանքը ու եկեր է Տիրամօր ոտքը, հոն, ծամաքարերդի մենութեան մէջ իր կեանքին վերջին կէսը նւիրելու ճգնութեան ու աղօթքի:

Գաւիթ վանական — Երկար արև մեր բարեպաշտ սրբուհին:

Ծերուցի վանական Ա՛յ, Տիրամայրը անոր՝ համար է, որ ցոյց տաւ մեզի իր հրաշքը, ազատեց ալիքներէն անոր եղբայրն ու այդ աղջիկը: Թող տեսնեն բոլոր թերահաւատները ու համոզին, որ մեր Տիրամայրը երեսէ չձգեր իր ծառաներն ու իր աղօթողները: Անպակաս ընենք մեր աղօթքները ու թող անպակաս ընէ Ան իր օրհնութիւնը մեր վրայէն, անպակաս ընէ մեր սրբուհի իշխանուհիին վրայէն: Փառք մեր Տիրամօրը անուհին, փառք անոր Միածին Որդու անունին, յաւիտեանս յաւիտենից:

Խումբը — (Նրկիւղած) Ամէն:

Ձայներ — Իշխանը, իշխանը:

Իսկոյն խումբը կը բաժնուի երկու մասի, կը շարուի ու կը կենա խոնարհ:

Կը մտնեն Իժխանն ու Վանահայրը, բանի մը հետեւորդներ ու վանականներ:

**Իժխանը** — (Ուղիղ դիմելով դէպի շէնքը) Ասիկա է ուրեմն քրոջս այնքան սիրած ու փայփայած եկեղեցին: Կոկիկ ու սիրուն տաճար է: (Հետեւորդներուն) Հսի՛ այսօր տեսնեմ պիտի այս եկեղեցին և, ա՛յ, բոլոր տարերքներուն հակառակ կեցած եմ հիմա հոս ողջ և առողջ:

**Վանահայրը** — Յանդուզն քայլ էր ըրածդ, իշխան:

**Իժխանը** — Ձեր անապատը ուրիշ է, վանահայր, ուրիշ է դուրսը: Դուրսը յանդուզն եղողինն է աշխարհը: Եւ վերջապէս մէյ մըն ալ, ո՞վ գիտէ, երբ եմ այս կողմերը անցնելու, այնքան դործ ունիմ և զբաղում: Չտեսնէի՞ անգամ մը քրոջս եկեղեցին, չհամբուրէի՞ անգամ մը սուրբ սեղանը հրթալէս առաջ:

**Վանահայրը** — Վաղը օր չէր:

**Իժխանը** — Վճիղը բայց ես այս իրիկուն մեկնելու եմ Յամաքաբերդէն:

**Վանահայրը** — Ի՞նչ. հիմա նորէն մտադիր ես՝ ծոփն անցնիս:

**Չեբուցի վանականը** — Աստուած չեն փորձեր, իշխան:

**Իժխանը** — Քաւ լիցի: Դեռ քանի ժամ ունինք. յոյս ունիմ ծովը կը մեղմի:

**Վանահայրը** — Եթէ քեզի չես խնայեր, պէտք է խնայես զաւակդ:

5105 89-8291h 1001 ԶԿ-ՕՏԵԿ 1928

**Իժխանը** — Աղջիկս քաջ է: Քիչիկ մը վախցաւ, քիչիկ մըն ալ ձեր Սեանի ջուրէն կուլ տաւ, բան չկա, երիտասարդութիւն է, կ'անցնի: Բայց ինչ որ այսօր տեսաւ ու ապրեցաւ, ա՛յ, ատիկա չի անցնիր: Չէ՞ որ իր պատանեկան յիշատակներուն ահեղ փոթորիկ մը նւիրեցի:

**Չեբուցի վանական** — Կեանքի հետ չեն խաղար, իշխան:

**Իժխանը** — Ատիկա ըսողը դժէն ես, ծերո՞ւկ: Այնքան երկար ես ապրեք, որ մոռցեր ես, թէ կեանքը ինքը խաղ մըն է միայն:

**Չեբուցի վանական** — Կեանքը խաչ մըն է, որդիս, որ պիտի կրենք մեր ուսին, մինչև Տէրը կանչէ մեզի: Տիրամայրը խնայեց քեզի այս անգամ, բայց այդ մեղքը միւս անգամ չկրկնես:

**Իժխանը** — Եւ շնորհակալ եմ իրմէն, հայր-սուրբ, կ'աշխատիմ պարտքի տակ չմնամ: Եւ հիմա որ ուխտի եմ եկեր իր տաճարը, չէի ուզեր եկած ըլլամ պարապ ձեռքերով: Կը նւիրեմ՝ Տիրամօր այս տաճարին կաղնի դուռ մը բարձրաքանդակ, այլև վարագոյր մը աւագ խորանին, որ պիտի ըլլա թաւիշ ու ոսկենկար:

**Չեբուցի վանական** — Օրհնեալ ըլլաս: Ձեր ցեղի անունը անջինջ պիտի մնա այս պատերէն:

**Իժխանը** — Նաև պատուիրեր եմ իմ գործակալիս, ամեն տարի, քանի շէն է իմ տունս, տասը չափ սպիտակ ցորեն զրկւի իմ կալերէս ձեր անապատը: Վայելքը ձեզի, ձեր սուրբ աղօթքը ծնողներուս ու զաւակներուս:

**Ջայներ** — (Մտան) Աստուած օրհնէ ձեր ծնողներուն յիշատակը: Շէն մնա ձեր կալն ու այգին: Աստուած պահէ ձեր զաւակները: Աստուած աւելցնէ ձեր ինչքն ու ստացածքը:



**Իւլիանը** — Իսկ հիմա... (Վանասօրը) Ո՞ւր է արեղան:  
**Վանահայրը** — Իսկոյն, իշխանն, ետեւէն մարդ եմ զըր-  
կեր: Ա՛յ, արդէն:

4

Կը մտնեն Աբեղան Սիւնն վանականի ու դպիրի մը  
բնկերակցութեամբ: Աբեղան մուսլ է, դեմքը անշարժ  
աչխերը միտք գետնին. տեսակ մը անկամբ:

**Իւլիանը** — (Քիչ մը ղիտիլէն ետքը) Ի՞նչ գեղեցիկ  
տղա ես դուն և ի՞նչ երիտասարդ:

**Վանահայրը** — Միտարանութեանս մէջ կըտեսերն է, իշ-  
խան:

**Իւլիանը** — Է՛, վրադ պիտի չըլլար այդ սև վերարկուն  
և ես գիտէի իմ ընելիքս: Քեզի կուտայի իմ տա-  
կիս նժոյգը, կու տայի քեզի, ա՛յ, իմ սեփական  
սուրս, որ երեսուն տարի ծառայեր է ինձի հաւա-  
տարիմ, և կ'առնէի քեզի իմ պալատս, իբրև իմ  
հարազատ որդիս: Իմ սև նժոյգս քու այդ կեր-  
պարանքիդ աղւոր պիտի վայլէր, իսկ ձեռքդ, կը  
տեսնեմ, շուտով պիտի սորվեր սուրիս: Ձիս ու  
սուրս թէ հերիք չեկաւ, կու տայի քեզի և աղջիկս...

**Վանահայրը** — Իշխան:

**Իւլիանը** — ... Որուն կեանքը այսօր ազատեցիր: Անիկա  
արդէն քունը կ'ըլլար ըստ օրինի: Դուրսը աշխար-  
հին մէջ՝ ով ինչ վերցուց, վերցնուց:

**Վանահայրը** — Իշխան:

**Իւլիանը** — Դիտեմ, գիտեմ, այս սուրբ մենաստանին  
մէջ այս խօսքերուն տեղը չէ: Բայց ի՞նչ ընեմ,  
կ'ուզէի բան մը տամ, կ'ուզէի բան մը ընեմ, կ'ու-  
զէի բանով մը երախտագէտ ըլլամ այս անձնէր,

այս քաջ կտրիճին: Ափսոս, այդ սև վերարկուն  
կը կաշկանդէ իմ թևերս: (Մօտենալով արեղա-  
յին) Տղաս, քու իշխանդ քու առջևդ շատ աղքատ  
է ու շատ անգոր քեզի փոխարէն մը ընելու. ինչ  
որ ըսել կրնամ՝ հոս ներելի չէ, ինչ որ տալ կըր-  
նամ՝ քեզի պէտքը չէ:

**Վանահայրը** — Մեզի պէտք է քու ու զաւակիդ երկար  
արևը:

**Իւլիանը** — Աղէկ. ես քեզի պարտական մնացի, աղւոր  
ղագցում չէ. ես սովոր չեմ եղեր պարտական  
մնալու: Ի՞նչ և է. տուր ձեռքդ. տես իմինս, ա-  
սիկա երբէք տկար չէ եղած մեր թշնամիներուն  
դէմ ու երբէք ալ անարդար գործ չէ տեսած.  
արժանի է որ սեղմես այդ քու ձեռքովդ, որ այ-  
սօր ազատեց աղջիկս ալիքներէն: (Պինդ կը սեղ-  
մէ արեղային ձեռքը): Մտնե՛ք, վանահայր, տա-  
ճարին ներսը:

Իւլիանը, Վանահայրը, հետեւորդները եւ վանական-  
ներէն շատերը կը մտնեն եկեղեցի:

**Միսօն վանական** — (Կամաց մը բռնելով Աբեղայի  
թելէն) Երթանք, մենք ալ երթանք ու քիչ մը  
հանգստացիր: Դեռ տժգոյն ես բոլորովին և կը  
զգամ մարմինդ, որ դեռ կը դողա:

Կես մը գրկած կը քանի դուրս:

5

**Ղազար վանական** — (Մօտենալով Աղամ վանակա-  
նին, խորհրդաւոր կերպով) Հիմա ի՞նչ քան ժամա-  
նակ պէտք է ապաշխարէ արեղան, որ տաճարին  
մուտքը նորէն բացւի նրա համար:

Ա. դամ վանական — Ապաշխարէ՛. ինչո՞ւ համար:

Վազար վանական — Չէ՞ որ ձեռք է տւեր կնկա:

Ա. դամ վանական — Բայց... բայց այս տեսակ դէպք...

Վազար վանական — Ատիկա միեւնոյնն է, մեղքը մեղք է միշտ: (Աւելի խորհրդաւոր) Ես տեսա, երբ իրարու փաթթւած դուրս ելան ալիքներուն մէջէն: Իշխանին մարդիկը գրեթէ բոնի խլեցին աղջիկը անոր թեւերուն մէջէն:

Ա. դամ վանական — (Չայրոյթով) Անմիտ բաներ կը խօսիս:



## Գ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

### Ա. ԲԵՂԱՅԻ ԽՈՒՅԸ. ԳԻՇԵՐ

Յած ու փոքր սեմեակ մը, պատերը անկան փար: ձակասք սախակէ պարզ մահնակալ, վրան փուլած է փոս մը, չոր ու կարծր բարձ մը, իսկ կոճ ծածկոցը կիսովին ինկած է գետին:

Սեմեակի մեղսեղը հին կարպետի կտորի մը վրա ցածիկ ու լայն գրակալը, գրակալի վրան ալ մեծ ու բաց ձեռագիր մը:

Սեմեակի մեկ կողմը փայտէ կոպիտ սեղան մը, վրան փայտէ սեւ խաչ մը, կաւէ փարչ մը եւ իւղի նրագը, որ կը պլպլա: Միւս կողմը սեմեակի մուսկն է:

Մահնակալին գլուխը պատէն կախւած է Աբեղայի վերարկուն:

1

Աբեղան նստած է մահնակալի ծայրը, ձեռքերը կրծքին ծալած եւ աչքերը շեւտ լառած գլխին: Անոր քովը փայտէ ցած արոտակի մը վրա նստած է Կոյր վանականը, շիտակ, անշարժ, երկու ձեռքը գաւազանին ու գլուխը բարձր պահած:

Կոյր վանականը — Ո՞ւր են մտքերդ, արեղա:

Աբեղան — (Կը ցնցուի ու կը բարձրացընէ զլուխը):

Կոյրը — Նորէ՛ն, նորէ՛ն...

Աբեղան — Այո՛, այո՛, մեղք է, զիտեմ, մեծ մեղք:

Ո՛հ, ա՛լ չեմ մտածելու, ալ պէտք չէ մտածեմ. երբէք, երբէք. պէտք է ջնջեմ գլխէս այսօրը, բոլորը, բոլորը, ծովը, հովը, լաստ, ալիք . . . ա՛խ, այդ ալիքները . . . (Յանկարծ վեր կը թռչի թափով) Բայց ի՞նչ հրաշալի բան է եղեր կուրծքը անոնց հետ, երբ անոնք իրենց լոյժ կուրծքը դէմ կու տան քեզի, երբ իրենց փրփուրը կը զարնեն երեսիդ ու աչքերուդ, որ կուրցընեն քեզի. մէկը կը ցատկէ ուսիդ, միւսը կը դաւարի լանջիդ. մէկը կը հրէ, միւսը կը քաշէ, կը ճնշէ. ու բոլորը, բոլորը ընկճել կ'ուզեն քեզի. իսկ դուն միշտ երեսին, անոնց ելեւէջքին հետ կը տարուբերիս՝ բազկիդ գարկերուն տակ անոնց բոլոր ճիգերը յաղթահարելով. ա՛, այդ կուրծքը . . .

Կոյր — Կուրծքը կեանքի համար է, արեղան, հոս անապատ է:

Արեղան — (Կոտորած) Այո՛. անապատ: Մեղա՛ քեզ, Աստուած իմ, մեղա:

Կոյր — Զգո՛ւշ: Լաւ հսկէ ինքզինքդ, արեղա, աղօթէ:

Արեղան — (Խաչին առջև ծունր իջնելով) Ես կորսւած մեղաւոր մըն եմ, փրկէ ինձի, տէր. ես ինկած յանցաւոր մըն եմ, օգնէ ինձի, տէր. մեղքի մէջ խեղդող մըն եմ, բռնէ ձեռքէս, Տէր: Տես, մեղքի ծովուն մէջ . . . մեղքի ծովուն մէջ . . . ծովուն . . . (Երկու ձեռքով դէմքը ընկած կ'եղնէ ոտքի):

Կոյր — Ըսէ՛, ըսէ՛:

Արեղան — (Յանկարծ դէմքը կը բանա ու շեշտ կը նայի անոր արձանի նման անշարժ դէմքին):

Կոյր — Ըսէ՛, ըսէ՛:

Արեղան — Ըսե՛մ . . . ի՛նչը:

Կոյր — Ա՛ն, ինչ որ հոս խորքը. խորքը:

Արեղան — Խորքը, խորքը . . .

Կոյր — Ըսէ՛, ըսէ՛:

Արեղան — Ո՞վ կրնա տեսնել այդքան խորքերը, ո՞վ կրնա ըսել այդքան խորքերը:

Կոյր — Իսկ ես կը տեսնեմ, ես կ'ըսեմ:

Արեղան — Դ՞հու. կոյր: (Երգիծանքով) Հապա ըսէ՛, նայիմ, ինչ որ կը տեսնես:

Կոյր — (Հատիկ-Նատիկ) Լաստին վրա, երբ ձեռքիդ թին ջուրը կը պատուէր, ո՞վ էր հոգիիդ մէջ:

Արեղան — (Վախցած) Լո՛ւ:

Կոյր — Որ՞հու համար այնպէս կը թիւրուտար սիրտդ, շրթունքիդ ի՞նչ բառ էր փակած, երբ շուրջդ ամենքը Աստուած կը կանչէին, երբ դէմդ փոթորիկն էր, որ կը ծառանար:

Արեղան — (Սարսափահար) Երնէ՛կ բաց ըլլային աչքերդ, որ չտեսնէիր, չտեսնէիր . . .

Կոյր — Երբ բոլոր հայեացքները երկինք էին վերացած, երբ ամենքը կ'ըստասէին վերին օդնութեան, ո՞ւր էին սեւեռած քու աչքերդ, ո՞վ էր ան, որուն առջևը հոգիդ ծունր էր իջած:

Արեղան — Լո՛ւ, լո՛ւ. դուն իրաւունք չունիս ամեն բան տեսնելու. կարելի չէ ամեն բան տեսնել:

Կոյր — (Անողոր) Ըսէ՛, ի՛նչ էր ուզածդ, ի՛նչ կը փընտըռէիր:

Արեղան — (Աղերսով) Զգիտեմ, ոչինչ չգիտեմ. հերիք է:

Կոյր — Իսկ ծովուն մէջ, երբ ան օձի մը պէս վզիդ փաթթւած, մարմինը մարմնիդ, շունչը շունչիդ, երբ դուն ամեն ինչ մոռցած ալիքները կը պատուէիր, ըսէ՛, նորէ՛ն չգիտես, թէ ինչ կ'ուզէիր:

Արեղան — (Երագլոտ) Ո՛հ, կը յիշեմ: Կը յիշեմ, ամբողջ էութեամբս կը ցանկայի՛ որ ալ վերջ չունե-

նար այդ կռիւր, ալ վերջ չունենար այդ թաց ճամբան, ալ վերջ չունենար այդ վայրկեանը:

Կոյր — Ամբարիշտ:

Պրեզան — (Մորտակաձ) Բայց ունեցաւ իր վերջը:

Կոյր — Ու հասար ամբարիշտը եւ երբ անին քու բեռդ թեւերէդ ու դուն ուժասպառ ինկար աւազին, արդէն դիակ մըն էիր անկենդան:

Պրեզան — Ճշմարիտ է. ինծի այդպէս զգացի:

Կոյր — Դիակ մըն ես դուն և հիմա: Մարմին մը, ուրկէ ելեր է Աստու շունչը:

Պրեզան — Ա՛խ, Աստուծ իմ, կորուսի հոգիս:

Կոյր — (Ոտքի ելնելով) Ինկիր գետին ու կոճէ. քուրձ հագիր ու ապաշխարէ. իսկ ամենէն առաջ գնա իսկոյն վանահօր մօտ ու խոստովանէ:

Պրեզան — Խոստովանիմ, վանահօրը, ի՞նչ, ի՞նչ: Ա՛, ամեն, ամեն բան, բայց այդ մէկը երբէք: Եւ դուն ալ, հայր-սուրբ, չըլլա թէ...

Կոյր — Ես կոյր եմ, խուլ ու համբ. բայց գնա ինքդ վանահօր մօտ ու ինքնակամ խոստովանէ:

Պրեզան — (Կտրուկ) Վանահօրը երբէք:

Կոյր — Կը վախնաս:

Պրեզան — Ո՛չ, Բայց ... բայց...

Կոյր — Իհարկէ. դուն կ'ուզէիր պահես թաքուն սրտիդ մէկ հեռուոր խորշին մէջ քու այդ փոքրիկ նոր սրբութիւնդ, պահես և երկրպագես ծածուկ:

Պրեզան — Գթն, գթն ինծի, անողն:

Կոյր — Իսկ դուն քեզի կը գթնաս, կռապնշտ: Յիշէ պատուիրանը. «Մի եղիցին քեզ այլ Աստուծք բաց յինէն:»

Պրեզան — (Կակազելով) Մի եղիցին... մի եղիցին...

Կոյր — (Շեշտելով) «Մի արասցես քեզ կուս ըստ ամենայն նամուլթեան որ ինչ յերկինս ի վեր է և որ ինչ յերկրի ի խոնարհ և որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի...»

Պրեզան — (Դողդոջ) Եւ որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի:

Կոյր — (Կամաց-կամաց երթալով դուռը) «Զի ես եմ տէր Աստուծ քո, Աստուծ նախանձոտ, որ հատուցանեմ զմեզս յերես և ի չորիս...» (Դուրս):

Պրեզան — (Կ'երթա ծունկի կու գա խաչելութեան ստղերը բազկատարած ու ջերմեանն) «Կեցն դիս, Աստուծ, զի հասին ջուրք յանձն իմ, ընկալա ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հանգիստ: Եկի ես ի խորս... ի խորս... ծովու... և շրջանք... ընկզմեցին զիս...» (Բիշ-բիշ կը թուլնա, կը նստի ծունկերուն եւ գլուխը կը կախէ կրծքին):

Խաչն ու սեղանը կամաց կ'ըսկսի մեռուպասիլ, ամեն ինչ կը խառնու իրարու, եւ այդ մեռուի Ֆօնիկ վրա հետզհետէ կը պարզի աղջկան կեպարանքը: Ամբողջապէս սպիտակ հագած, հագուստը պարզ, նուրբ ու ձիգ, կարծես ջրէն հանած. մազերը արձակ, խոնաւ ու վրան մեկ-երկու քել ծովու խոս:

Պրեզան քեքեւ մը գլուխը կը բարձրացրնէ, յանկարծ կը տեսնէ ու սարսափահար կը ցակի ոտքի:

Պրեզան — (Շտ-ետ երթալով) Դ՞՞ն... դ՞՞ն...

Պրեզան — Այն, ես. միթէ չէ՞ր սպասեր:

Պրեզան — Աստուծ իմ:

Աղջիկը — Մինակ հս:

Աբեղան — Ես... ես մինակ եմ միշտ:

Աղջիկը — Ա՛յ, եկա քեզի ընկեր. և եկա այսպէս կէս-գիշերին, որ մինակ ըլլանք ես ու դուն: Դուն, իմ քաջս, իմ արևս, իմ լուղորդս...

Աբեղան — Հերիք է:

Աղջիկը — Ինչո՞ւ: Չէ՞ որ ես քեզմով է, որ հիմա կ'ապրիմ, չէ՞ որ դուն նորէն կեանքս տւիր ինձի. և ի՞նչ քաղցր է այդ կեանքը, որ դուն տւիր ինձի: Այս քանի՛, քանի՛ տարի ապրեր եմ ես, ամբողջ տասնըփոթը տարի, և ես չգիտէի, ընաւ չգիտէի, որ չէի ապրեր: Միտքդ է ցերեկը, հոն, ալիք-ներուն մէջ. նայէ, մազերս խոնաւ են դեռ, բռնէ, բռնէ, շօշափէ:

Աբեղան — (Ետ-ետ կ'երթա յափշտակած՝ սղջկան նայելով):

Աղջիկը — Բայց գիտե՞ս դուն ինչ ուժեղ թեւեր ունիս և ինչպէս ձկուն. իսկ ես դեռ այնպէս յուզւած եմ, դեռ այնպէս յոգնած (Կ'ուզէ նստի Աբեղայի անկողնին):

Աբեղան — (Արգիլել ուզելով) Օրի՜որդ:

Աղջիկը — (Կը նստի անկողնին ծայրը) Ես օրիորդ եմ ծառաներուն համար, ես օրիորդ եմ մեր հպատակներուն համար: Իմ տէրս ինձի այլ կերպ պիտի կանչէ:

Աբեղան — Սեղան:

Աղջիկը — Ա՛յ, դուն դիտես անունս:

Աբեղան — Հայրդ քեզի այդպէս կանչեց:

Աղջիկը — Այո՛, Սեղա է անունս: Իսկ ի՞նչ է քու անունդ:

Աբեղան — Ինձի արեղա կը կանչեն:

Աղջիկը — Իսկ առանձ, առանձ, երբ դուն աշխարհն էիր դեռ ու աշխարհինը:

Աբեղան — Իմ աշխարհքս վանքն է եղեր միշտ, քանի խելքս կը հասնի:

Աղջիկը — Ասիկա՛: Ա՛, ի՞նչ սառն է հոս, ինչպէս կը մրսիմ:

Աբեղան — Կը մրսիս:

Աղջիկը — Բան մը տուր վրաս, որ հոգիս տաքնա:

Աբեղան — Ես ոչինչ չունիմ:

Աղջիկը — (Առանց զուխը դարձնելու, ետևը պատէն կահւած վերարկուն մատնանիշ ընելով) Ա՛յ:

Աբեղան — Վերարկո՞ւ:

Աղջիկը — Ինչպէս կը մրսիմ:

Աբեղան — Վերարկո՞ւ:

Աղջիկը — Կը վարանիս: Բայց չվարանեցար կեանքդ ինձի տալու, չվարանեցար, երբ ետեւէս կատաղած ալիքներուն մէջը նետեցիր քեզի:

Աբեղան — Ո՛չ, չվարանեցա: Ան ուրիշ էր:

Աղջիկը — Այո՛, ան ուրիշ էր: Հոն կոխ էր ու փոթորիկ, իսկ հոս լուռ է ու խաղաղ, ինչպէս գերեզման: Ա՛, ի՞նչ սառն է հոս, ինչպէս կը մրսիմ (Կ'ընէ ոտքի):

Աբեղան — (Կը վազէ դէպք վերարկուն, ձեռքը կ'երկարէ ու նորէն վարանած կանգ կանգնէ:)

Աղջիկը — (Երկարանքով) Բ՛նք, բ՛նք...

Աբեղան յանկարծ կը խլի վերակուն ու կը դառնա դեպի աղջիկը, որ արդէն անտեսույթ է եղած: Աբեղան կը մնա հարացած, վերակուն բռնած ձեռք, առաջ պարզած:



Դուքսէն կը լսւի ժամկոչին ձայնը, որ մեղամաղձոս  
ու միայաբ երգով լմր ժամ կը կանչէ: Չայնը հնեզհնեհ  
կը մօտենա: Աբեղայի ձեռքէն կ'իյնա վերարկուն:

**Աբեղան** — *(Շրթունքներուն մէջէն) Յիսուս... (Կու-  
զէ նորէն չորի խաչին դէմը, ու խելատի պէս  
ետ կը ցատկէ:)* Ո՛չ, ո՛չ: Եթէ յանկարծ նորէն  
երեւնա... *(Դէմքը կը շրջէ անկողնին կողմը)*  
Ա՛խ, Աստուածս երես դարձուց ինձմէ: *(Հեծկըլ-  
տանքով կ'իյնա մահճակալին ոտքը ու դէմքը կը  
թաղէ անկողնին մէջ:)*

Դուքսէն կը լսւի միտ ժամկոչին երգը, որ հնեզհնե-  
հէ հեռու ու հեռու, կը քուլնա, կը նւաղի ու կը հալի:



Երկրորդ Արար

## Ա. ՏԵՍԱՐԱՆ

### Ա.ՂԲԻՒՐԻ ԳԼՈՒԽԸ

ՀԻՆԱԻՈՒՐԳ ՎԻԹԽԱՐԻ ԾԱՌԻ ՄԸ ԱՏԻԵՐԻՆ ՏԱԿ

Ծերունի վանականը նստած է ծառին սակր փայտե նստարանին ու բուն կ'երեւա: Աղբիւրին մօտիկ խմբւած են Ղազար, Մովսէս, Դաւիթ ու Չափարիա վանականները եւ սիրացուն. կը խօսին փափառւով ու անհանգիստ: Անոնց բովը կեցած է Աբեղան աչքերը գետին ու կը լսէ:

**Մովսէս վանական** — Իրան, նորէն:

**Տիրացուն** — Ցատկեր է անկողնին վրա, նստեր է կողորդին ու սկսեր է խեղդելու:

**Մովսէս վանական** — Յիսուս-Քրիստոս:

**Տիրացուն** — Խեղճը հազիւ է շունչը ազատեր:

**Դաւիթ վանական** — Ի՞նչ հակառակեր է չարը հայր Բարսեղին, աս քանի՞երորդ անգամն է:

**Չափարիա վանական** — Ի՞նչ կերպարանքով է եղեր:

**Տիրացուն** — Չգիտեմ: Ըսաւ միայն, որ ծծումբի ծուխին պէս բարձրացեր է ու առաստաղի գերաններուն մէջէն կորսեր է դուրս:

**Մովսէս վանական** — Անխճաճը: Նզովի ինքն ալ, իր կերպարանքն ալ:

**Տիրացուն** — Ա՛, սարսափելի է. ազատում չկա իր ճանկերէն:

**Պաւիթ վանական** — Գիշերները մինչև չնայիմ անկող-  
նիս տակն ու ետևը՝ ես երբէք պառկիլ չեմ կրնար:

**Մովսէս վանական** — Ես ալ: Անցած իրիկուն մտնեմ  
խոցս ու ի՞նչ տեսնեմ. գորշ սաւանին մէջ փաթ-  
թեւած կնկան մը պէս կը կըզեր է անկիւնը. լեղիս  
պատռեցաւ. իսկոյն խաչ հանեցի, աներեւութացաւ:

**Ղազար վանական** — Հնա, այդ նզովից-արմատները  
կու գան կնկա կերպարանքով. կու գան խմբերով  
ու ալ ինչէր ըսես չեն ըներ, ի՞նչ խայտառակու-  
թիւններ, ի՞նչ գայթակղութիւն . . .

**Զափարիա վանական** — Իսկ ինձի կ'երեւնան միշտ մեր  
գիւղացիներու կերպարանքովը: Գինեպան Ուսե-  
փը, մեր դրացի Գափօն, շըւի փչող կոյր Ակոբը,  
տհոլ զարնող Մինասը: Կու գան կը հաւաքէին  
գլխուս, ձեռքերնին գինի, օղի, ուտելիքներ, խո-  
րոված: Խաշուի անմահական հոտը կը լեցնէ խու-  
ցըս, կարծես ամբողջ բակը լեցեր են ու մատաղ  
կ'եփեն: Ալ ի՞նչ հրամմէներ, ի՞նչ խնդիր, ի՞նչ հա-  
մոզել, որ անպատճառ ուտեմ: Եւ մինչև Տիրամօր  
անունը չը տամ, չեն չքանար չիք-դառնալիքները:

**Մովսէս վանական** — Պատիժ է, պատիժ: Ինչո՞ւ կը  
տանջես մեզի, Փրկիչ:

**Զափարիա վանական** — Հակառակի պէս ալ, կարծես,  
մտքէս կը գողնան Տիրամօր անունը. կը փընտրուեմ,  
կը փընտրուեմ, հնա, հնա, լեղւիս ծայրն է, բայց չեմ  
կրնար ըսեր՝ «Սուրբ կոյս Մարիամ»:

**Տիրացուն** — Ա՛խ, ո՞ւր փախչի մարդ այդ գարշելիներ-  
րուն ձեռքէն: Ո՞ւր փախչիս, ի՞նչպէս փախչիս:

**Մովսէս վանական** — Եւ ի՞նչ կ'ուզեն մեզմէ. և ան-  
պատճառ մեզմէ:

**Պաւիթ վանական** — Անապատ եկողը եկեր է սատա-

նայէն փորձելու, ինչպէս որ ինքը Տէրն մեր Յի-  
սուս-Քրիստոս:

**Մովսէս վանական** — Յիսուս-Քրիստոս ըլլա մեր զօ-  
րավիգը:

**Խումբը** — Յիսուս-Քրիստոս:

**Տիրացուն** — Եւ ամեն տեղ են, ամեն տեղ, ուր ալ որ  
երթաս: Ա՛յ, ի՞նչ գիտէք, որ հիմա մէկը նստած  
չէ հոս, մեր ետևը (Տեղը կը փոխէ): Գամ հոն, քա-  
րափի ծերպերուն մէջը, կամ մեր վրան, ա՛յ, սա-  
ղարթներուն մութին մէջ: Կը տեսնէք . . . կը տես-  
նէք . . . մէկը հոն ան մութին խորքը . . . կը շար-  
ժւի. մէկն ալ հոս, ա՛յ, աղբւրին ակնէն. նայէ,  
նայէ, ինտո՞ր կը խնդա, ինտո՞ր կը քրքջա . . . (Սար-  
սափած ետ-ետ քաշելով աղբիւրէն) Յիսուս-Քրիս-  
տոս, Յիսուս-Քրիստոս: (Դէմ-դէմի կու զա վա-  
նասօր նետ):

2

**Վանահայր** — (Մոռոն) ի՞նչ կա, ինչո՞ւ ես վախցեր,  
տիրացո՞ւ:

**Տիրացու** — Հայր-սուրբ . . . (Կ'իյնա վանասօր ոտքերը):

**Մովսէս վանական** — Վանահայր, չարը հանգիստ չի  
տար մեզի:

**Ղազար վանական** — Ուժեղ է խարդաւանանքը չարին:

**Վանահայր** — (Զգաննով) Դեռ միշտ այդ հին դեւէն կը  
խօսիք ինձի: (Բարկացած) Ոտքի ելիք, տիրացո՞ւ:

**Տիրացուն** — (Դէմքը ծածկած կ'եղնէ ոտքի):

**Վանահայր** — (Բիչ մը լուռ կը նայի անոր, վերջը միա-  
ներուն ու հատիկ-հատիկ) Զարէն թող վախնա ան,  
ով չէ տիրեր իր մարմինն ու բնազդներուն. սատա-  
նային իշխանութիւնը բնազդներու վրա է միայն:

**Ծեռուճի վանական** — Իսկ ան ո՞վ է, վանահայր, որ

տիրեր է իր մարմինն ու բնազդներուն:

Վանահայրը — (Հպարտ) Ա՛ն, ով եկեր է այս անապատը, ծերունի:

Ծերունի վանական — Մենք մարդ ենք ամենքս ալ, վանահայր:

Վանահայրը — Ո՛չ, հայր-սուրբ. ով եկեր է հոս ինձի հետ իմ անապատս, պէտք է աւելի վեր ըլլա, քան մարդը: Իսկ չարէն թող վախնա ան, ով չէ կըտրեր իր բոլոր շղթաները աշխարհքին հետ, իր անցեալին հետ, իր յուշերուն հետ, իր վշտերուն, իր ուրախութիւններուն:

Ծերունի վանական — Իսկ ան սվ է, վանահայր, որ կըցեր է կտրել այդ բոլոր շղթաները:

Վանահայրը — (Հպարտ) Ա՛ն, ով եկեր է այս անապատը, ծերունի:

Ծերունի վանական — Մենք մարդ ենք ամենքս ալ, վանահայր:

Վանահայրը — Ով մարդ է ու միայն մարդ՝ անիկա աշխարհինն է ու թող դառնա աշխարհին. անապատրաստ է հայր Անտոնին լաստը: Ես չկանչեցի ձեզի հոս, որ հաւաքէիք ու դեւերէն սարսափէք: (Ոգեւորած կը բարձրացնէ կրծքէն կախած պարզ խաչը) Հոս Տիրոջ խաչն է, հոս դեւեր չկան:

Բոլորը — (Ջերմնոսնդ խաչ կը հաննն:)

Վանահայրը — Հոս կըքեր չը կան, հոս բնազդներ չը կան, հոս սուրբ-հոգին է միայն, հոս միտքն է միայն, վեր խոյացող միտքը դէպի ճշմարտութիւնը, դէպի Աստուած: Այս մէկը աղէկ հասկըցէք ու սատանաները թողէք աշխարհին: Դէ, երթաք խաղաղութեամբ և Տէրը ըլլա ձեզի բոլորիդ հետ:

Բոլորը — Ամէն: (Կը ցրին):

Վանահայրը կեցած է միակ, կը նայի անոց ետեւէն իսուր գլուխը շարժելով, երբ փոխէ կամաց մը կը մտնեա Աբեղան, կը ծռի, զգուշ կը բարձրացնէ Վանահոր փեթը ու կը համբուրէ:

Վանահայրը — (Յանկարծ կ'ըզգա ու կը դառնայ ետ) Ի՞նչ կ'ընես, որդիս, ի՞նչ կ'ընես:

Աբեղան — Հայր...

Վանահայրը — Ի՞նչ կ'ուզես, որդիս, ի՞նչ ունիս:

Աբեղան — Որքան բարձր ես դուն, հայր. որքան, որքան բարձր:

Վանահայրը — Բարձր կը ձգտինք մենք բոլորս, որդեակ:

Աբեղան — (Արհամարհոտ) Ա՛, բոլորս: Բու ձայնդ ինձի կարծես երկնքէն կու գայ. հեռուէն, հեռուէն, վերէն: Է՛, մենք բոլորս: Բանի խելքս կը հասնի՞ եղեր եմ քու թևիդ տակը, քու խրատներուդ, քու օրինակիդ, և եղաւ ժամանակ մը, երբ կարծեցի, թէ ես ալ հասնելու եմ այդ բարձունքները...

Վանահայրը — Իսկ հիմա, որդիս:

Աբեղան — Հիմա... հիմա... (Կտրուկ) Ես քու որոնած վերիններէն չեմ, հայր:

Վանահայրը — Ինչե՛ր կը խօսիս, տղաս, կը բամբասես ինքդ քեզի. դո՛ւն, իմ ընտրեալս. դո՛ւն, որ այս ամենուն մէջ ամենէն աւելի վեր սաւառնողն ես եղեր:

Աբեղան — Սաւառնողը... գուցէ, երբ թևերս ազատ էին ու թեթև:

Վանահայրը — Է՛, հիմա ի՞նչ եղան թևերդ:

Աբեղաց — Հիմա... հիմա թևերս թրջւեցան, հայր:

Վանահայր — Թրջւեցան:

Աբեղաց — (Թորհրդաւոր ու մօտենալով) Հիմա ես  
ալ կը վախնամ, հայր:

Վանահայր — Կը վախնաս, դուն ալ, սատանայէն:

Աբեղաց — Սատանամ. ո՛չ. ո՛չ սատանայէն:

Վանահայր — Հապամ:

Աբեղաց — Ես... ես կը վախնամ... ծովէն:

Վանահայր — Ծովէն...

Աբեղաց — Ծովէն: Հոն ալիքներ կան, փոթորիկ և՛  
յուզում, և՛ կռիւ և՛... և... ամեն ինչ:

Վանահայր — Կը հասկընամ, որդեանկս. անցած օր-  
ւան դէպքը ցընցեր է հոգիդ. կ'անցնի. Բնչ կապ  
քու ու ծովուն մէջ: Թարմ է սիրտդ, գթոտ ու  
կարեկից. ու ազատեցիր քեզի նման մանուկ էակ  
մը մահէն. օրհնեալ ըլլաս:

Աբեղաց — Բայց այդ օրէն, հայր, ինծի կը թւի, թէ  
ծովը... ծովը սիրտն է բնութեան:

Վանահայր — (Շեշտ կը դիտէ Աբեղան ու քիչ մը  
խիստ) Դուն նայէ երկինք, որդի. երկինքը միտքն  
է բնութեան, խճր ու խաղաղ:

Աբեղաց — Այո, խոր ու խաղաղ, երբ ծաւի պայծառ  
է երկինքը. իսկ իմ մտքերս աւելի կը նմանին  
թխպոտ օրերուն, երբ հոն ալ ամեն բան պղտոր  
է ու խառնակ: (Կոտրւած) Ես քու որոնած վե-  
րիններէն չեմ, հայր:

Վանահայր — Ատիկա ըսողը դուն ես, արեղա: Դուն,  
որ իմ հպարտութիւնս ես եղեր, որուն հոգին ես  
եմ խմորեր, որուն մէջ իմ ամենաթանկագին մը-  
տածումներս եմ դրեր, իմ սեփական հոգիս եմ  
դրեր, և որ ինծմէ ետքը իմ գործիս շարունա-

կողն է ըլլալու: Համեստութիւնը ես կը սիրեմ,  
արեղա, բայց իմ ժառանգս եղողի մը բերնէն ա-  
ւելի խոյանք ունեցող խօսքեր կը սիրէի լսեմ:

Աբեղաց — (Յանկարծ դէմքը ծածկելով ու հեծկլտա-  
լով) Ա՛խ, դուն դեռ չգիտես... դուն դեռ չգիտես,  
հայր...

Վանահայր — (Բողորովին այլայլած կ'ուղղուի եւ յան-  
կարծ խիստ) Ինծի նայէ, տեսնեմ. նայէ աչքերուս:

Աբեղաց — (Կը հեկեկա):

Վանահայր — Միթէ. միթէ ճշմարիտ է կասկածս: Ա-  
բեղա, նայէ աչքերուս:

Աբեղաց — (Կը հեկեկա):

Վանահայր — Այսպէս թո՛յլ, այսպէս խեղճ... Դուն,  
որու հոգին ես որձաքարի պէս ամուր կը կարծէի,  
անարատ ու կոյս բացառիկ հոգի մը. ու գլուխդ  
հպարտ ցըցած վեր, դէպի երկինք, աշխարհքի ծո-  
վուն մէջ, ինչպէս իմ այս կոյս ու մենաւոր կղզիս  
այս ծովուն մէջ: Թշուառական, խոնարհե՛լ կ'ուզես  
այդ գեղեցիկ, այդ հպարտ գլուխը ցած, այս ցածի  
ծովուն դէմ, այն վերերէն, ուր մեր Աստուածն է...

Աբեղաց — Աստուած երեսը դարձուց ինծմէ:

Վանահայր — Լուէ, լուէ: Այդպէս խախտտ, այդպէս  
ողորմելի... առաջին իսկ փորձումի՛ն:

Աբեղաց — (Ժուճը իջնելով) Հայր...

Վանահայր — (Ետ կը քաշի) Ելի՛ր, ելի՛ր. ես քեզ շատ  
եմ տեսեր ծունկերուս քովը, բայց ո՛չ այդպէս,  
ո՛չ այդպէս: Ես քեզի այդպէս չեմ կրնար տեսներ:  
Ելի՛ր, ելի՛ր:

Աբեղաց — (Կ'եղնէ ոտքի):

Վանահայր — Եւ հեռացիր: Գնա, եղի՛ր նորէն այն-  
պէս, ինչպէս որ էիր, ետքը եկուր ինծի: Այնպէս,

✓ Ինչպէս որ էիր, այնպէս, ինչպէս որ էիր...  
(Եօսքը կը կտրէ ու կը կենսւ աւնշարժ ու խոժոռ):  
Արեղտն — (Լուսն ու գլխահակ կամաց կը հեռանա):

4

Վաճառայր — Աշխարհքը... աշխարհքն է, որ կ'ուզէ  
մտնէ կղզիս: Հին սատանաները, հոս այդ աղջի-  
կը... և արեղան... իմ արեղան... այդ արեղան...  
Ո՛չ, անկարելի է: (Դառնալով դէպի վեր, դէպի  
կղզիին զազաւթը) է՛յ, դո՛ւն, դո՛ւն, ի՛նչպէս է քու  
անունդ, դո՛ւն, ճերմակաւոր. ո՛չ, աս պատահմունք  
մըն է միայն, չուրախանաս. դիպւած մը անցա-  
ւոր ու պատահական. չուրախանաս...



## Բ. ՏԵՍԱՐԱՆ

ԺԱՅՈՒՐՈՒՆ ՄԷՋ ԾՈՎԱՍԻ ՄԸ ԿՏՈՐԸ

Ձախ կողմը սեպ-բարձր ֆարափ, աջ՝ ցրի ժայռա-  
կոյսեր. մեջքերը սափարակ աւազուս. նակասը ծովն է  
մինչեւ ժայռերուն ոտքը. խորքը սարերու հեռանկար:

Պայծառ արեւ իրկուց է: Ժայռերը, ծառերը, ծովը  
եւ ամեն ինչ ողողւած են արեւի նարինջ-կարմիր շող-  
բուն մեջ, որոնց գոյները ամբողջ տեսարանի միջոցին  
թեթեւ մը կը փոփոխին ու կը վառւին:

1

Քիչ մը ասեմ տեսարանը պարապ է: Կը լսի աղ-  
ջիկներու սուր քրքիջ ու աղմուկ: Աջ կողմի ցածիկ ժայ-  
ռերէն մեկուն վրա կերեւա Միգանուց մը, կը նայի աե-  
խում շուրջը ու ետ դառնալով ձեռքերը խողովակաձեւ  
կը դնէ բերնին ու ձայն կու տա:

Առաջին Միգանուց — Հժ-ժ, հժ-ժ:

Կից ժայռին կերեւա ուրիշ Միգանուց մը, որ ժիւ  
ու բովումն, ձեռքով կ'ընէ ու կը կանչէ դեպի հեռուն:

Երկրորդ Միգանուց — Ա՛յս կողմը, ա՛յս կողմը:

Ու երկուքն ալ ձեռք-ձեռքի թեթեւ մը կը ցատկեն  
աւազուսին վրա:

Մինչ նոյն ժայռերու վրայէն ու ետեւէն ներս կը  
բափուին հնոս-հնոս ու խմբով միգանուցները, նուրբ ու  
թեթեւ, հկուն ու շարժուն. հագած են բաց-կապոյտ կամ  
բաց-կանաչ՝ ցանցընւած փրփուր զարդերով: Բոլորն ալ  
հերարձակ նոյն գոյնի ժապաւեկներով: Կը ցատկեն, կը  
վազեն, կը նետին. ծիծաղ, հրմուտ:

Նոյն ժայռին ծայր կ'երեւա Արեղան իր հալածող-  
ներուն ձեռքին փախչողի մը պէս: Ետեւէն ուրիշ միգա-  
նուցներ:

Արեղան կը նայի ժայռէն, կ'ըստայէ վար իջնէ, կը  
զայթի ցած ու նստած կը մնա ժայռի ոսկին: Ընդհանուր  
կայտառ քրիչ ու զարթ իրարանցում:

Արեղան կամաց կ'ելնէ ինկած տեղէն մտալ ու շար-  
ել լուսահաս շարժումով մը ձեռնովը կը գոցէ աչքերը:  
Կը լսեն բոլոր ու կ'անցարժանան:

Ծրարդ Միգանուց — (Կամաց կը ժօտենայ Արեղային  
ու կը կանչէ սկանչին) Սեղա:

Արեղան — (Կը ցընցի ու անմիջապէս կը բանա սքըն-  
ըր: Ընդհանուր քրքիշ, որ իսկոյն ալ կը զսպարի):

Միգանուցներ — (Զանազան կողմերէ ու դիրքերէ ի-  
րար արծազանգելով) Սեղա... Սեղա... Սեղա...

Արեղան — Կորէք, չքացէք յանուն Յիսուսի Քրիստո-  
սի: յանուն այս խաչի: (Չեղբովը խաչ կը հանէ  
անոնց վրա):

Խուսմը մը Միգանուցներ — (Շրջապատելով ու հեզնե-  
լով) Ա՛խ, այս սիրուն խեղճ մանչը,

միս, այս սիրուն խեղճ մանչը.

այ անգոր է քու խաչը:

Արեղան — (Նորէն կոտորած) Ալ անգոր է աղօթքս,

ալ անգոր է իմ խաչս:

Ծրարդ Միգանուց — Ա՛յ, մյ, ի զ՛նք. մի տխրիր:

Սուտօյն Միգանուց — Հոս ուրախ է ամեն իր:

Արեղան — (Սրտնեղ) Ա՛, ի՞նչ կ'ուզէք. թողէ՛ք ինձի:

Ծրարդ Միգանուց — Կ'ուզենք հոգիդ առկալծի:

Մեկնող Միգանուց — Մենք քեզի գէշ ի՞նչ ենք ըրեր:

Հինգերորդ Միգանուց — Գիտես, բերեր ենք լուրեր:

Ծրարդ Միգանուց — Լո՛ւրեր, սէրեր, սարերով:

Մեկնող Միգանուց — Սէրը սիրով, սէրը սիրով, օրէնքն մա է դարերով:

Արեղան — (Աչքերը շփելով) Բայց ո՛չ. սա պատրանք է դէի:

Սուտօյն Միգանուց — Դե՛ի:

Միգանուցներ — (Թե՛ւ թե՛ի կու տան մէջ կ'անեն Արեղան, կը դառնան շուրջը ու կ'երգեն պարելով):

Դե՛ի, դէի, թե՛ թե՛ի,  
պարենք, երգենք թե՛ թե՛ի,  
զուցէ սիրալ թե՛ թե՛ի  
այս անտէրի, անթե՛ի:  
Թե՛ թե՛ի,  
սէր ու վեր.  
տըէք թե՛ թե՛ի,  
թոչի վեր:

Արեղան — (Կը յարծակի Նորորդ Միգանուցի վրա)  
Ըսէ. ըսէ, դուն ի՞նչ ես,  
այդպէս անուշ կը հնչես:

Ծրարդ Միգանուց (Ետ ցատկելով թե՛ թե՛ի)  
Չէ, ո՛չ դե եմ, ո՛չ փերի.  
քեզի ծովէն լուր բերի:

Արեղան — Ուրեմն կ'աս, կ'ապրիս դուն:

Ծրարդ Միգանուց — Կ'ապրիմ այնպէս, ինչպէս գոհն:

Արեղան — Ո՛ւր է տունդ. բոյնդ ո՛ւր:

Ծրարդ Միգանուց — Եւ հոս, և հոն, ամենուրեք:

Սուտօյն Միգանուց — Ալե՛նուշներ, միգանուշներ,  
մենք բոլորըս անուշներ:

Արեղան — Չեզի երբէք ես չեմ տեսնու:

Սուտօյն Միգանուց — Նախ պէտք էր սէր:

Մեկրորդ Միգանուօ — Ու կարօտնիր, սպասուեմներ...

Հինգերորդ Միգանուօ — (Ընկերները ճեղքելով առաջ կ'անցնի) Բայց ծանօթ ենք ես ու դուն:

Մեքդան — Իրար ծանօթ, ես ու դուն:

Հինգերորդ Միգանուօ — Հա, կը յիշես այն առտուն, երբ ծովուն մէջ, Սեզան լանջիդ, փոթորիկը ականջիդ...

Մեքդան — (Ոգետրելով) Երբ կուէ էր ալիքին հետ:

Հինգերորդ Միգանուօ — (Շարունակելով)

... Կը կուէիր մեզի հետ, որ ոտքերդ կից մը աւին պինդ դարկովը ուժեղին երկու ծիծիս մէջտեղին...

Մեքդան — (Կարեկցոտ) Ցաւեցաւ:

Հինգերորդ Միգանուօ — (Ընկերներուն) Ցաւ, ինչ բան է՛ ցաւ: (Շարունակելով իրը)

... Այնպէս թափով, այնպէս ամուր, որ դարձա բուռ մը փրփուր:

Մեքդան — Դձն, փրփուր...

Վեցերորդ Միգանուօ — (Բնքուշ փաթթելով Հինգերորդին)

Անուշ քուրիկ,  
Փրփուրիկ,  
հատ մը, հատ մը  
համբուրիկ:

Չորրորդ Միգանուօ — (Չամչ տալով)

Ա՛խ, դուք չըզբե:

Հինգերորդ Միգանուօ — (Սըտնեղ)

Թող տուր ինձի. է հերիք:

Մեքդան — Իսկ երբ թողիր դուն ծովը:

Հինգերորդ Միգանուօ — Երբ չէր ինկեր դեռ զովը, այսօր, ջերմիկ կէս օրին:

Մեքդան — Թողիր ինքըդ, կամովին:

Հինգերորդ Միգանուօ — Հայր արեւը կանչեց վեր:

Մեքդան — Հայր... արեւը. հրաւէր:

Եւ ինչո՞ւ:

Հինգերորդ Միգանուօ — (Ժիծաղով ու զարմանքով ընկերներուն) Ինչո՞ւ:

Առաջին Միգանուօ — Չո՛ւ, չո՛ւ:

Վեցերորդ Միգանուօ — Չըւելու, չըւելու, հովերուն հետ պաշլելու:

Մեքդան — Հովերո՞ւն:

Մեկրորդ Միգանուօ — Ա՛յ, ա՛յ, եկան:

Խորէն խումբ մը — Եկան, եկան:

Չորրորդ Միգանուօ — Հովիկները, հովիկները, փախէք:

Ուրիօ խումբ մը — (Ուսուտելով) Եկան, եկան հովիկները:

2

Ընդհանուր իրարանցում: Ներս կը բափսիս Հովիկները՝ քարմ ու քեթե պատանիներ խոխ մագերով. հագուստին գոր, ծալաւոր ու ծածանուս:

Կը բափսիս ներս տեսարանի խորէն, կը խառնուին Միգանուներուն, կը փաքրին անոնց զոյգ-զոյգ կամ խմբերով. եւ առանց բնաւ կանգ առնելու, անոնք ալ իրենց հետ ֆաւելով, դուրս կ'եղնեն տեսարանի առջեւի մասէն, ցատկելով, աղմուկով ու ծիծաղով:

Չոյգ մը անցնելու ատեն.

Միգանուօր — Սպասել ալ որ կու տա՞ք:

Հովիկը — Կուի էինք սարի տակ:



**Միգանուեր** — Ի՛հ, առ որո՞ւն հետ նորէն:  
**Հովիկը** — Ա՛ն, որ վերը ձիւներէն:  
**Միգանուեր** — Կառեմ ատոնք բոլորն ալ,  
Ի՛նչ կոպիտ են, ինչպէ՛ս պաղ... (Կանցնին):

Փոք խումբ մը իրար փառելով.

**Հովիկ մը** — Մանէնք թուփին ծոցերը:  
**Ուրիօ Հովիկ մը** — Երթանք ծովուն բացերը:  
**Միգանուեր մը** — Երթանք պարենք, հա՛, պարենք:  
**Ուրիօ Միգանուեր մը** — Չէ՞, բերկրանքի համար ենք:  
(Կանցնին):

Մեծ խումբ մը քե-քեւ շղթա կազմած.

**Հովիկներ** — Անուշ շունչն էք ծովերու:  
**Միգանուերներ** — Դուք ալ յոյզքը եթերի:  
**Միասին** — Մենք ջերմ փարած իրարու,  
ա՛, ի՛նչ կեանք է անթերի: (Կանցնին)

Վերջին՝ ետ մնացած խումբ մը շտապելով

**Միգանուեր մը** — (Նտ նայելով Արեղային) Եկուր, ե-  
կուր, տղա՛, դուն ալ եկուր մեզի հետ:  
**Ուրիօ Միգանուեր մը** — (Փաթթելով իր նովիկին) Ա՛խ,  
չի կրնար. ան անզոյգ է, անընկեր...  
**Խումբը** — (Հեռանալով) Անընկեր...

3

**Արեղան** — (Նրկար կը նայի անոնց ետեւէն, մինչև  
աղմուկը կը կտրուի: Տխուր գլուխը շարժելով): Ան-  
զոյգ ու անընկեր... (Լուտ քիչ մըն ալ. ու յամ-  
կարծ սրտին խորքէն) Ա՛խ, գոնէ գիտնայի, որ

իզուր չէ այս ճգնութիւնը...: Ի՛նչ կեանք է առ,  
մոռցած մոմ մը խաչելութեան առջևը, դժգոյն  
ու մինակ, որ կը մխա ու կը հալի... (Չեղովը  
կը ծածկէ երեսը, գլուխը կը կահիւէ կրծքին ու  
կը մնա անշարժ):

4

Բարձր սեպ փարափի ծայրին կ'երեւա ձգնաւորը,  
զգգված ու կիսամեկ:

**ձգնաւորը** — (Պոռալով) Է՛յ. թվ է հոտ: Ի՛նչ գործ ու-  
նիս հոտ՝ իմ փոսիս զխուս:

**Արեղան** — (Ապշահար կը նայի վեր):

**ձգնաւորը** — Է՛յ, քեզի կ'ըսեմ. ի՛նչ բանի ես հոտ:  
(Արագ ցած կը մազլցի ժայռէն, երեւնալով ու  
չքանալով քարերու ցցածքներուն ետեւը: Հաս-  
նելով քարափի կէսերուն կանգ կ'առնէ) Ի՛նչո՞ւ  
ես եկեր, մարդ, այս անմարդ կողմերը:

**Արեղան** — Ա՛խ, երեւի դուն այն ճգնաւորն ես, որ մեզ-  
մէ շատ շատ տարիներ առաջ եկեր էր մինակ այս  
կղզին ճգնելու: Բայց չէ՞ որ անիկա մեռած է ար-  
դէն, վաղճւց, վաղճւց:

**ձգնաւորը** — Իսկ դո՞ւն. դուն մեռած չե՞ս, վաղճւց,  
վաղճւց:

**Արեղան** — Ե՛ս:

**ձգնաւորը** — Ունայնութիւն: Դուն ինծի ան ըսէ՛ ին-  
չու ես եկեր այս անմարդ կողմերը:

**Արեղան** — Չգիտեմ. ինծի բերին:

**ձգնաւորը** — Ո՞վ բերաւ քեզի:

**Արեղան** — (Մտածկոտ) Չգիտեմ: Բայց չէ՞ որ քու  
ճգնարանդ այս ժայռերուն միւս կողմն էր, աւելի  
վերը:

**Ճգնաւորը** — Բայց հոստեղ է իմ փոսս:

**Արեղան** — Փոս. ի՞նչ փոս:

**Ճգնաւորը** — Նայէ ոտքերուդ տակը. ունայնութեան փոսը:

**Արեղան** — Ունայնութեան (Կը նայի ոտքերուն տակը, որ քայցած է փորւածը մը գերեզմանի չափ ու ձեւով):

**Ճգնաւորը** — Զգո՛ւշ. չքանդեն:

**Արեղան** — Ճի՛շտ է, ճգնաւոր, որ դուն տէր ու թագաւոր ես եղեր ամբողջ ընդարձակ աշխարհներու, պալատներու մէջ ես ապրեր, հարիւրաւորներ են ծառայեր քու ամեն մէկ քմայքիդ. վայելքներուդ ու զւարճութիւններուդ սահման չէ եղեր: Ճի՛շտ է, ճգնաւոր, ինչ որ կը պատմեն:

**Ճգնաւորը** — Ունայնութիւն:

**Արեղան** — Կ'ըսեն՝ թողեր ես այդ բոլորը, պալատն ու խրախճան, իշխանութիւնն ու փառք. թողեր ես ամեն ինչ, հագեր ես սքեմ, դացեր ես մարդոց մէջ ապաշխարանք քարոզելու. քարոզելու գութ, քարոզելու ողորմածութիւն, քարոզելու խոնարհութիւն: Ճի՛շտ է, ճգնաւոր, ինչ որ կը պատմեն:

**Ճգնաւորը** — Ունայնութիւն:

**Արեղան** — Ճի՛շտ է, որ ատկէ ալ ես կշտացեր, եկեր ես այս մենութեան մէջ անդորրութիւն գտնելու, մտածելու հոգիիդ փրկութիւնը:

**Ճգնաւորը** — Ունայնութիւն:

**Արեղան** — (Յուզած) Ճգնաւոր, ի՞նչ կը խօսիս. ունայնութիւն և քու ճգնութիւնդ:

**Ճգնաւորը** — (Անտարբեր) Քիչ մը հեռու իմ փոսէս. փուլ չի տաս:

**Արեղան** — Հն, այս փոսը: Երեւի, գերեզմանդ է, որ

վրան այդպէս կը դողաս: Բայց բաց է ու պարապ: **Ճգնաւորը** — Ունայնութիւն և գերեզմանը: Ես գերեզման չունիմ:

**Արեղան** — Հն, իրաւ որ. գիտեմ: Կ'ըսեն՝ քեզի նետեր ես ծովը, հոն, այն միւս կողմի բարձր ժայռէն: Զվախցա՛ր հոգիիդ կորուստէն, չվախցա՛ր հանդերձեալ կեանքէն:

**Ճգնաւորը** — Ունայնութիւն մըն ալ այդ քու հոգիդ ու քու հանդերձեալ կեանքդ:

**Արեղան** — (Սարսափահար) Լո՛ւէ, թշուառական, հայհոյանք է խօսածդ:

**Ճգնաւորը** — Իզուր մի սարսափիր ու քիչ մը հեռու փոսէս:

**Արեղան** — Ալ ի՞նչ փոս. ալ ինչո՞ւ համար. ուրեմն ալ ինչո՞ւ ես փորեր այդ փոսը, ուրեմն ալ ինչո՞ւ կը պահպանես այդպէս վախով ու դողով, նոյնիսկ մահէդ ալ անդին:

**Ճգնաւորը** — (Գլուխը շարժելով) Ա՛, ատիկա է, ատիկա ունայնութիւններուն ունայնութիւնը: Փորեր եմ, փորեր, նայէ, այս եղունկներովս, ուղեղովս ու սրտովս, փորեր եմ անընդհատ ծնած օրէս մինչև վերջին վարկեանը, փորեր եմ ու որոնք տակէն բան մը գտնելու համար, կարևոր բան մը. փորեր եմ ու պահպաներ, որ այդչափ աշխատանքս չկորչի. հիմա ալ կը պահպանեմ, որովհետեւ իմ փորածս է. միակ բանը որ իմ է, իմ ստեղծածս: Միակ բանը, այ, այդ փոսը, այդ դատարկ փոսը, այդ միշտ դատարկ փոսը, որ ինչքան փորես, այնքան աւելի դատարկ կը դառնա: Դատարկ, դատարկ, կը հասկընամս, որ երբէք, երբէք չէ լեցելու, ոչինչով, ոչինչով: Գնա՛, դուն ալ գնա փորէ քու փոսդ ու թող իմինս ինձի: (Կուզէ նետանալ):

**Աբեղան** — Կեցի՛ր, կեցի՛ր, մահդ. քեզի հարց մըն ալ,  
դուն, որ այդքան իմաստուն ես:  
**Ճգնաւորը** — (Կէս մը ժայռին ետեւէն) Մարդը իմաս-  
տա՛ն...: Ունայնութիւն: (Դուրս)

5

Աբեղան կ'երթա նորէն փոսին գլուխը եւ շխուր ու  
մուսլ կը դիտէ մեծակոս:

Քարերուն մեջէն դուրս կու գա կերպարանք մը ամ-  
բողջովին փաքրած մեզի նման ֆոլի մը մեջ: Ծանր-ծանր  
առաջ կու գա ու կը կենա Աբեղային դեմը:

**Քօղաւորը** — Ի՞նչ է, եկա՛:

**Աբեղան** — (Գլուխը կը բարձրացընէ ու կը դիտէ թե-  
թեւ զարմանքով ու տեսակ մը անտոյթ) Ի՞նչ  
ալ անոնցմէ:

**Քօղաւորը** — Ինձի ինչո՞ւ կանչեցիր:

**Աբեղան** — Կանչեցի՛. քեզի՛:

**Քօղաւորը** — Հոգիդ կանչեց ինձի ու եկա՛:

**Աբեղան** — Հոգի՛ս:

**Քօղաւորը** — Ինչո՞ւ է հոգիդ մուսլ: Ի՞նչ կը խորհէիր:

**Աբեղան** — Հոգի՛ս:

**Քօղաւորը** — Ըսէ՛. ու այդպէս տխուր մի ըլլար:

**Աբեղան** — (Փոսը մատնանիչ ընելով) Ա՛յ, նայէ՛:

**Քօղաւորը** — Ատ ի՞նչ է որ:

**Աբեղան** — Կեանքը:

**Քօղաւորը** — Կեանքը. այդ նեղ ու մութ փոսը:

**Աբեղան** — Այո՛, ունայնութեան փոսը:

**Քօղաւորը** — Ա՛խ, վախցեր ես այդ դատարկ փոսէն:

Կ'ուզէ՛ս լեցընեմ:

**Աբեղան** — (Աշխուժ) Լեցընէ՛ս...

**Քօղաւորը** — Իսկո՛յն. դժւար գործ չէ: (Կը մօտենա,  
կը կենա փոսին գլուխը եւ կ'ըսկսի իր կիսերգը  
խորհրդաւոր կանչող շարժումներով. Եւ վերէն  
կ'ըսկսի մշուշի նման բան մը իջնել վար դէպի  
փոսը վերջալոյսի կարմիր ճառագայթներուն  
տակ. իջնող մշուշին մէջ աղօտ կը նշմարւին  
կարծես դէմքեր, մարմնի մասեր, տերեւ, ծա-  
ղիկ, կայծեր, գոյներ):

Իջէ՛ք, իջէ՛ք,  
երազներ.  
Իջէ՛ք զգո՛ւշ,  
երազներ,

շոյող, անո՛ւշ  
երազներ,  
Իջէ՛ք, քնքո՛ւշ  
երազներ:

Ծաղիկ, կանաչ,  
թարմ հիւսեր,  
բաղդի կարկաչ  
ու յոյսեր.

Դող ու անցուկ  
ու կարօտ,  
ծածուկ արցունք  
վարանոտ.

Խելքի, մաքի  
հակասում,  
միշտ նոր կեանքի  
սպասում...

Իջէ՛ք, իջէ՛ք,  
երազներ.

Իջէք զգո՛ւշ,  
երազներ,

շոյող, անո՛ւշ  
երազներ,

Իջէ՛ք, քնքուշ  
երազներ:

Գլանք, ժպիտ,  
գոյն ու բոյլ,  
աչեր վճիտ  
ու համբոյր.

Իղձեր անվերջ,  
անմեկին,  
տազնապ ու տենչ  
մոլեգին.

Օրօր, գրգիռ  
ու յոյզեր,  
սրտի թրթիռ,  
երգ ու սէր...

Իջէ՛ք, իջէ՛ք,  
երազներ.

Իջէ՛ք, զգո՛ւշ,  
երազներ,

շոյող, անուշ  
երազներ,  
Իջէ՛ք, քնքո՛ւշ  
երազներ:

Աստղեր թովիչ,  
բոց ու կայծ,

ցնորքներ վառ  
ու առկայծ.

Հաւատ ուժի,  
մեծութեան,  
փառքի, կամքի  
գոյութեան.

Շունդ, թնդիւն,  
հպարտանք,  
իմաստութիւն ..  
բիւր պատրանք,

Իջէ՛ք, իջէ՛ք,  
երազներ,

Իջէ՛ք, զգո՛ւշ,  
երազներ,

շոյող, անուշ  
երազներ,  
Իջէ՛ք, քնքուշ  
երազներ:

Քօղաւոր — Դէ, եկուր ու ալ մի ըլլար տխուր:

Արեղան — (Մայելով) Լեցա՛ւ: Կուզէի ոտքս դնեմ վրան:

Քօղաւոր — Դիր:

Արեղան — (Մէկ ոտքով կը կենա փոսին վրա) Եւ ես  
կեցած եմ հիմա ունայնութեան փոսին վրա:

Քօղաւոր — Դուն կեցած ես հիմա երազներու վրա:

Արեղան — Այո: Եւ փոքր լեցած է (Յանկարծ ուրախ  
ետ կը ցատկէ ու անզուսպ) Հէյ, դուն, հէյ, ճգ-  
նաւոր, հէյ, ունայնութիւն, փոռ լեցած է, լեց-  
ած: Իսկ դուն, քօղակիր հմայող, ո՞վ ես դուն:

Քօղաւոր — Ե՛ս, ես ալ երնդ մը:

Արեղան — Երնդ:

**Քողաւորը** — Ես ան եմ, որուն սպասեր ես դուն տարիներ ու տարիներ առանց գիտնալու. որը կանչեր ես դուն խուցիդ մենութեանը մէջ երկար, երկար գիշերները առանց բառ մը արտասանելու. որուն պապակեր է քու երիտասարդ ծաբաւ սիրտդ անվերջ ու անվերջ առանց խոստովանելու: Ես ան եմ, առանց որուն անապատ մըն է այս կղզին և որուն ներկայութեանը անապատին մէջ դրախտը կը ծաղկի: Ահա եկեր եմ ես քեզի:

**Արեղան (Ոգնորում)** Օրհնւած ըլլա քու գալուստդ, քողաւոր: Ըսէ՛ ինչպէ՛ս կանչեմ քեզի:

**Քողաւոր** — Կանչէ՛ ինչպէ՛ս որ սիրտդ ուզէ. իմ անուններս հաշիւ չունին: Դուն ծովը շատ սիրեցիր, կանչէ Ծովիկ, եթէ կ'ուզես:

**Արեղան** — (Երազկոտ) Այո. ծովուն խայտուն ալիքները այս ժայռերու ոտքին միշտ քեզմէ են խօսեր ինծի:

**Քողաւոր** — Եւ սիւքերը տերեւներուն մէջէն, և հաւքերը թփերուն տակ, և կարկանդ աղբիւրի շրթունքին, ամենը, ամենը, ամեն օր ու ամենուր ինծմէ են խօսեր քեզի:

**Արեղան** — Կ'ուզեմ տեսնեմ քու երեսդ: Բաց:

**Քողաւոր** — Թո՛ղ. գուցէ զղջաս:

**Արեղան** — Կ'ուզեմ տեսնեմ քու երեսդ: Բաց:

**Քողաւոր** — Աղէկ, եկուր ինքդ բաց:

**Արեղան** — (Վարխով ու դողով) Ե՛ս:

**Քողաւոր** — Եկուր, բաց:

**Արեղան** — (Դողդողալով կը մօտենա եւ դողդողուն ձեռքով կը բռնէ քօղին ծայրը ու կը քաշէ: Քօղը կ'իյնա աղջկան թեւերուն: Կեցած է Սեդան՝ ճիշտ այնպէս, ինչպէս որ էր առաջին արարին մէջ: Արեղան ետ-ետ կը քաշի հիացած ու խելազար) Սեղա՛...

**Սեղա** — Ի՞նչ է. ահա ես:

**Արեղան** — (Հետզհետէ աւելի ու աւելի յաիշտակած) Օ՛, դուն. դուն իմ էութեանս հմայքը, դուն թագունին իմ մտքերուս. դուն իմ սրտիս ծովը, դուն փոթորիկը իմ հոգիիս: Արեւուն հուրքն ես դուն, ծովերուն յոյգքն ես դուն, բնութեան պարզեն ես դուն ինծի: (Կը նետի գետին) Թո՛ղ, թո՛ղ փաթըթում ոտքերուդ, թո՛ղ համբուրեմ կոխած հողդ, համբուրեմ այդ ճերմակ հագուստիդ անարատ փէշերը... (Կ'ուզէ գալարի անոր ոտքերուն, որ աղջկան կերպարանքը կը մշուշոտի ու կ'աներեւոյթանա: Արեղան գրկելու դիրքով ինկած է անշարժ այն տեղը, ուր քիչ մը ստաջ ունայնութեան փոսն էր):

6

Խորի ժայռերուն մեջին կ'երեւան Աղամ ու Սիմօն վանականները, բեւեռն մեկ-մեկ բաշկինակ՝ մեզը լիբր:

**Սիմօն վանական** — Դժոխքի ճամբա է, դժոխքի ճամբա: Բռնէ տեսնեմ ձեռքս:

**Աղամ վանական** — (Օգնելով ընկերոջը, որ վերի ժայռէն վար իջնէ) Նայէ, հայր Սիմօն, ան ի՞նչ բան է հոն. կարծես մարդ ըլլա գետինը ինկած:

**Սիմօն վանական** — (Խաշ կը հանէ երեսը) Յանուն Յիսուսի Բրիտանի: Մ'արդ, այսքան հեռուները. դրժբախտութիւն մը պատահած չըլլա: (Կ'իջնէ ժայռերէն եւ երկուքով գորշ կը մօտենան):

**Արեղան** — (Անոնց ոտքի ձայնէն կը բարձրացնէ գրուիւր ու ապշած կը նայի աղջկը) Գնաց... (Կը նայի շուրջը, կէս մը կ'ելնէ ու կը նստի):

**Սիմօն վանական** — Ա՛խ, դուն ես, արեղա՛: Կ'աղօթէիր. ինչո՞ւ այսքան հեռուները:

Աղամ վանական — Վախցանք:

Աբեղաց — (Կ'ելնէ ոտքի, կը նայի անոնց ցրած արտայայտութեամբ եւ յանկարծ ուշադիր կ'սկսի գետինը բան մը փրնտոելու:

Աղամ վանական — Ի՞նչ կը որոնես, արեղան:

Աբեղաց — Ո՛ւր է. ճիշտ հոս պիտի ըլլար: Ո՛ւր է փոսը, ո՛ւր է այն փոսը:

Աղամ վանական — Ի՞նչ փոս, արեղան:

Աբեղաց — Հնա, իրան, մոռցան. չէ՞ որ լեցուց:

Աղամ վանական — Լեցո՞ւց, ի՞նչը, ո՞վ:

Աբեղաց — Ան... անիկա... երանգը:

Սիմօն վանական — (Ժպտուն) Ա՛խ, երանգ ես տեսեր: Քունդ տարեր էր, հան:

Աբեղաց — Երանգ... (Ծանկարծ վրա կը նետուի Սիմօն վանականին, շօշափելով անոր մ'արմինը, պինդ-պինդ թափ տալով անոր թելը) Իսկ դժն... իսկ դժն... իսկ դժն...

Սիմօն վանական — (Նոտ-նոտ քաշելով) Տէր Յիսուս-Քրիստոս, դուն խափանես չարը:

Աբեղաց — Իսկ ասիկան, իսկ էս, իսկ այս վանքը, այս անապատը... Ի՞նչպէս իմանամ որն է քուն, որն է արթուն. ան, հոն. անոնք, թէ՞ հոս, դուք, ես...

Աղամ վանական — Սթափուէ, արեղան, սթափուէ: Ի՞նչ երազ, ի՞նչ բան. այ, անիկա Սիմօն հայր-սուրբը, ասիկա ալ ես՝ մեղաւոր ծառաս: Կղզիի զագաթն էինք, իջանք սունկ հաւաքելու. քարէ քար, ժայռէ ժայռ հեռացանք մինչև հոս. այս կողմերը ըսքանչիի սունկեր կան. ամբողջ թաշկինակ մը ժողվեք եմ, նայէ. հրաշալի սունկէ-սպաս պիտի ըլլա:

Աբեղաց — (Ծանկարծ) Իսկ եթէ՞ դուն ինքդ սունկ մըն

ես միայն, հրաշալի սունկ մը բուսած ժայռի մը ըստ-ւերին և քունիդ մէջ կ'երազես միայն, իբրև թէ վանական մըն ես ու եկեր ես սունկ հաւաքելու:

Աղամ վանական — Խելքի եկուր, արեղան, ինչքը կը խօսիս:

Աբեղաց — (Շարունակելով) Կամ գուցէ այն ժայռի սուտերն ես դուն, քարի կտորի մը սուտերը, որ ինկեր ես հոս ու կ'երազես, թէ մեղքերուդ յաղթած սուրբ մըն ես դուն: Ո՞րն է երազը, որը արթուն ըսէ, եթէ գիտես. և ի՞նչ բան է ինքը երազը:

Սիմօն վանական — (Վախցած ու խօսքը փոխելու ջանքով) Երթանք, երթանք, արեղան, ուշ է արդէն: Դժոխքի ճամբաներ են, նայէ. կատարեալ սատանայի սանդուղ:

Աղամ վանական — Երթանք, որ հասնինք իրիկան հացին: Հսկում ունինք այս գիշեր:

Աբեղաց — (Համակերպած) Երթանք, Ուտենք սունկէ-սպասը ու կենանք հսկումի: Երազ մըն ալ ատիկան. բայց երկար, երկար երազ մը. չէ՞ հայր-սուրբ:

Աղամ վանական — Չգիտեմ, արեղան, ինչ ըսել կ'ուզես:



## Գ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

### ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԴԱՆԼԻՃ ՄԸ ՍԻՆԱԶՍՐԴ ՈՒ ԸՆԴԱՐՁԱԿ

Աջ կողմը խոր նիւ մը նեղ ու երկար լուսամուս-  
ներով: Նիւի առջևը փայտե բազկաբոռ, վրան բարձ,  
ոսփին սակը բարձ: Գովը՝ ցած ու փոքրիկ կլոր սեղան մը.  
վրան մեկ-երկու կանացի իրեր եւ գեղեցիկ ձեռագիր գիրք  
մը: Զախ կողմը երկար դիւան. ամեն կողմ զորգեր: Ճա-  
կասը սիւներ են, որոնք դահլիճը կը բաժնեն խորքի սրա-  
նեն. սիւներուն մեջ մուր գոյնի վարագոյրներ:

Անդորր, մեղմ ու ախորժելի:

#### 1

Իւխանուհին նսած է բազկաբոռին, ձեռքը սեղա-  
նին ու կը խօսի: Դեռ չթողած գեղեցկութիւն, քերէ  
մը ներմկած մազեր, սգաւոր սիկնոջ արտաքին, պարզ ու  
ընտր:

Քիչ մը փոքրնդի ու ետեւոք նսած է գետնին, գոր-  
գին վրա Դայեակը, որ ժիր ու դիւրաքեփ, ալեւոր ու  
սեւազգեստ պառաւ մըն է:

Իւխանուհիին դէմը գլխաբաց կեցած է Գործավա-  
րը, ձեռքին ոլորած մագաղաքներ:

Գործավարը — Այն, իշխանուհին եթէ կը հաճի:

Իւխանուհին — Աղէկ, ինչպէս գիտես, համաձայն եմ:

Գործավարը — Իսկ Սեպուհին:

Իւխանուհին — Տղթաւ. կը կարգադրեմ:

Գործավարը — Լաւ: Իշխանուհին ուրիշ հրաման ունի:

Իւխանուհին — Ո՛չ: Բարեներս բոլորին: Իսկ Աննան  
թող ինքըզինքը աղէկ նայի, իր այդպէս թոյլ կազ-  
մովը: Կըսես՝ մայրդ խիստ է դժգոհ:

Գործավարը — Իշխանուհին պէտք չէ որ թողնէր մեզի.  
իր բացակայութիւնը շատ է զգալի ապարանքի մէջ:

Իւխանուհին — Է՛, ապարանքը կը դառնա և առանց  
ինձի: Այդ տարիքին մէջ մօր կարիքը չնչին է: Ես  
հասցուցեր, պսակեր, կատարեր եմ իմ պարտքս:  
Աշխարհին տւեր եմ իմ հարկս. հիմա քիչ մըն ալ  
իմ հանգիստս ու իմ հոգիս:

Պառաւր — (Գործավարին) Թո՛ղ, դուն ալ, քու ապա-  
րանքդ ալ: Տիրուհիս նահատակ մըն է եղեր իր  
ամբողջ կեանքը, հիմա կ'ուզես, որ նորէն գար ու  
իշխար կեանքի անխելն տակ: Ո՛չ, ալ հերիք է. հան-  
գիստ է պէտք և մեզի, գոնէ մեր օրերուն վերջին:  
Նայէ, այս անդորր ու լռիկ մենարանը, ոչ-մէկ  
արքունիքի հետ չեմ փոխեր:

Գործավարը — Ճիշտ է, սիրուն տեղ է ծամաքարերով,  
սիրուն ու հանգիստ. Սևանի լիճը, դէմի կղզին:

Իւխանուհին — Եւ վերջապէս կ'ուզեմ մօտիկ ըլլամ իմ  
եկեղեցիիս, որ կը շինւի. տես, աչքիս տակը:

Գործավարը — Գիտեմ իշխանուհիին բարեպաշտու-  
թիւնը. գիտեմ անոր գթոտ սիրտն ու առատա-  
ձեռնութիւնը: Հոս ամեն քայլիս անոր ողորմա-  
ծութենէն կը խօսին ու կարեկցութենէն: Բարե-  
բարւածները անչնփ, գիտեմ: Իզուր չէ անշուշտ,  
որ սրբուհի կը կանչեն:

Իւխանուհին — (Ժպտուն) Իրաւ: Թող կանչեն, անունը  
ոչինչ չի փոխեր: Բան մը պիտի ընէի, թէ չէ, այս  
մենաւոր խուլ անկիւնը:

Պառաւր — Մանաւանդ տիրուհիիս պէս անվերջ հոգա-

տարութեան ու խնամելու սովոր սրտի մը համար:  
Իօխանուհիք — Կին ըլլալը՝ հոգ ըսել է, Եղիսա, իսկ  
մայրը՝ խնամք:

Գործավարը — Հրաման կու տամ իշխանուհին, որ մեկնիմ:

Իօխանուհի — Ե՞րբ կ'ուզես՝ ճամբա իյնաս:

Գործավարը — Այսպէս, ժամէ մը:

Իօխանուհիք — Աղէկ, Աստուած հետդ:

Գործավարը — Առողջ մնա իշխանուհին: (Կը ծոխ, կը  
համբուրէ խոնարհ անոր ձեռքը ու մէջի վարա-  
զոյրներէն կելնէ դուրս):

2

Իօխանուհիք — (Քիչ մը լուռ, եւ Ետքը հառաչանքով)  
է՛, կեանքը որքան քիչ բան ունի մեզի տալու:

Պառաւր — Մի տրտնջար. քիչ ունի թէ շատ, ինչ որ  
ունի քեզի տւեր է:

Իօխանուհիք — Այդպէս կը մտածես և դձև:

Պառաւր — Ծշմարտութիւնը ատ է:

Իօխանուհիք — Այն ատեն շատ խղճուկ ու աղքատիկ  
է ինքը կեանքը:

Պառաւր — Գուցէ:

Իօխանուհիք — Ա՛խ, ինչպէս տխուր է այսօր սիրտս:

Պառաւր — Ամպոտ է օրը:

Իօխանուհիք — Ամպոտ է դուրսը. անձրև է ու թուխպ  
հոգիիս մէջ: Բէք ինձի աւետարանս:

Պառաւր — (Ոտքի կ'ելնէ ու քիչ մը որոնելէն Ետքը)  
Հոտ է, թւիդ տակը:

Իօխանուհիք — (Վերցնելով ու ըսնալով) Հա՛, մոռ-  
ցեր էի:

3

Ջաժիօս մը — (Սեւազգեստ կին մըն է, որ վարագոյ-  
րը ետ ընելով կը խօսի խոնարհ) Վանահայր հայր-  
սուրբն է, կ'ուզէ տեսնէ իշխանուհին:

Իօխանուհիք — Հայր-սմբրբը:

Նաժիօսը — Այն, իշխանուհի: Ի՞նչ կը հրամայէ իշ-  
խանուհին:

Իօխանուհիք — Հոս առաջնորդէ: (Գիրքը ձեռքէն կը  
ղնէ վար):

Նաժիօսը — (Դուրս):

Պառաւր — Ա՛յ, աղէկ եղաւ. սիրտդ քիչ մը կը բացւի:  
Դուն միշտ ուրախ ես, երբ քեզի քու եկեղեցիէդ  
կը խօսին:

Իօխանուհիք — Բնց՝ վարագոյրը:

4

Պառաւր ես կ'ընէ սխմեռուն մեջի վարագոյրը եւ  
բռնած ալ կը մնա պատկառանքով: Կը մտնէ Վանահայր  
ու շիտակ դեպի Իօխանուհիք, որ ոտքի կ'ելնէ:

Վանահայրը — Աստու օրհնութիւնը քու վրադ, իշ-  
խանուհի:

Իօխանուհիք — Եւ քու, հայր-սուրբ: Ի՞նչ լուրեր  
վանքէն:

Վանահայրը — Աղօթք և օրհնութիւն:

Իօխանուհիք — Ո՛չ. եկեղեցին:

Վանահայրը — Օր օրի կը լրանա ու կը դառնա տուն  
աղօթքի ու ներքնաստոյ խոհանքի:

Իօխանուհիք — Ի՞նչպէս եղաւ աջակողմեան նիշը:

Վանահայրը — Այնպէս, ինչպէս որոշեցինք անցած օր:



**Ի՞նչպիսիք են** — Ուրեմն երկու սիւներուն ետեւը, ուրոյն կամարով:

**Վանահայր** — Այն: Ո՛չ: Ինչպէս թէ սիւներուն ետեւը: Սիւներուն կողքը:

**Ի՞նչպիսիք են** — Սիւներուն ետեւը: Չէ որ... սիւնը այսպէս... Եղիսն, յատակագիծը տան:

**Պատար** — (Որ քիչ մը հեռուն կեցած էր ձեռքերը կրծքին պատկառանքով, կերթա պատի պահարանէն կը բերէ ոլորած մազաղաթ մը):

**Ի՞նչպիսիք են** — (Փոխելով մազաղաթը իր փոքրիկ սեղանին վրա) Նստէ, հայր-սուրբ: Ա՛յ, նայէ:

**Վանահայր** — Ա՛յ քեզի սիւները, աս ալ կողքը:

**Ի՞նչպիսիք են** — Իրա՛ւ է: Ինչ կը նշանակէ, որ այդ կտորը իրականին վրա դեռ չեմ տեսած: Երեւակայելը երբէք ան չէ, չնայելով ինչքան, ինչքան նայեր եմ այս յատակագիծին վրա: Գիտե՞ս, յաճախ ամբողջ գիշերներով այդ շէնքի մասին կը մտմտամ բոլոր անկիւնները, բոլոր մանրամասնութիւնները, ամեն մէկ քարը: Այնպէս բոլորը մօտ է սրտիս, այնպէս կապած է հոգիիս, կարծես ամեն մէկ քարը ես եմ դրեր, ես եմ շիներ:

**Վանահայր** — (Կատակով) Այո, իշխանուհի, ես կը կարծէի, թէ շինողը ես եմ, արդիւնքը եղաւ՝ որ դուն շինեցիր:

**Պատար** — Ճշմարիտ է. Մարիամ Աստուածածնի այդ տաճարը իմ Մարիամ իշխանուհիիս ձեռքի գործն է:

**Վանահայր** — (Մտածկոտ) Այո, դուն շինեցիր, իշխանուհի:

**Ի՞նչպիսիք են** — Ո՛չ, հայր-սուրբ, ես չշինեցի այդ եկեղեցին. մենք շինեցինք այդ եկեղեցին, մենք, ես

ու դուն: Միասին ենք խորհեր, միասին ենք ոգևորներ, միասին ենք կազմեր ու միասին ալ կերպարանաւորել: Եւ այնպէս հիւսւած է եղեր այդ բոլորը իրարու, որ այժմ բնաւ չգիտեմ՝ որն է որ ինձմէ է ծներ և որը քեզմէ: Կը յիշե՞ս, հայր-սուրբ, մեր այն միասին խորհումներուն ժամերը:

**Վանահայր** — Կը յիշեմ, իշխանուհի. բաղբաւոր բան է կառուցելը, մանաւանդ տաճար մը, ուր քու Աստուածդ է բնակելու:

**Ի՞նչպիսիք են** — Աղւոր ըսիր: (Երազկոտ) Կեանքիս ամենէն քաղցր վայրկեաններն են եղած, երբ մենք միասին այս նոյն սեղանին երկու կողմը նստած մեր երեւակայութեան մէջ ստեղծեր, կառուցեր ենք այդ շէնքը:

**Պատար** — Եւ որու ճակտին քանդակելու է քու անունդ, դարէ դար պատմելու բոլորին քու բարեպաշտութիւնդ, ու աստուածսիրութիւնդ:

**Ի՞նչպիսիք են** — Թող մօր ու դայեակի քու այդ սնափառութիւնդ. Եղիսն. ձգէ մեզի առանձին ու միխանգարեր:

**Պատար** (Բրթմնջելով դուրս):

**Ի՞նչպիսիք են** — Այո, կեանքիս ամենաքաղցր վայրկեանները. չեմ քաշւիր կրկնելու, ինչ որ ճշմարիտն է. չեմ ուզեր քաշւիլ. Ինչո՞ւ աչքդ կը ձգես գետին. ո՛չ, պէտք չէ որ գետին ձգես: Ես ամբողջ կեանքս շիտակ եմ նայեր ամենուն երեսին և կ'ուզեմ որ ամենքն ալ, որոնց համար սրտիս խորքը յարգանք ունիմ, շիտակ նային իմ երեսիս:

**Վանահայր** — Չեմ հասկընար ինչ կը խօսի իշխանու-

հին: Ես պատճառ չունիմ ոչ-մէկուն առջեւ աչքերս գետին ձգելու:

**Իօխանուհին** — Բայց ճշմարտութիւնն ան է, որ ես ու դուն կը վախնանք իրարու աչքի մէջ խոր ու շիտակ նայելու:

**Վառահայր** — Իշխանուհի:

**Իօխանուհին** — Թող, թող, մինչև երբ: Այլ լեցւեր է բաժակը: Ինձի համար սաստիկ ծանր է ատիկա ու վիրաւորիչ: Ինչո՞ւ, ի՞նչ յանցանք ենք գործեր:

**Վառահայր** — (Ոտքի ելնելով) Իշխանուհին թող ինձի ներքէ, պէտք է մեկնիմ:

**Իօխանուհին** — Ո՛չ, ո՛չ, հայր-սուրբ, մի փախչիր: Եւ ի՞նչ օգուտ փախուստը. դուն քու հոգիէդ չես կրնար փախչիր: Նստէ, նստէ, պէտք է որ խօսիմ: Ամբողջ տարի մըն է, որ ես հոս եմ, ամբողջ տարի մըն է շրթունքիս է այդ հարցը և որ շարունակ վախցեր եմ տալու. իսկ այդ վախը խոր կը վիրաւորէ իմ արժանապատուութիւնս. կարծես երկու մեղաւոր ըլլանք դէմ-դէմի կեցած, որոնք ստիպւած են ամօթով իրենց հոգին ծածկելու:

**Վառահայր** — Ես չեմ հասկնար, ինչ ըսել կ'ուզէ իշխանուհին:

**Իօխանուհին** — Չես հասկնար...

**Վառահայր** — Ըսածներէդ չհասկցա ես ոչինչ:

**Իօխանուհին** — Ոչի՞նչ, Յովհաննէս:

**Վառահայր** — (Մայթւածի նման կը ցրնցի) Իշխանուհի... (Ու ծանր կ'ելնէ ոտքի):

**Իօխանուհին** — (Շոյնպէս ոտքի ելնելով) Միտքդ է արքունի ամարանոցը, մեր փոքրիկ աւազանի եզերքին, վերջալոյսի այն իրիկունը ասկէ ուղիղ քսանըհինգ տարի առաջ:

**Վառահայր** — Եւ այդ քսանըհինգ տարիներուն ետեւէն դեռ կը յիշէ իշխանուհին այն քանի մը հասարակ խօսքերը, որ փոխանակեր ենք հոն իրարու հետ:

**Իօխանուհին** — Յիշեր եմ ես միշտ:

**Վառահայր** — Երախտապարտ եմ, իշխանուհի: Մեծ պատիւ մը, որ ես բնաւ չեմ յանդգնած երևակայելու: (Քիչ մը լուռ, վերջը հետզհետէ գլուխը քարծրացնելով) Միայն... միայն այն Յովհաննէսը, որուն անունը այդքան զարմանալի կերպով դեռ չէ մոռցեր իշխանուհին, այն Յովհաննէսը, ան մեռած է վաղուց: Իսկ հիմա հոս կեցած է վանական մը, գրեթէ ծերունի մը, հեռու արքունիքէն ու ամենքէն, որ եկեր է քեզի հետ կառուցող շէնքի ծախքերուն մասին խօսելու:

**Իօխանուհին** — Յովհաննէսը մեռեր է գուցէ քեզի համար, չգիտեմ, բայց ո՛չ ինձի: Ան միշտ կենդանի է եղեր հոգիիս մէջ և կենդանի ալ կը մնա: Անոր պատկերն է, վանահայր, միակ պայծառ կէտը իմ ամբողջ կեանքիս մէջ:

**Վառահայր** — Բայց ատ ըսողը կին մըն է, որ ամուսին է ունեցեր:

**Իօխանուհին** — (Տեսակ մը ընդհատելով) Եւ խիստ արժանաւոր ամուսին մը, որ ես միշտ յարգեր եմ խորապէս: Եւ խորապէս ալ տանջւեր, որ յարգանքէ տարբեր բան մը անոր տալու անկարող եմ եղեր:

**Վառահայր** — Բայց ատ ըսողը կին մըն է, որ զաւակներ է ունեցեր:

**Իօխանուհին** — (Միտ) Ես կատարեր եմ իմ պարտքս: Եւ շատ ծանր է եղեր սրտիս, որ պարտաւորութենէս աւելի ոչինչ չեմ կրցեր տալ զաւակներուս: Պ

Ունեցեալ եմ ամեն ինչ և ամեն ունեցածս տւեր  
եմ իմ հարազատներուս. քայց բազմաւորութիւնս  
ոչ-մէկուն չեմ տւեր և ոչ-մէկէն ալ չեմ ստացեր:

**Վանահայր** — (Կեցած է լուռ և ունքերը կիտած):

**Իսխանուհին** — Լսէ, պէտք է ըսեմ բոլորը, որ մեր  
մէջէն վերնա այս անախորժ լարումը մի անգամ  
ընդ միշտ: Նայէ, ես պառաւ կնիկ մըն եմ, և դուն  
ինքդ ըսիր քիչ մը առաջ, որ ծերունի ես արդէն.  
վախնալու ոչինչ չունինք, քաշելու ալ ոչինչ չու-  
նինք, քանի որ մաքուր է մեր խիղճը: Այս քողար-  
կումը, զգացումներու այս խեղաթիւրումը վայել չէ  
մեր դէմքին, ո՛չ քու և ո՛չ ալ իմ: Լսէ, ինչ որ շըր-  
թունքս երբէք չէ արտասաներ և ինչ որ սակայն  
լեցուցեր է իմ ամբողջ էութիւնս: Իմ կեանքիս գորշ  
երկընքին դուն ես եղեր ինծի համար լոյսի աստղը,  
ապրելու իմաստը. առանց այդ լոյսին, առանց այդ  
մխիթարութեան, ես չգիտեմ, ինչու էի ապրելու:

**Վանահայր** — (Չեղբովը ճակատը սեղմած) Հերիք  
է, հերիք է...

**Իսխանուհին** — Քու պատկերդ է եղեր իմ դէմս մենու-  
թեանս վայրկեաններուն: Ինքս ալ աղէկ մը չգիտեմ՝  
այն ջերմ աղօթքները, որ սրտէս դուրս են յորդեր  
աւելի խաչեալին նկարի՞ն են ուղղած եղեր, թէ՞  
քու պատկերիդ: Իրան է, ես պաշտեր եմ քու պատ-  
կերդ իմ Աստուս հետ միասին:

**Վանահայր** — Եւ չէ՞ս վախցեր Աստուծմէ:

**Իսխանուհին** — Աստուծո՛ւ: (Բարձրացնելով սեղանէն  
սւետարանը) Աստուծ սէր է, վարդապետ:

**Վանահայր** — (Մտածկոտ զրուխը շարժելով) Այդ-  
պէս... (Յանկարծ) Իսկ հիմա:

**Իսխանուհին** — Հիմա: Հիմա ալ, տես, այս լուսամուտը,

որ քու կղզիիդ կը նայի ու քու լուսամուտիդ, այն  
քու փոքրիկ լուսամուտիդ, ուր մինչև կէս գիշեր  
անմար է ճրագը: Դուն երևի կը կարգաս ու կ'ա-  
ղօթես. ես ալ հոսկէ կ'աշխատիմ քու մտքերդ կար-  
գամ ու քու աղօթքներդ: Միթէ այս բոլորը հո-  
գիդ չէ՞ր գիտեր:

**Վանահայր** — (Կտրուկ) Ո՛չ, բնաւ:

**Իսխանուհին** — Իրան: Միթէ քու հոգիդ նոյնպէս լիքը  
չէ եղեր ինծմով, ինչպէս որ իմինս քեզմով:

**Վանահայր** — (Լուռ է):

**Իսխանուհին** — Պատասխան տուր. ուրախ չէ՞ր. միթէ  
հոգիդ ուրախ չէ՞ր, երբ հոս այս մենութեան մէջ  
դէմ-դէմի նստած կը խօսէինք ժամերով ու կը  
ծրագրէինք: Պատասխան տուր:

**Վանահայր** — (Անհանգիստ) Չգիտեմ. ես ոչինչ չգիտեմ:

**Իսխանուհին** — Չգիտես: Ես գիտեմ. և միշտ ալ վըս-  
տահ գիտցեր եմ, որ կ'ապրիմ միշտ քու հոգիիդ  
մէջ, թէեւ տարիներու այս երկար շարքին մէջ  
հազիւ ութը-տասը անգամ պատահած ըլլանք ի-  
րարու մինչեւ հոս դալս. և շատ աւելի նւազ մէկ-  
երկու խօսք փոխանակած ըլլանք իրարու, միշտ  
տափակ, միշտ անդոյն ու միշտ կողմնակի բա-  
ռեր: Ըսէ, ճիշտ չէ՞ ինչ որ կ'ըսեմ:

**Վանահայր** — Թո՛ղ, իշխանուհի. հին, անցած-զացած  
օրեր, ի՞նչ իմաստ քրքրելը:

**Իսխանուհին** — Հայր-սուրբ, եղիւր շիտակ ու պատաս-  
խան տուր: Այսօր պէտք է մաքրելին հին հաշիւ-  
ները:

**Վանահայր** — Ի՞նչ կ'ուզես, կին, ի՞նչ կ'ուզես դուն  
ինծմէ: Ամբողջ կեանքիս կէսը տառապանք տւիր  
ինծի, տառապանք ու դառնութիւն, ջարդեցիր

կեանքս, խորտակեցիր երիտասարդութիւնս, հիմա  
ալ մոխիրը քրքրել կ'ուզես:

**Իօխանուհին** — Իմ խեղճ Յովհաննէս...

**Վանահայր** — Արդէն կեանքը տառապանքէ զատ ուրիշ  
ի՞նչ է տւեր ինձի... և քեզմէ առաջ և քեզմէ ետքը:

**Իօխանուհին** — Ա՛խ, ես զգացեր էի...

**Վանահայր** — Վերջ տանք: Ի՞նչ միտք այդ հին ու  
մարած յիշողութիւնները խառնելը:

**Իօխանուհին** — Մարած...

**Վանահայր** — Այո՛, այդ անողոր յուշերն ալ միւս բո-  
լոր աշխարհային ցաւերուս հետ մէկտեղ սրտէս  
դուրս քամեցի այն օրը, երբ վրաս առի այս վե-  
րարկուն:

**Իօխանուհին** — Սրտէդ դուրս քամեցի՛ր...

**Վանահայր** — Այո՛, երբ մարեցան բոլոր աշխարհիկ  
կայծերը:

**Իօխանուհին** Ո՛չ, չմարեցան այդ կայծերը:

**Վանահայր** — Իշխանուհի:

**Իօխանուհին** — Ո՛չ, կ'ըսեմ քեզի. չմարեցան այդ կայ-  
ծերը: Աշխատեցար որ մարես, աշխատեցար, որ  
խաբես քեզի, օրօր ըսիր հոգիիդ ու համոզեցիր  
քեզի, թէ մարեր ես, բայց չը մարեցիր. չէիր  
կրնար:

**Վանահայր** — (Խիստ) Իշխանուհի:

**Իօխանուհին** — (Յած ծայնով) Եթէ մարեցիր, հապա ի՞նչ  
է այս եկեղեցին, հապա ի՞նչ է այս մեր եկեղեցին:

**Վանահայր** — (Սարսափած ետ քաշելով) Լո՛ւ, լո՛ւ,  
իշխանուհի:

**Իօխանուհին** — Ճշմարտութիւնը, վարդապետ: Մենք  
այդ եկեղեցին չենք շինած քու բարձրեալ Աստը-

ծուդ համար, ինչպէս որ միշտ կրկներ ես. մի  
խաբեր քեզի. այդ եկեղեցին շիներ ենք մենք մե-  
զի համար, մեր սիրու Աստծուն համար:

**Վանահայր** — (Խորտակած) Մարիամ...

**Իօխանուհին** — Այո՛. այդ քու եկեղեցիդ նւիրւած է ոչ  
թէ Մարիամ Աստուածածնին, ան նւիրւած է քու  
Մարիամ իշխանուհիիդ: Ըսէ՛ ճիշտ չէ՞:

**Վանահայր** — (Կեցած է լուռ ու զլխահակ):

**Իօխանուհին** -- Ըսէ, ճիշտ չէ՞,

**Վանահայր** — (Լուռ է ու զլխահակ):

Անկիւնը յանկարծ կետեա ձերմակաւոր:

**ձերմակաւոր** — Ըսէ, ճիշտ չէ՞:

**Վանահայր** — (Կը ցլնցի, կ'ողուի ու հայեացքը  
ձերմակաւորին յատած կը քարանա):

**Իօխանուհին** — Ի՞նչ եղաւ քեզի:

**ձերմակաւոր** — Ըսէ, որո՞ն է նւիրւած այն եկեղե-  
ցին, այն քու նոր շինած եկեղեցին:

**Վանահայր** — (Լուռ է):

**ձերմակաւոր** — Ըսէ. պէտք է որ ըսես, պէտք է խոս-  
տովանիս:

**Վանահայր** — (Խորտակած) Այո՛: Ճիշտ է: Այդ... այդ  
եկեղեցին նւիրւած է... հին աստուածներուն:

**ձերմակաւոր** — Ի՛մ աստուածներուս:

**Վանահայր** — Ի՛նչ աստուածներուդ:

**ձերմակաւոր** — (Վաներերոյ թանա):

**Վանահայրը** — Ճիշտ է: Ես ողորմելի ու մեծամիտ մարդ մըն եմ. գոցեր եմ աչքերս ու կը կարծեմ թէ կը թռչիմ, պարզեր եմ թեւերս գոռոզ վեր ու կարծեր եմ թէ հասա երկնքին:

**Իսխանուհին** — Մի խօսիր այդպէս: Մեր սրտերուն այդ կապը, մեր այդ ամբողջ սէրը եղեր է սուրբ, ջերմ ու ազնիւ, ինչպէս ջերմեռանդ աղօթքի մը մըմունջը, ինչպէս ընտիր կընտրուելին բոյրը, որ դէպի երկինք կը մխա:

**Վանահայրը** — (Աչքերը միշտ յստած դէպի ձերմակաւորին երեւցած կողմը) Ո՛հ, սէ: Ճշմարիտ է այս բոլորը, բայց դեռ մի յաղթանակեր. կանուխ է դեռ. դեռ կը տեսնուինք... (Ու արագ դուրս, առանց իշխանունիին կողմը նայելու):

**Իսխանուհին** — (Շւար ու վախով) Յովհաննէս. Յովհաննէս, հայր-սուրբ... (Թուլցած կիյնա իր աթոռին):



Երրորդ Արար

## Ա. ՏԵՍԱՐԱՆ

### ՎԱՆԱՅՕՐ ԽՈՒՑԸ

ձակասք քառակուսի ցած լուսամուտ մը՝ հասարակ  
սախտակէ փեղկով: Լուսամուտին մէկ կողմը քանի մը շարք  
դարակ՝ լիք ամեն մեծութեան ու ձեւի ձեռագիրներով  
ու մագաղաքներով: Գրադարանին ու լուսամուտին առ-  
ջերը փայտէ սեղան մը՝ վրան նորէն գրքեր ու այլ մանր  
իւրեր: Գուռը կողմնակի, գրասեղանին դէմը:

1

Բաց լուսամուտէն արեւի առաս պայծառ ոսկի  
շերտ մը ինկած է սենեակի յասակին ու սեղանին: Սե-  
ղանին առջերը լոյսի այդ ողողումին սակ նստած է Վա-  
նահայրը՝ երկու արմուկը սեղանին ու գլուխը քաղած  
ափերուն մէջ:

Քիչ մը ասեմ լուռ է: Կամաց կը բացւի դուռը ու  
կը մտնէ Վարպէսը աշխատանքի փոռոտ ու աղտոտ հա-  
գուսներով: Քայլ մը կ'ընէ դէպի սեղանը ու կը կեցնէ:

*Վարպէսը — Ինձի կանչեր էիք, վանահայր:*

*Վանահայրը — (Անշարժ է):*

*Վարպէսը — Հայր-սուրբ, կանչեր էիք ինձի:*

*Վանահայրը — (Ժամը կը բարձրացնէ գլուխը ու կը  
նայի դիմացինին) Հա՛: (Բիշ մը լուռ:) Դէ՛, ըսէ  
նայիմ՝ հիմա ի՞նչ պիտի ընենք:*

*Վարպէսը — Ի՞նչը, հայր-սուրբ:*

*Վանահայրը — Մենք հիմա ի՞նչ պիտի ընենք այդ շէնքը:*

Վարպեճ — Եկեղեցիքն:

Վանահայր — (Գլուխը կը շարժէ դրական):

Վարպեճ — Այսինքն ի՞նչպէս: Արդէն գիտես, հայր-սուրբ, որ մինչև Աստուածածնի տօնը աւարտած կ'ըլլա զմբէթը. մնացածը երկրորդական բաներ են:

Վանահայր — (Մտածկոտ) Մինչև... Աստուածածին:

Վարպեճ — Ի՞նչն է որ քեզի հոգ կը պատճառէ, վա-նահայր:

Վանահայր — Ուրեմն... մինչև Աստուածածին կ'ըլլա աւարտած: Հը՛մ. այդպէս հաստատ գիտե՛ս:

Վարպեճ — Ես իմ խօսքիս տէրն եմ, հայր-սուրբ:

Վանահայր — (Տաք ու կտրուկ) Ե՛ս ալ, ես ալ իմ խօսքիս տէրն եմ, վարպեճ:

Վարպեճ — Ուրեմն...

Վանահայր — Քանի՞ տարի է, որ դուն վարպեճ ես:

Վարպեճ — Ե՞ս. ի՞նչ գիտնամ. քսան մը կ'ըլլա:

Վանահայր — Ուրեմն քսան տարի է, որ կը շինես ու կը շինես. իսկ երբէք պատահէր է, որ շինելէդ ետքը քանդես:

Վարպեճ — Քանդեմ, իմ շինածս. ինչո՞ւ:

Վանահայր — Ինչո՞ւ այդպէս զարմացար: Չէ՞ որ շի-նելն է դժւարը, քանդելը դիւրին է միշտ:

Վարպեճ — Այո՛, ուրիշի շինածը: Իր շինածը քանդե-լը շատ դժւար է, հայր-սուրբ:

Վանահայր — (Հայեացքը լուսամուտէն դուրս նետած ու երազկոտ) Դժւար է, դժւար, իհարկէ. երբ մա-նականդ կապւած է հին յիշողութիւններու, յոյ-զերու, վշտերու, երբ կապւած է անցեալիդ, երի-տասարդ օրերուդ, չէ՞, վարպեճ: Դժւար է, իհար-կէ: (Լուռ ու ակնապիշ կը մնա քիչ մը՝ աչքերը լուսամուտէն դուրս. եւ յանկարծ գլուխը շրջե-լով՝ խիստ ու կտրուկ) Փակէ սա փեղկը:

Վարպեճ — Փակեմ, լուսամուտը:

Վանահայր — Այո՛, այո՛, լուսամուտը:

Վարպեճ — Բայց ի՞նչ ախորժելի արև է. ինչպէ՛ս ուրախ ու տաք:

Վանահայր — Ու փակես պիտի ձիշտ ատոր համար:

Վարպեճ — Բայց...

Վանահայր — Արե՛ւ... Մեզի անպատճառ պէտք է արև, ուրախ ու տաք արև: Մենք դեռ արևա-պաշտներ ենք. արե՛ւ...: Չենք կրնար ապրիլ առանց ախորժելի արևի, առանց ուրախ ու տաք արևի: Գոնէ լուսամուտ մը, գոնէ ձեղք մը, գոնէ դողունի ներս սպրդած ճառագայթ մը... (Յանկարծ բռունցքը զարնելով սեղանին) Ո՛չ: Գոցէ, կ'ըսեմ քեզի, ի՞նչ ես քարացեր:

Վարպեճ — (Վարանքով կ'երթա ու կը գոցէ փեղկը):

Սենեակը գրեթէ մութ է:

Վանահայր — Այդպէ՛ս: Պէտք է խցւի այդ անցքը, ուրկէ արևը կը նայի ներս, ուրկէ ցամաքը կը նայի ներս, ուրկէ աշխարհքը կը նայի ներս:

Վարպեճ — Բայց բնակարանդ դարձաւ խաւար ու մռայլ, ինչպէ՛ս դամբարան:

Վանահայր — Ըսէ՛ ինչպէ՛ս եկեղեցի:

Վարպեճ (Ուտերը կը ցրնցէ):

Վանահայր — Ինչո՞ւ կը վախնաս խաւարէն: Սաւա-րը խաւար է կարճատես աչքերուն: Բոլոր մեծ յղու-ցումները խաւարի ծոցն են գոյացեր, բոլոր մեծ խորութիւնները միայն խաւարի մէջ կարելի է տես-նել: Եւ այդ ձեր պաշտած լոյսը միթէ ծնունդը չէ՞ խաւարի. ծնունդ մը ու մահկանացու մը: Սաւարն է միայն, որ կա ու կը մնա անմահ ու յաւիտեան: (Ելած է ոտքի, կը խօսի մտածելով ու երթնե-կելով սենեակին լայնքովը):

Վանահայրը լուծ է ու մտայոյց կ'երբեւեկէ դեռ  
Վարպետին դէմը, որ կը մտնէ Արեղան ու կը կենա դուան  
ֆոյր լուռ ու խոնարհ:

Վարպետը — Վանահայրը նոր հրաման ունի ինծի տալու:  
Վանահայրը — Այո՛. միայն ոչ այս վայրկեանիս. նախ  
ուրիշ հաշիւ ունիմ մաքրելու: Գնա առայժմ: Ծնոր-  
հակալ եմ քեզմէ. Տէրը քեզի հետ: (Դառնալով  
Արեղային) Դձն ինչու ես եկեր, արեղա՛:

Արեղան — (Նախ կ'ըսնկատէ մինչեւ Վարպետի հեռա-  
նալը. վերջը գլուխը աւելի խոնարհելով) Քեզի  
խօսելիք ունիմ:

Վանահայրը — Ամեն մարդ ինք պիտի բանա իր ճամ-  
բան, արեղա՛:

Արեղան — Գիտեմ, գիտեմ, որ ալ փակ է ինծի համար  
քու հոգիիդ ճամբան: Կը հասկնամ, որ ասկէ ետքը  
ես քեզի համար անարդ ու անարժէք արարած  
մըն եմ, իսկ դուն ալ ինծի համար... (Կը լռէ):

Վանահայրը — Ըսէ, մի քաշուի:

Արեղան — Կ'ըսէի, եթէ գիտնայի: Ինքս ալ չգիտեմ.  
Կ'ըզգամ միայն, որ մենք իրարու անհաշտ թշնա-  
մի ենք:

Վանահայրը — Թշնամի...: Եւ հիմա ատիկա ըսելու  
համար է, որ եկեր ես ինծի:

Արեղան — Ո՛չ: Ես եկեր եմ քեզի ուրիշ բան մը  
յայտնելու:

Վանահայրը — Պօսէ:

Արեղան — Դուն ըսեր ես, որ հոս այս կղզին երբեմն  
ուրիշ աստուածներ են ապրեր:

Վանահայրը — (Իր ցնցումը զսպելով) Ե՞տքը:

Արեղան — Ըսեր ես՝ շատ-շատ տարիներ մեզմէ առաջ:

Վանահայրը — Ե՞տքը:

Արեղան — Ըսեր ես՝ հիմա մեռած են բոլորը:

Վանահայրը — (Լուռ է):

Արեղան — Մեռած, վաղուց մեռած:

Վանահայրը — (Լուռ է):

Արեղան — Ահա եկեր եմ քեզի ըսելու, որ սխալ ես,  
այդ աստուածները մեռած չեն:

Վանահայրը — (Անարեկ ու ապշած) Իսկ դո՛ւն... իսկ  
դո՛ւն ատիկա ուրիշ գիտես:

Արեղան — (Ծած ու խորհրդաւոր) Ես... ես տեսա:

Վանահայրը — Տեսար, դո՛ւն, իմ մէջս. ինչպէս տեսար:

Արեղան — Քու մէջդ. ինչպէս թէ՛ քու մէջդ: Ո՛չ.  
ես տեսա հո՛ն...

Վանահայրը — Ո՞ւր:

Արեղան — Հո՛ն, հին ճգնարաններուն շուրջը:

Վանահայրը — Ի՞նչ տեսար հոն, ճգնարաններուն շուրջը:

Արեղան — Տեսա այն միւս... հին աստուածներուն ա-  
րարածները:

Վանահայրը — Արարած...:

Արեղան — Կը սխալիս, վանահայր: Քեզի կ'ըսեմ՝  
հին աստուածները կ'ապրին. ու հին աստուածներուն  
հետն ալ իրենց հին կեանքը: Երբ մենք հոս, մեր  
մութ ու նեղ եկեղեցիներուն մէջ գետնատարած  
կ'ապաշխարենք, անոնք հոն կ'ապրին ազատ.  
կ'ապրին տաք ու պայծառ արևին տակ, կ'ապոյտ  
ծովուն վրա, ծփուն օդերուն մէջ, աւազուդ ափին.



կ'ապրին իրենց զւարթ ու եռուն կեանքը. լի, շարժուն ու յարափոփոխ: Մենք կ'աղօթենք, անոնք կ'ապրին: Այս ծովը, այս սարերը, այս կղզին, անոնցն է այս բոլորը, մերն է միայն այս խուցերը ու եկեղեցին:

**Վանահայր** — Ո՛հ: Մերը չէ նաև ո՛չ այս խուցերը իրենց կեղծաւոր լուսամուտներով, ո՛չ ալ եկեղեցին: Անոնցն է, բոլորն ալ անոնցն է:

**Արեղան** — (Նսիւս ապշած, ետքը վախով) Հայր, ատիկա ըսողը դ՞նն էս:

**Վանահայր** — Մեր Աստուածը հոս ոչինչ չունի, ոչինչ:

**Արեղան** — Հայր...

**Վանահայր** — Անոնցն է այս բոլորը: (Մօտենալով Արեղային ու ցած) Ու քանզի պիտի այս բոլորը, արեղան: Մինչև Աստուածածին հոս քար մը քարի վրա չի պիտի մնա ո՛չ այս խուցերէն, ո՛չ եկեղեցիէն:

**Արեղան** — Հայր, կը ծաղրե՞ս ինձի: Գէշ կատակ է ըրածդ:

**Վանահայր** — Ծաղր մըն է եղեր իմ ըսածներս մինչև այսօր ու գէշ կատակ մըն է եղեր ըրածներս մինչև հիմա: Բայց ասկէ ետքը ալ լուրջ է: Փոխւի պիտի այս կղզիին վրա ամեն բան: Ոչինչ, ոչինչ չի պիտի մնա հոս ո՛չ արդի շէնքերէն, ո՛չ արդի հողիներէն:

**Արեղան** — Իսկ հին աստուածները, հայր:

**Վանահայր** — Պնդէ գօտիդ, որդիս, կանչէ կամքդ ու դուրս վանէ մէջէդ բոլոր այդ հին աստուածները: Քանդէ, քանդէ. եթէ պէտք ըլլա, քանդէ ամբողջ հողդ: Քու հողիդ աղնիւ է, արժէ այդ աշխատանքը: (Դուրս):

## Բ. ՏԵՍԱՐԱՆ

### ՄԵՆԵԱՆԻ ՄԸ ԳԱԻԻԹԸ

Երկու կողմը երկու շարժ քարձ ու յաղթ սիւներ: ձակասը մեջտեղը լայն ու մեծ կամար մը, որ ծածկւած է վարագոյրով: Կամարին երկու կողմերը նոյնպէս սիւներ են, որոնց ետեւը քիչ մը սարածութիւն ու քարէ պաս: Կամարի մուր-վարդագոյն վարագոյրին վրա ոսկեակար ճանաճաւոր արեւ մը:

Վարագոյրին առջեւը տեսարանին խորքը դուրս է քարէ փոքրիկ բազին մը, որ կը մխա: Բազնի աջ ու ձախ կողմէն երկար քարէ սեղաններ քիչ մը ծուռ դիրքով ու քարէ նստարաններ. սեղանները մեջտեղի բազնին հետ միասին պայտի ձեւը կը կազմեն:

Սիւներուն առջեւը քարձ առանակներ ու առկախ ջահեր: Բազնը, սիւները եւ առանակներուն մեջքը բոլորն ալ գալարւած է ծաղիկներու ու կանաչի շղթայով:

1

Վառ է միայն երկու ջահ բազնին երկու կողմէն, խորքը. այնպէս որ ահագին քարձ շեմքը դողողջուն կեսմուրթի մը մէջ է:

**Սեղա** — (Չախ կողմի առջեւի սիւներուն ետեւէն ետեւ ներս կը մտնէ, միշտ նոյն հագուստով, թերւած քիչ մը դէպի առաջ ու երկու ձեռքովը սրբտանց կանչելով) Եկ՛ւր, եկ՛ւր...

**Արեղան** — (Երևնալով) Սեղան, Սեղան...

**Սեղա** — Եկ՛ւր:

**Ա.բեղան** — Տո՛ւր ինձի իմ հանգիստս, տո՛ւր ինձի իմ  
✓ աղօթքներս. տո՛ւր իմ վստահութիւնս ըրածիս՝  
կեանքիս, ուժիս: Ամեն, ամեն ինչ կը փլի շուրջս:

**Սեղա** — (Միշտ ետ-ետ դէպի աջ երթալով) Եկ՛հար,  
եկ՛հար:

**Ա.բեղան** — Այլ չկա ինձի հանգիստ ոչ խուցիս մենու-  
թեանը մէջ, ոչ դուրսը, ոչ ալ եկեղեցիին կամար-  
ներուն տակը: Սաղմոսներուն մէջէն քու ձայնդ կը  
✓ լսեմ, մութ կամարներուն տակէն քու աչքերդ ինձի  
կը ժպտին, խունկի հոտին մէջէն քու թաց մազե-  
րուդ բոյրը կը՛զգամ...: Ինչո՞ւ, ինչո՞ւ կը տանջես  
ինձի:

**Սեղա** — Եկ՛հար, եկ՛հար:

**Ա.բեղան** — Ե՛տ տուր ինձի իմ հպարտութիւնս, իմ մե-  
ծամիտ խորհրդածութիւններս. ետ տուր ինձի իմ  
հաւատքս, իմ Աստուծս. տո՛ւր, ետ տուր ինձի իմ  
Աստուծս...

**Սեղա** — Եկ՛հար... եկ՛հար... (Ու կը քաշի, կ'աներեւոյ-  
թանս աջ կողմի սիւներուն ետին):

2

**Ա.բեղան** — Գնաց նորէն: Նորէն մինակ... (Շէնքի մէջ-  
տեղն է. կը կենսա, զլուխը կը բարձրացնէ, կը  
Նայի չորս դին ու զարմանքով) Աս ո՞ւր եմ ես:  
Աս ո՞ւր բերաւ ինձի:

Դուրսէն կը լսի հեռաւոր աղմուկ ու ձայներ: Շտապ  
ներս կը մտնէ՝ ծերունի պատօտեա մը՝ ձեռքին լոյս ու  
արագ կը վառէ ջահերն ու մտերբ:

**Ա.բեղան** — (Յանկարծ մօտենալով) Ծերունի՛, ի՞նչ  
չէնք է սա. ո՞ւր եմ ես:

**Ծերունի** — Վնայ, վախցա, արևը վկայ: Ո՞վ ես դուն:

**Ա.բեղան** — Եկեղեցի՛ է, ի՞նչ բան է սա:

**Ծերունի** — Եկեղեցի՛. ի՞նչ յիմար լեզու կը խօսիս:  
✓ Զարդաձներու ու խաչաձներու տեղը չէ հոս,  
հանգիստ եղիր:

Դուրսի աղմուկը հետզհետէ կը մօտենա:

**Ա.բեղան** — Ի՞նչ ուրախ է հոս, ի՞նչ տօնական:

**Ծերունի** — Անշուշտ, կեանքը ուրախութեան համար  
է տւած մեղի:

**Ա.բեղան** — Եւ ատիկա ըսողը ալևոր ծերունի մըն է:

**Ծերունի** — Այո՛, ծերանալը ծանր բան է. բայց հոգիս  
ստոյգ է դեռ ու սիրտս երիտասարդ. դեռ կընամ  
վայլեր կեանքը և վայլեմ պիտի, արևս վկայ, քա-  
նի շունչ կա շրթունքիս: Իհարկէ՛, ըլլալ քեզի՛  
նման երիտասարդ, ա՛, մեծ բաղդ է: Ափսո՛ս որ  
ետ չեն դառնար այդ խենդ ու անզուսպ օրերը:  
Ըհը՛, եկան: (Մերթու դէպի աղմուկը):

**Ա.բեղան** — (Կը քաշի ետ-ետ ու կը ծածկի սիւներու  
ստերին ետեւը):

3

Չայս կողմի խորքի սիւներուն մեջէն ներս կը մտնեն  
Իօխանը իր գինքնկերներուն հետ՝ երեսուն հոգիի շափ.  
այդչափ մըն ալ մեհեհեհական աղջիկներ. այլ եւ խումբ  
մը զինակիր պատանիներ՝ ջահեր բռնած: Շէնքը կը ո-  
ղողի լոյսով: Այբերբ սաղաւարդ ունին, վահան, մեզ-  
քերուն սուր: Կանայք հագւած են քեքե ու սպիտակ,  
մազերուն մեջ իբրեւ զարդ խրած ունին ասոյ մը:

Ամենէն առաջ ներս կը մտնեն քանի մը ջահակիր  
ու խումբ մը աղջիկներ ուրախ ու ոգեւորւած: Նսքը Իօ-  
խանը քշապատած իր մեծերէն: Անոնց ետեւէն ալ զին-  
ւորականներն ու աղջիկները խառն, ուրախութեան բա-  
ցականչութիւններով. ջահակիրներ փութեն ու ետեւէն:

**Աղջիկներու առաջին խումբը** — (Սիւներէն ներս ոտք  
ննելուն պէս) Կեցցեն յաղթողները... Կեցցեն  
բաջերը...

**Քուր կանայք** — Կեցցեն, կեցցեն յաղթողները:

Ի յաւանք կ'երթա կանգ կ'առնէ բազմին առջեւ, բոլոր կը խոնին անոր ետեւ: Աջ կողմի խորքի սիւնե-  
րուն մեջէն դուրս կու գա բուրմ մը՝ ներմակներ հագած,  
ուրիշ երկու բուրմ աջէն ու ձախէն:

**Քուրմը** — (Գալով իշխանին ընդատաջ) Բարի գալուստ  
իշխանին: Բարի գալուստ մարտնչողներին:

**Ի յաւանք** — Եկեր ենք մեր զէնքերը զնելու Քաջն Վա-  
հագնի բագնին ոտքը ու իր սուրբ ծագումը եր-  
կրպագելու:

**Քուրմը** — Իր սուրբ, ծագումը ձեզի զօրավիգ, ձեր  
թւերը միշտ ամուր, ձեր սուրբը միշտ հատու,  
ձեր վահանը անխորտակ: Լոյս ու արե վահագնի  
օրհնութիւնը ձեզի հետ, դուք, որ յաղթողներն  
էք կեանքի կուին մէջ. ձերն ըլլա միշտ յաջո-  
ղութիւնն ու յաղթանակը:

**Ջօրականներ** — Յաջողութիւնը մեզի հետ. յաջողու-  
թիւնն ու յաղթանակը:

**Աղջիկներ** — Քաջն Վահագնի օրհնութիւնը ձեզի հետ:

**Քուրմը** — Դեռ բաւական ժամանակ կայ մինչև մեր  
լոյս Տիրոջ ծնունդը, իշխան: Նստեցէք ու հան-  
գատացէք: Նստեցէք Մեծն Վահագնի ու մեծն  
Աստղկան սեղանը: Նստեցէք ու վայելեցէք, դուք,  
որ կուողներն էք կեանքի մեծ կուին մէջ, կըռ-  
ւողներն ու յաղթողները, ձերն է յաղթութիւնը,  
ձերն է վայելքը:

**Ջօրականներ** — Մերն է յաղթութիւնը, մերն է վայելքը:

**Քուրմը** — Բացէք, աղջիկներ, Տիրոջ սեղանը, բացէք  
վահագնի ու Աստղկան սեղանը: Բերէ՛ք զինի անա-

պական և ուրախութիւն, բերէ՛ք ձեր գեղեցկու-  
թիւնն ու ձեր նազանքը. բերէ՛ք, մինչև ար-  
ժանանանք երկրպագելու լուսածին Վահագնին  
ու փրփրածին Աստղիկին: Բացէ՛ք, աղջիկներ,  
վայելքի սեղանը: (Իր երկու ընկերներուն հետ  
կ'ելնէ դուրս:)

4

Ի յաւանք ու իր գեղեցկները կը հանեն սաղաւարդ-  
նին ու վահանները, կու սան զինակիրներուն, որոնք  
կ'առնեն ու սիւներուն մեջէն կը սանին դուրս: Աղջիկ-  
ներուն մեկ մասը կը վագե ձախ սիւներէն դուրս, կը բե-  
րեն ծաղիկներ, առաջ շաղ կ'ուջան քարէ սեղանին, կը  
բերեն սեղանի բազմանիւղ աւսանակներ եւ գինիով լե-  
ցուն արծաթե աւազաններ. կը բերեն ոսկի ու արծաթ  
բասեր, բաժակներ եւ եղջիւրէ գալարուն բնականակներ:

Այդ պատահանութեան միջոցին է, որ կը խօսի:

**Երիտասարդ գօրական մը** — (Առաջ գալով) Բայց կուի-  
էր, տա՛ք կուի:

**Հասակաւոր մը** — Թող անպակաս ըլլա կեանքէն սուրբ  
կուիը:

**Երիտասարդը** — Սարսափելի ջարդ կերան:

**Ուրիշ մը** — (Կատակով) Կը մեղքնան. թող խնայէիր:

**Ի յաւանք** — Ատ ո՞վ է, որ խնայելու մասին կը խօսի:  
Երբէք, որդիներս. կեանքի կուին մէջ չխնայէք  
երբէք և ո՛չ-որի: Խնայելը թուութիւն է, մեղքը-  
նալը պարտութիւն: Չարկէք, ով ձեր զէնն է,  
ով ձեր ճամբան կը գոցէ: Ով որ քեզի կ'արգելէ՛  
քու թշնամիդ է:

**Երիտասարդը** — Չարկէք, յաղթողը մենք ենք:

**Ուրիշ մը** — Ի՛նչ լաւ է յաղթող ըլլալը:

**Երիտասարդը** — Յաղթող ըլլալ ու կուէն դառնալ:

**Իժխանը** — (Նրթալով սեղանին զլուխը) Դէ, հիմա եկէք նստինք Տիրոջ սեղանը. արդար հատուցում մեր դաժան կուէին:

Աղջիկ ու զօրական խառն կը նստին: Աղջիկներէն շատեր կը մնան ոտքի, կը մօտենան ու կը ծառայեն մեկուհի-միւսին. մեկ-երկուք կերբան կու գան: Զինակիրները կը շարւին իրենց տեղերուն ետեր ու կ'արձանան:

Բազմութեան կեսը նսած է արդէն, կեսը դեռ ոտքի, որ կը խօսի:

**Զօրական մը** — (Բաժակը վերցընելով) Կեցցէ կոխը:

**Նոզի աղջիկը** — Կեցցէ կուողը:

**Դէմի զօրականը** — Կեցցէ գեղեցկութիւնը:

**Ուրի՞ մը** — Կեցցէ սէրը:

**Աղջիկները** — Կոխը կեանքն է աշխարհի:

**Զօրականները** — Սէրը վայելքն է աշխարհի:

**Իժխանը** — (Ժիծաղելով) Կեցցէք, կեցցէք. մի շտապէք, էյ, դ՛ուք, կոխ, էյ, դ՛ուք, սէր: Մի բռնկիք այդպէս շուտ. նստեցէք հանդիստ, հպատակելիք հին կարգին: Թասերը պատրաստ, մեր մեծ Աստծուն ձօն եմ ձօնելու:

Աղջիկները գինի կը լեցընեն քասերը մեջտեղի գինիի աւազաններէն:

Խոր լուսիւն:

**Իժխանը** — (Վերցընելով գինիի մեծ եղջիւր մը՝ կերթա կը կենսա բազնին առջեւ, դէմքը դէպի վարագոյրը դարձուցած ու գինին բարձր պահած:) Քեզի, ով մեծդ Աստուած, Վահագն արի, դուն արեւը աշխարհի, դուն կեանքն ու աշխուժ, դուն կոխ և ուժ, դուն լոյս ու զտող, ազնիւրը զատող, փառքը ազատող, դուն որ յաղթեր

ես վարի, խաւարի, ամեն մուշի, այլ և երկընքին սև ամպ ու թուխպին, դեին, վիշապին աշխարհի ակին, քեզի, այգածին, ճառագայթածին, քեզի կը ձօնեմ այս վայելքի եղջիւրը՝ լիքը ազնիւ արբեցնող գինիով, դ՛ուն, որ ապրելու ու կուելու արբեցումը կու տաս մեզի: Տէր, ընդունէ մեր ձօնը: (Մէկ-երկու կաթիլ կը թափէ կրակին ուժեղ ու պայծաս բոց:)

**Ձայներ ամեն կողմէն** — Ընդունւած է... ընդունւած է... ընդունւած է...

**Իժխանը** — (Դառնալով իր տեղը) Յաղթողի ձօնը յաղթողի բագնին վրա միշտ է ընդունւած: Խմենք: Կեցցէ կեանքն ու իր կոխը:

**Բոլորը** — (Աղմուկով ու իրարանցումով, նստած, կեցած, թասերը իրարու բախելով) Կեցցէ կեանքն ու իր կոխը:

Կը խմեն ու կը նստին. լուսիւն:

5

**Ս.բեղան** — (Դողդոջուն քայլերով ստաջ կու գա, ամբողջով վարանքով, հայեացքը գետին, ձեռքը ստաջ մեկնած) Տէք թաս մըն ալ ինձի: Ես ալ կ'ուզեմ խմեմ:

Ընդհանուր զարմանք. ու խոր լուսիւն:

**Իժխանը** — Դ՛ուն հոս ի՞նչ գործ ունիս, սևագգեստ:

**Ս.բեղան** — Տ՛ուր թաս մըն ալ ինձի. ես ալ կ'ուզեմ խմեմ:

**Իժխանը** — Այս եղջիւրէն խմել ուզողը կուէն պէտք է որ գա:

**Ս.բեղան** — (Աղաչաւոր) Մէկ թաս մը միայն, իշխան. ի՞նչ մեծ բան է որ: Անգամ մը միայն, մէկ սևապ մը միայն քու այդ վայելքի եղջիւրէդ:

**Խօխանը** — (Արհամարհոտ) Տիրոջ սեղանին վրա, այն թշուառ, ոչինչ չի ստացւիր աղաչանքով, զնա մուրացիկներուն սեղանը:

**Ջօրական մը** — (Ժաղրով) է՛յ, բարեկամ, որ հովերն են քեզի այս կողմը նետեր:

**Երիտասարդ մը** — Գինիի հոտ է ինկեր ծոմ պահողին քիթը:

**Խօխանը** — Տարին տասը չափ ցորեն նւիրեր եմ ես իմ կալերէս ձեր անապատին. զնա նստէ ու կեր:

**Հասակաւոր մը** — (Ժաղրով) Ու աղօթէ քու աստուածներուդ մեր մեղքերուն համար:

**Հաս զօրական մը** — Մեղք... (փորը ընկած սաստիկ կը խնդա) Աղօթէ, աղօթէ մեր մեղքերուն համար... մեր անթիւ մեղքերուն...

### Ընդհանուր հռնոց

**Արեղան** — Իշխան. դուն ինձի չէս ճանչնար:

**Խօխանը** — Այսպէս ալ աներես մարդ: (Բարկացած) Պիտի հեռանամ, թէ չէ:

**Հասակաւորը** — Ես կը ճանչնամ քեզի, ես: Դուն այն ցած վախկոտը չէս, որ սուրդ նետեր ես գետին ու փախեր ես կեանքի կուէն:

**Երիտասարդ զօրական մը** — Դ՛հրս, հայդէ՛, ցած արարած:

**Ուրիշ մը** — Դ՛հրս, վախկոտ:

**Հասակաւորը** — Դուն այն մեծամիտ տխմարը չէս, որ կ'արհամարհես մեր վեհն Վահանգի նւիրած ամենէն վեհ նւերը՝ կեանքը. և քու թշուառ գլուխդ չես ուզեր խոնարհես անոր լոյս պատկերին առջևը:

**Բօլորը** — Կորսուէ, կորսուէ դ՛հրս:

**Մէկը** — Կորսուէ դ՛հրս այս սուրբ վայրէն:

**Երիտասարդ մը** — Աստուածուրաց:

**Հասակաւորը** — Դուն այն ամբարտաւանը չէս, որ երկրպագել չես ուզեր մեր փրփրածին Աստուծոհին, ո՛չ անոր նւերը եղող սիրուն, ո՛չ ալ կնոջ գեղեցկութեանն ու հմայքին:

**Աղջիկները** — Դ՛հրս այդ ամբարտաւանը:

**Աղջիկ մը** — Ապուշ...

**Հասակաւորը** — Դուն այն սրբապիղծը չէս, որ կ'արհամարհես մարմինը, Վահանգի ու Աստղկան այդ հրաշալի կերտածքը:

**Աղջիկ մը** — (Բովի տղան մատնանիշ) — Արհամարհել այս մարմինը. այս առողջ, այս ճկուն, այս ուժեղ մարմինը:

**Աղջիկները** — Սրբապիղծ...

**Երիտասարդ մը** — (Բովի աղջիկը մատնանիշ) Այս քնքուշ, այս գեղեցիկ, այս հոյակապ մարմինը:

**Երիտասարդները** — Սրբապիղծ...

**Արեղան** — (Ամեն յարձակման անելի ու անելի խորտակած, անելի ու անելի զուխը վար կը կախէ ու քայլ-քայլ կը քաշի ետ: Վերջին խօսքերուն մտած է արդէն իր նախորդ տեղը սիւներուն ետեւը ու ալ չերեւար:)

6

**Խօխանը** — Թողէք, թողէք կորչի: Ես ձօն ունիմ ձօնելու: Առէք թասերը:

Բոլորը կը լեցրեն:

**Խօխանը** — (Մղջիւրը առած կ'երթա նորէն բազնին առջևը ու գինին վեր բարձրացնելով) Քեզի, ո՛վ վիհդ դիցուէի, ո՛վ փրփրածինդ Աստղիկ, դուն որ անա-

բատ ես ու սքանչելի, քու ելած փրփուրիդ նման.  
դո՛ւն վերին գեղեցկութիւն, դո՛ւն գերազոյ՛ն հմայք  
ու քնքռութիւն, քու աւած լոյսիդ նման. դո՛ւն, որ  
աղբիւրն ես սիրու, յոյսերու ու յուզումներու, քե-  
զի օրօրոգ ալիքներուն նման քեզի, ծովածին, քեզի  
կը նւիրեմ այս վայելքի եղջիւրը՝ լիբը ազնիւ ու  
արբեցընող գինիով, դո՛ւն, որ գեղեցկութեան ու սի-  
րու վայելքը, հեշտանքը ու արբեցումը կու տաս  
մեզի: Ընդունէ, դիցունէի, իմ՝ ձօնս: (Մէկ-երկու  
կաթիլ կը թափէ կրակին. ուժեղ ու պայծաս բոց:)

**Ձայներ առեն կօզմէն** — Ընդունւած է... Ընդունւած է...  
Ընդունւած է...

**Իօխանը** — (Դառնալով իր տեղը) Յաղթողի ձօնը միշտ  
է Ընդունւած գեղեցկութեան բազմին վրա: Խմէ՛նք:  
Կեցցէ՛ գեղեցկութիւնն ու սէրը:

**Քոյրը** — (Աղմուկով, ծիծաղով, կատակներով, քմակա-  
նակները իրարու բախելով) Կեցցէ՛ գեղեցկու-  
թիւնն ու սէրը:

Կը խմեն ու կը նստին. լռութիւն:

7

**Ս.բեղան** — (Դուրս կ'ելնէ իր անկիւնէն եւ վճռական  
կը մօտենա Հաստ զինուորականին, ձեռքը կը դնէ  
անոր ուսին ու կտրուկ) Տեղ սուր ինձի:

Ընդհանուր զարմանք:

**Հաստ զօրականը** — Նորէն, ա՛յ մուրացկան:

**Ս.բեղան** (Աւելի կտրուկ ու խէթ) Ե՛ս ալ կ'ուզեմ նըս-  
տիմ այս սեղանին:

**Հաստ զօրականը** — Բեզի տեղ չկա այս սեղանին:

**Ս.բեղան** — (Գրգռած ու դողալով) Ե՛ս պէտք է նստիմ  
այս սեղանին:

**Հաստ զօրականը** — Տեղ չկա՛ ըսինք քեզի. սուր չունե-  
ցողին հոս տեղ չկա. ի՛նչ ես կպեր, ձիւն-ձանձ:

**Ս.բեղան** — (Յանկարծ կը փաթթի Հաստ զօրականի  
մարմնին, կը վերցընէ նստարանէն, կը զտորէ  
գետին:)

Նախ ընդհանուր անբարեհամ յուզում ու իւրաւան-  
ցում, որը սակայն յանկարծ տեղի կու տա բուռն ու միա-  
համուռ ծիծաղի մը:

**Ս.բեղան** — (Ժուշկը կը դնէ նստարանին ու բոռնցքը  
սեղանին զարնելով) Ե՛ս պէտք է նստիմ այս սե-  
ղանին:

**Հաստ զօրականը** — (Վեր կը թռչի կատողած, կը քաշէ  
սուրը ու կը վազէ Արեղային վրա) Անդին, ան-  
զգամ, չեմ ուզեր պղծեմ այս սուրբ մեհեանին  
գաւիթը քու պիղծ արիւնովդ:

**Ս.բեղան** — (Հաստատ ու ծանր քայլերով կը մօտենա  
անոր. Վայրկեան մը շեշտ կը դիտեն իրար մո-  
լեզին: Յանկարծ Արեղան բոլոր ուժովը կը զար-  
նէ դիմացինի թելին, որուն սուրը կ'իջնա վար:  
Արեղան իսկոյն կը խլէ ու նորէն ծունկը դնելով  
նստարանին) Ա՛հ, իշխան, և իմ սուրս:

Ընդհանուր ոգեւորութիւն, աղմուկ. հիացում:

**Աղջիկները** — (Իրարու) Ի՛նչ ուժ, ի՛նչ ուժ...

**Աղջիկ մը** — Ի՛նչ երկաթի ձեռք:

**Հաստ զօրականը** — Ո՛չ, իշխան, դուն տեսար բոնու-  
թիւնը, դուն բոլորը տեսար. իմի՛նս է այդ սուրը:

**Ձայներ** — Ո՛չ, ո՛չ. ալ ո՛չ:

**Երեսասարդ զօրական մը** — Գու մէջքդ դպաւ գետին:

**Իօխանը** — Սուրը անորն է, որուն ձեռքը որ է:

**Քոյրը** — Ապրի՛ մեր արգար իշխանը:

**Չայնե** — Այրի մեր նոր ընկերը:

**Մէկը** — (Մօտենալով պարտաւճի՛ն) Կը ներէս, բարեկամ, բայց կը տեսնես, որ քեզի այլ ես տեղ չկա հոս:

**Հաս զօրականը** — Աղէկ, ես կ'երթամ. բայց մենք դեռ կը պատահինք, սեւազգեստ. կամ սուրս կու տաս ինծի, կամ կեանքդ:

✓ **Աբեղան** — Կեանքս՝ դուցէ:

8

**Չայնե** — Գինի տէք յաղթողին:

**Երիտասարդ մը** — Վերցուր անոր թասը: Հիմա ան աղքուկինդ է:

**Աբեղան** — (Կրտսնէ Հաստ զօրականի ըմպանակը ու կը նետէ անոր ետեւէն) Ես չեմ ուզեր ուրիշին խմուկը:

**Աղջիկ մը** — (Թուր երկարելով) Ա՛ն, քնք, իմ թաս:

**Աղջիկները** — (Երկնցնելով իրենց թասերը) Ա՛ն, իմ թաս... ան իմ թաս... առ իմինս...

**Աբեղան** — Իշխան, քիչ մը առաջ ես քու հղջիւրդ խնդրեցի, այն հղջիւրը, որով ձօնդ ձօնեցիր:

**Իւթանը** — (Եղջիւրի մէջինը կը թափէ ու կու տա մօտի աղջկանը. լուրջ ու հանգիստ) Կեց՛ւր ու տուր իրեն:

**Աղջիկը** — (Կը կատարէ ու կու տա ընքշանքով. խորապէս սրտանց) Ա՛ն:

**Իւթանը** — Առաջին թասը, նորեկ, գիտցիր, միշտ վահազնինն է. այդպէս է աշխարհի հին օրէնքը:

**Աբեղան** — Առաջին թասը... ձեր այս կեանքի սեղանին առաջին թասը ես կը խմեմ... կեանքի ու աշխարհի օրէնքովը... ես կը խմեմ կուք կենացը. կուք, որ վերն է խաւարին ու ամպերուն մէջը, ինչպէս որ կ'ըսէք. կուք, որ դուրսն է, աշխար-

հի վրա, ուրկէ դուք կու գաք. կուք, որ հին է, ծովուն մէջ, փոթորկի առն, ուրկէ ես կու գամ:

**Աղջիկները** — (Մաստիկ հետաքրքիր, փսփսուքով իրարու) Ծովէն... ծովէն...

**Աբեղան** — Թող օրհնած ըլլա կեանքի կուքը: (Կը խմէ):

**Չայնե** — Անսէ, անսէ... Յաջողութեանը, յաղթանակը միշտ քեզի...  
✓

**Իւթանը** — Աղէկ: Կեց՛ւր երկրորդ թասը:

**Աղջիկները** — (Իրար անցած) Գինի, գինի:

**Աղջիկը** — (Նորէն կը լեցնէ ու կու տայ սրտանց) Ա՛ն:

**Իւթանը** — Երկրորդ թասը, նորեկ, գիտցիր, միշտ Աստղիկինն է. այսպէս է աշխարհի հին օրէնքը:

**Աբեղան** — Երկրորդ թասը... այո, Աստղիկինն է. ան, որ ինչպէս կ'ըսէք, ծնաւ գեղեցիկ յորդ վերիւրէն, դուրս ելաւ սիրարժարձ՝ յուզող ու եռացող ալիքներէն. ան, որ փոթորկի անդունդներուն մէջ կը գալարի ու կը յափշտակէ քեզի: Իշխան, այս թասը ես կը խմեմ քու աղջկանդ կենացը (Կը խմէ):

**Աղջիկները** — Սեղան... Սեղան...

**Իւթանը** — Աղջիկս...

**Թարը** — (Մաստիկ յուզած, վախով ու սպասողական դիրքով կը նային Իշխանին կողմը):

**Հաստակաւոր զօրական մը** — Իշխան, քու աղջիկդ...

**Իւթանը** — Կեցիր, այ տղա, կարծես քու դէմքդ ծանօթ է ինծի:

**Աբեղան** — (Թեթեւ հեղանակով) Հիմա, իհարկէ, իշխան, հիմա պէտք է որ ճանչնաս:

**Աղջիկները** — (Իրարու, փսփսուքով) Ո՞վ է. ո՞վ է, ո՞վ է որ:

**Քուրմը** — (Կերեւա վարագոյրին առջևը) Պատրաստ եղէք, յաղթողներ, ու թողէք սեղանը: Արեւելքը շիկներ է, ծովը ծիրան է հագեր, ու թարմ բնութիւնը թափ կու տա քունը աչքերէն Մեծ Աստուծուն երկրպագելու: Լուսատուն ու լուսաստղը գրկելու են հիմա իրար, պատրաստ եղէք դուք ալ երկրպագելու:

**Ամեցք** — (Իսկոյն վեր կը ցատկեն իրենց տեղերէն, զինակիրները շտապ կը բերեն սաղաւարդները ու վահանները իրենց տէրերուն, որոնք կը հագնին ու կ'երթան բազնին առջևը երկու զուգահեռ տողաշար կը կազմեն երեսները վարագոյրին, աջ՝ զօրականները, ձախ՝ աղջիկները):

**Իօխանք** — (Մօտենալով Արեղային) Տներ ինծի ձեռքդ ու երթանք երկրպագելու. երկրպագելու մեր վեհ աստուածներուն:

**Արեղան** — Երկրպագելու... Կոր աստուածներու:

**Իօխանք** — Հին աստուածներուն. միշտ հին ու միշտ Կոր ու միշտ յաւիտեան: Եկ՛ուր:

**Արեղան** — (Անշարժ ու յամատ կեցած է. աչքերը զետին):

**Իօխանք** — Եկ՛ուր, կ'ըսեմ քեզի. շուտ. դուն, որ խմեցիր կուրի կենացը, դուն, որ խմեցիր իմ Սեղայիս կենացը, պէտք է որ դաս: Տներ ձեռքդ ինծի (Կը բռնէ անոր թեւէն ու տեսակ մը կէս-քաշելով կը տանի ստաջ գոյգ տողաշարին մէջէն: Բազնին մէկ կողմը ինքը կ'անցնի, միւս կողմը կը մնա Արեղան):

Վարագոյրին ետեւն կը յախ շեփորի կանչը մեկ-երկու ելեւեջ, որուն կը յաջորդէ քուրմերու ուրախ ու յաղթական երգը: Երգի միջոցին կը բացւի կամաց-կամաց նակ-սի վարագոյրը եւ տեսարանի մնացած բոլոր մասերը հետզհետէ կը քայլին մութի մէջ:

Խորհի բեմը, որ աւելի ալ բարձր է, կը ներկայացնէ Սեւանի գագաթը իր աւերակով: Աջ՝ կեցած են քուրմերը, բոլորն ալ ներմակազգես, կուրծքերուն ոսկի արեւ մը. ձախ՝ կեցած են քուրմները, բոլորն ալ ներմակազգես, հերարձակ ու մազերուն մէջ խրած խոշոր ասոյ մը: Հեղ մը քուրմեր կ'երգեն, հեղ մը քուրմները, վերջը բոլորը միասին:

Նոր բեմի խորք հորիզոնն է, ծովուն ու երկինքի իրար կըպչող ծիրք: Երկինքը շառագոյն է, սեղ-սեղ դեղին, ծովը լերք կարմիր, սեղ-սեղ ծիրանի: Երգի միջոցին հետզհետէ կը հեւարի հսկա արեւի մը սկաւառակը, որ կը բարձրանա կամաց-կամաց: Երբ կեսին չափը դուրս է եկած ջուրէն՝ արեւը կը բացւի ոսրեթի մը պէս ու կափարիչը կ'իյնա ջուրին երեսը՝ արեւի ցոլին նման: Ոսրեթին մէջը վառ կը փայլի աչք խսիս սուղ արծաթ-մարգրիս փայլով մը: Եւ այդ վառ փայլին մէջ կեցած է յաղթական Վահագնը, մերկ, բարձր, շիտակ, յայր ու առողջ, աջ ձեռքը առաջ պարզած, մազերն ու մորուքը ասորական ձեւի եւ շեկ, աչքերը բոցոց: Անոր ձախ կողմը քեթեւ քեթ է ինկած նազանգով ծովային խոտերու ու ծաղիկներու վրա Ասոյիկը. սա քեթեւ մը փաթրած է Վահագնին ու գուրպ յենած անոր մարմնին. ինքը՝ մերկ, նկուն, նուրբ. մազերուն մէջ անագին աղամանդէ ասոյ մը ու մարմնին վրա մեկ-երկու քիչ ծովային նուրբ ու երկար սեգ:



Երգեցողութիւնը կը տեսնուի մինչեւ ոտքերի լինելու բացումը: Երբ երգը յանկարծ կը կտրուի, կը լսուի նորէն շեփոհին կանչը ու բոլոր բազմութիւնը խելոյն կը բափի գետին խորք երկրպագութեամբ: Քրիստոսն ու բնութիւնները կը խոնարհին մինչեւ մեջքը: Ոտքի կը մնա միայն Արեւդան՝ ուղիղ ու անշարժ:

**Քուրմը** — (Մուսկիւն մէջէն, ահեղ) Երկրպագէ, դուն, շարժ:

**Արեւան** — (Անշարժ է):

**Իսխանը** — (Սարսափահար ու կիսածայն) Երկրպագէ, անմիտ:

**Արեւան** — (Անշարժ է):

**Սեղա** — (Կ'երեւա յանկարծ բարձր բեմի սանդուղներուն վրա, հանգիստ առաջ կու գա, կը կենսա ուղիղ Արեւային դէմը՝ քնքուշ ու հրամայական) Երկրպագէ. երկրպագէ ծովուն ու իր աստծուն:

**Արեւան** — (Նախ գլուխը կը թեքէ, ետքը ծունկերը քիչ-քիչ կ'ծալին ու յանկարծ կիյնա գետին):  
Մասնիկ դրդիւն մը. եւ մեկ անգամէն կը կորչի ամեն բան. կը տեսնուի խորին մութ ու լուսութիւն:

11

Երբ բանձր մութը կ'ըսկսի փարատիլ՝ տեսարանը փոխուած է: Հետզհետէ բացուող աղօտ լոյսին մեջէն կը նշմարուի հաս ու ցած սիւներու զոյգ շարք մը տեսարանին նիւտ մեջտեղը: Եկեղեցի է, խորքը կ'երեւա միայն երկու վառ մտ, որուն առջեւ երկու վանական սաղմոս կը կարդան փոխնիփոխը: Անոնց ետեւ կ'իստաւորանով կեցած են վանականները երեսնին դէպի խորանը:

Մաայլ ու մութ. ընթերցումը տալու ու միայլար:

Լուսիկ աղօթող վանականներու շարքին մեջ յանկարծ խորհու մը կ'իյնա:

**Վանական մը** — (Միւսներուն կոնակէն ծոնելով դէպի նա, փախուցով) Զուր, ջուր, երեսին ջուր:

Չախ կողմի խորքի սիւներուն մեջէն կ'երեւան երկու վանական, որոնք Արեւայի քեւերը մտած ու բարձրացուցած կը բերեն առաջ: Արեւան թոյլ ու անզգա: Մովսէս վանականը կու գա անոնց ետեւէն՝ օգնելով:

**Աղաւ վանական** — (Արագ դուրս կելնէ աջ կողմի սիւներուն մէջէն, կը մօտենա Մովսէսին, երբ Արեւան արդէն անցուցած են, եւ կիսածայն) Ի՞նչ է, ի՞նչ կա, ի՞նչ եղաւ:

**Մովսէս վանական** — (Միշտ կիսածայն) Արեւան մաքրեցաւ: Կեցեր էր առջեւ, կ'աղօթէր, մէյ մըն ալ տեսա՛ գլուխը կախեց, քիչ մը ծոնցաւ ու բոլոր ուժովը ինկաւ գետին:

**Աղաւ վանական** — Խեղճ արեւա. երեւի գիշերը շատ է ճգներ: Տարէք աղբիւրը, տարէք աղբիւրը: (Եւ ինքը կը դառնայ ետ իր նախորդ տեղը):

**Մովսէս վանական** — (Կ'շտապէ գացողներուն ետեւէն):

Ու նորէն ամեն ինչ հանդարտ է, ու նորէն որոշ կը լսուի սաղմոսասացներուն միայլար, բախճոս ու ձանձրացած ձայնը:

**Առաջին սաղմոսասաց** «Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան Գո:»


**Երկրորդ սաղմոսասաց** — «Ո՛չ է խաղաղութիւն ոսկեբաց իմոց յերեսաց մեղաց իմոց:»

**Առաջին սաղմոսասաց** — «Անօրէնութիւնք իմ բար-

ձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանրացան ի վերայ իմ:»

Երկրորդ սաղմոսասաց — «Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ:»

Սաղմոսի միջոցին կամաց-կամաց, շա՛հ հանգիստ, սեսարանը կը գոցւի, այնպէս որ վերջին քանի մը բառը կը լսւի դեռ գոցւելէն ալ ետքը:



## Գ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

### ԻՇԽԱՆՈՒՅԻՒՆ ԱՌԱՆՁՆԱՍԵՆԵԱԿԸ

Փոքրիկ, կոկիկ, ցած առաստաղով սենեակ մը ամբողջովին գորգերու մէջ: Ճակասք բազմոց, մօտիկը ցածիկ արոտակ մը: Անկիւնը ներակ ֆօնի վրա սեւ սիրուն խաչելութիւն մը ներակ նեղ սեղանին. երկու կողմը երկու ամանի մէջ վարդի քարմ փունջեր: Առաստաղէն կախւած է արաբական գունաւոր լապսեր մը:

Մուտքը աջէն ու ձախէն:

1

Իշխանուհին կեցած է բազմոցին առջեւը ձիգ ու անւարժ: Քիչ մը հեռուն, անոր դէմը, դուռնի մօտիկ կեցած է Վանահայրը: Երկուէն ալ հայեացքնին նեցած են գետին:

**Վանահայրը** (Հանգիստ ու պաշտօնակամ)... Ա՛ն է կապեր մեզի իրար, ան ծնունդն է մեր երկուքի, անիկա մեր կապն է. իսկ մեր մէջը չի պիտի ըլլա ոչ մէկ կապ, մեր մէջէն պէտք է խզւի ամէն կապ:

**Իշխանուհին** — (Գլուխը բարձրացնելով ու Նոյնպէս հանգիստ) Վարդապետ, այդ եկեղեցին ոչ-ոք արեւը չի կրնար. ոչ դուն, ոչ ես, և ոչ-մէկը. անոր հիմը մեր սրտերուն մէջն է դրւած:

**Վանահայրը** — (Խիստ) Անոր հիմը, իշխանուհի, մեղքի վրա է դրւած:

**Իշխանուհին** — Ինչպէ՞ս թէ՛ մեղքի:

**Վանահայրը** — Այո՛, մեղքի:

**Իօխանուհի** — (Հպարտ) Մեղքը միշտ օտար է եղբր  
ինձի և միշտ ալ օտար պիտի մնա ինձի:

**Վանահայր** — Կին, նորէն կ'ուզես խաբես:

**Իօխանուհի** — (Ապշած) Խաբեմ:

**Վանահայր** — Այո, խաբես ու կեղծես:

**Իօխանուհի** — Ես:

**Վանահայր** — Դուն, դուն: Ինչ կը զարմանաս. դուն,  
որ ամբողջ կեանքդ խաբեր ես ու շարունակ կեղ-  
ծեր: Խաբեր ես տարիներ ու տարիներ այն մարդը,  
որ իբրև իր կինը իր տունն է տարեր քեզի. խաբեր  
ես քու զաւակներդ, որոնք շոյանքի կարօտով գիրկդ  
են վազեր. խաբեր ու խաբխաբեր, կապեր ես բո-  
լոր շրջապատողներուդ աչքերը. խաբեր ես և ինձի,  
թէև, այո, առանց խոստում մը տալու, առանց բառ  
մը արտասանելու. խաբեր ես և քեզի, քեզի քու  
աչքիդ նահատակ ես նկարեր, դուն, որ մարդդ մի-  
տեր է թէ չէ, վազեր եկեր ես հոս՝ ինձի հետ նոր  
շէնք շինելու, քու կեղծիքիդ աստծուն նոր տաճար  
կառուցանելու. (Բիշ մը լուռ):

**Իօխանուհի** — (Կեցած է ձիգ ու հպարտ, ունքերը  
կիտած. ոչ շարժում, ոչ ծպտում):

**Վանահայր** — Իհարկէ, չէ որ՝ քու աստեածդ սէրն  
է: Ո՛վ սոփեստութիւն: Ի՞նչ է նէրը. ինչի՞ սէր է  
աստեած, արուի՞ ու էգի: Կին, մեղանչանք է քու  
անունդ, կեղծիք է քու հոգիդ ու զգայարանքներդ  
քու աշխարհդ: Մեղքի վրա է շինւած այդ եկեղեցին:

**Իօխանուհի** — Ըսի՞ր:

**Վանահայր** — Ըսի, ինչ որ պարտական էի ըսելու:

**Իօխանուհի** — Դէ, բաց է դուռը:

**Վանահայր** — (Վերադարձ) Իշխանուհի:

**Իօխանուհի** — Ի՞նչ է: Գնա, դնա քանդէ:

**Վանահայր** — Ատիկա իմ պարտքս է և ես գիտեմ.  
բայց պէտք է որ դուն ալ կատարես քու պարտքդ:

**Իօխանուհի** — Այսինքն: Ի՞նչ է ուզածդ:

**Վանահայր** — Պէտք է անմիջապէս հեռանաս հոսկէ՝  
Ցամաքաբերդէն:

**Իօխանուհի** — Հեռանամ... այդպէս կը հրամայես:

**Վանահայր** — Ըսի, ինչ որ պարտական էի ըսելու:

**Իօխանուհի** — Կը հրամայես... (Յանկարծ ու բռուն  
բարկութեամբ) Եւ ո՞վ ես դուն, ի՞նչ գործ ունիս  
հոս, հոս, իմ դէմս. ո՞վ ես դուն:

**Վանահայր** — Ես... ես վանական մըն եմ, իշխանուհի,  
քաշւած անապատը:

**Իօխանուհի** — Անապատ մըն ես դուն ինքդ և օտար,  
օտար հոգիիս, ինչպէս ամենքը: Ամբողջ կեանք մը  
ապրեր եմ ես՝ օտարներուն մէջ, օտար եմ եղբր ես  
ինքս ըլլորին, օտար ու միտակ. միտակ պալատներու  
ամբոխին մէջ, միտակ միտակ իմ իսկ պալատիս, իմ  
սեփական ընտանիքիս մէջը, միտակ, միշտ: Եւ  
հոգիիս միտակ լուսաւոր աստղը եղբր է ան, որ հե-  
ռու, հեռու կա ուրիշ հոգի մը, իմինիս պէս միտակ,  
իմինիս պէս լքւած, իմինիս պէս կարօտ, հղբայր  
հոգի մը, որ կը հասկնա ինձի ու իմ կրած ծանր  
խաչս, որ մօտիկ է ինձի ու կը սիրէ ինձի. (Լուռ):

**Վանահայր** — (Կեցած է անշարժ ու լարւած բռունց-  
քները սեղմած՝ տեսակ մը կուր պատրաստ  
դիրքով):

**Իօխանուհի** — Այդ սարսափելի, այդ յաւիտենական,  
այդ խելագարացնող մենութեան ձեռքէն փախած,  
եկեր պապաստաներ եմ հոս, վերջապէս միտսին ըլ-  
լալու, միտսին ըլլալու հոգիի մը հետ, միտսին պա-  
րելու, միտսին ստեղծելու շէնք մը, այն միտակ հոգի-

ին հետ, որ ինծի կը հասկընա, որ հեռուէն ինծի հետ է եղեր ամբողջ կեանքս: Եւ անա թէ ինչպէս կը հասկնա ինծի այդ միակ հոգին: Ես կ'իմ, ես մեղք, ես էգ ու խաբերա: (Չալրացած) Գնա, հեռացիր:

**Վանահայր** — Աւարտէ ու կ'երթամ:

**Իւստանուհին** — Ոչինչ չ'ունիմ քեզի հետ աւարտելու: Ապրեր եմ միշտ մինակ ու օտար, մինակ ու օտար ալ կ'իջնեմ գերեզման: Անմտութիւն է ճակատագրին դէմ կուելլը: Գնա, գնա քանդէ, փոռ տուր այն քարերը. իմ տաճարս արդէն փուլ եկաւ:

**Վանահայր** — (Մոտոմ) Ներէ, իշխանուհի, եթէ աւելորդ խօսք ըսի: Ես աւելի ինծի կը խօսէի, քան քեզի: Ես ուզեցի որ ճշմարտութիւնը մերկ կանգնի մեր առջև, ես ուզեցի բանամ մեր երկուքիս ալ աչքերը:

**Իւստանուհին** — Եւ բացիր, շնորհակալ եմ:

**Վանահայր** — Կը ցաւիմ, եթէ բաց աչքով տեսածդ ան չէ, ինչ որ կ'ուզէիր: Աշխարհիս երեսին եթէ տեսնել կ'ուզես, ինչ որ սրտիդ ուզածն է, պէտք է նայիս փակ աչքերով:

**Իւստանուհին** — Ճշմարիտ է:

**Վանահայր** — Այդ ճշմարտութիւնը ես քեզմէ սորվեցա... ասկէ ուղիղ քսանըհինգ տարի առաջ: Ներէ, իշխանուհի: Եւ կարծեմ մեր մէջ ալ մաքրւած է ամեն հաշիւ:

**Իւստանուհին** — Իմ բոլոր հաշիւներս ալ մաքրւած են կեանքի մէջ:

**Վանահայր** — Մաքրէ վերին հաշիւներդ: Մնաս-բարև, իշխանուհի:

Իւստանուհին կեցած է լուռ ու անբարձ, մինչեւ Վանահայր հանդարտ ու զլխահակ կեցնէ դուրս: Իւստանուհին կամաց ու սեսակ մը ակամա կը սահի վար ու խորհակած կը նստի բազմոցին, ձեռքերը անուծ մէկը բազմոցին վրա նետած, միւսը գոգը. անկեանք հայեացքը կէտի մը յառած:

**Պառաւր** — (Մտնելով հակառակ դռնէն) Մինակ ես:  
**Իւստանուհին** — (Տխուր զլուխը ճօճելով) Մինակ, մինակ...

**Պառաւր** — Գնաց:

**Իւստանուհին** — Ո՞վ:

**Պառաւր** — Վանահայրը:

**Իւստանուհին** — Չգիտեմ:

**Պառաւր** — Ի՞նչ ըսաւ որ:

**Իւստանուհին** — Ո՞վ:

**Պառաւր** — Վանահայրը:

**Իւստանուհին** — Չգիտեմ: (Բիչ մը լրտ) Բեր ինծի այն...

**Պառաւր** — Ի՞նչը, իշխանուհի:

**Իւստանուհին** — Յատակագիծը:

**Պառաւր** — Եկեղեցի՞ն:

**Իւստանուհին** — (Տխուր գլխով կ'ընէ):

**Պառաւր** — (Պուրս կ'ելնէ իր եկած դռնովը եւ իսկոյն ալ կը վերադառնա կու տա ոլորը) Ա՛ռ: (Ինքը կը քաշի դէպի խաչելութիւնը)

**Իւստանուհին** — (Կը բանա յատակագիծը, կը նայի թիչ մը, կը բարձրացընէ, կը համբուրէ եւ հանգիստ ու կանոնաւոր շարժումներով կը սկսի պատ-

նել՝ զսպելով հեկեկանքը, մինչդեռ կուրծքը ուժ-  
զին կ'ելեւէջէ. եւ արցունքները ստատ կը թա-  
փին, ստանց ծպտուն մը հանելու։)

**Պառաւր** — (Ետ նայելով՝ սալշած) Աս ի՞նչ կ'ընէ  
իշխանուհին։

**Իօխանուհին** — (Չայնը դողդոջուն) Չէս տեսներ, Կը  
պատահի։

**Պառաւր** — Կը պատահի. ինչո՞ւ։

**Իօխանուհին** — Ալ... ալ վերջացաւ։

**Պառաւր** — (Ուրախ) Վերջացաւ. աւարտեցաւ եկեղեցին։

**Իօխանուհին** — Այո, աւարտեցաւ։

**Պառաւր** — Ի՞նչ կ'ըսես։ Դէ, աչքը լոյս իշխանուհիիս.  
ալ ի՞նչո՞ւ ես վշտացեր։

**Իօխանուհին** — Վշտացեր, ո՞վ. էս. ամենեւին. Չէս  
տեսներ, պառաւ, ինչպէս ուրախ եմ, ինչպէս բազ-  
դաւոր։ Չէս տեսներ՝ կու լամ։

**Պառաւր** — (Յուզած ու երկիւղած) Այո, իշխանու-  
հին կու լա... (Առջեւը չոքելով) Կու լս՝ Տիրու-  
հին։ Ես քու լացդ դեռ չէի տեսեր, այնքան վըշ-  
տեր, այնքան ցաւեր էիր տեսեր։ Եւ ի՞նչ տար-  
բինակ լաց է եղեր ուրախութեան լացը։



Չ ո ռ ը ը ղ ղ Ա ը ա ը

✓  
Ա. ՏԵՍԱՐԱՆ

Ա. ԲԵՂԱՅԻ ԽՈՒՅՐԸ ԳԻՇԵՐ. ՃՐԱԳ

1

Աբեղան պառկած է անկողնին. սնարին կողմը նրա-  
սած է Կոյր վանականը արձանի նման շիսակ: Ոսփին  
կողմը՝ անկողնի եզերփին նստած է Սիմոն վանականը, որ  
անընդհատ համբիշ կը արշե, շուս-շուս յորանջելով:

**Երեսասարդ վանական մը** — (Կեցած է սեղանին մօտիկ,  
կը խաղա ճրագին հետ ու կը խօսի ծանր-ծանր,  
խորհրդածելով) Եւ ինչքան, ինչքաներն են սա-  
կայն այդպէս անմիտ: Ա՛յ, ամբողջ այդ դուրսին-  
ները: Դժբաղղներ: Փճոք քեզի, Աստուծ, որ լու-  
սաւորեր ես մեր միտքը:

**Սիմոն վանականը** — (Յօրանջելով) Փճոք քեզի, Աստուծ:

**Երեսասարդ վանականը** — Մէյ մը ատոնց հարցնող ըլ-  
լա՛ որ մարդ, ինչ ես գտեր այդ ձախողութիւն-  
ներու, այդ տաժանակիր աշխատանքի, այդ կարօ-  
տութիւններու, այդ կուրի ու դառնութեան հովտին  
մէջ, որուն աշխարհք անունը կու տան: Այդպէս  
ալ յիմար հաշիւ: Քանի մը խղճուկ վայելքներու,  
քանի մը չնչին հաճոյքներու համար մարդ առնէ  
ու զոճէ իր հանդերձեալ կեանքի յաւիտենական  
երանութիւնը:

**Աբեղան** — (Պառկած տեղէն ստանց դիրքը փոխելու՝  
հատիկ-հատիկ) Հայր-սուրբ, տեսնը ես դուն եր-  
բէք արևի ծագումը:

**Երեսասարդ վանականը** — Ի՞նչ:

**Աբեղան** — Եղեր ես դուն երբէք արևին տաճարը:

Երկու վանականներ ապսած կը նային իրարու:

**Երիսասարդ վաճակաճեր** — (Կը մօտենա անկողնին ու ձեռքը հիւանդի ճակտին դնելով) Սաճն է: Արթճն էս, արեղս:

**Արեղս** — Ես արթճն էմ: Ես արթնցա, երբ արեղ ձագեցաւ: Իսկ դճւք, դճւք...

**Երիսասարդ վաճակաճեր** — Մենք կը խօսինք, արեղս:

**Արեղս** — Կը լսեմ՝ կը խօսիս: Գնս, դիտէ արեղին ձագումը:

**Միմօճ վաճակաճեր** — (Ձեռքով նշան կ'ընէ, որ հիւանդը հանգիստ թողնէ ու պատասխան չի տայ. եւ ինքը ոտքի ելնելով) Իրաւ կ'ըսէ, հայր սուրբ, սու է արդէն, երթանք, որ ան ալ հանգստանա: Գիշեր բարի, արեղս: Այս գիշեր քեզի խոր քուն, վաղը ամեն բան անցած կ'ըլլա: (Դէպի դուռը):

**Երիսասարդ վաճակաճեր** — Առողջութիւն քեզի, արեղս: (Դէպի դուռը):

**Արեղս** — (Առանց դիրքը փոխելու, հատիկ-հատիկ) Քեզի կ'ըսեմ՝ տեսեր ես դուն երբէք արեղին ձագումը:

2

**Կոյր վաճակաճեր** — (Ականջ կը դնէ, որ անոնք հեռանան. վերջը քիչ մը ասելի ծոելով դէպի անկողինը, խորհրդաւոր ու կիսամայն) Ես... ես տեսեր էմ այդ արեղին ձագումը:

**Արեղս** — (Աշխոյժ վեր կը թռչի խկոյն ու կիսովին կը նստի յենելով թեին. մատը կոյրին ուղղած) Իճն... դճն... դուն տեսեր ես: Իճն, կ'այր...

**Կոյր վաճակաճեր** — (Ծանր գլխով կ'ընէ):

**Արեղս** — (Ցած ձայնով ու ձիգ տալով) Եւ երկրպագեր ես:

**Կոյր վաճակաճեր** (Ծանր գլխով կ'ընէ):

**Արեղս** — Իճն, դուն տեսեր ես արեղին տաճարը, քու այդ աչքերովդ:

**Կոյր վաճակաճեր** — Այն, տեսեր էմ այս աչքերովս, ու հաներ էմ այդ աչքերը, որ ալ չտեսնեմ:

**Արեղս** — (Սարսափած) Հաներ ես աչքերդ:

**Կոյր վաճակաճեր** — (Կարդալու շեշտով) Այն անդամը, որ քեզի կը գայթակղեցնէ, կտրէ ու դուրս նետէ քեզմէ. այսպէս է գրեած:

**Արեղս** — Եւ դուն հաներ ես աչքերդ:

**Կոյր վաճակաճեր** — Այն:

**Արեղս** — Հաներ ես, քու աչքերդ, քու այդ ձեռքերովդ:

**Կոյր վաճակաճեր** — Ոչ, սչ ձեռքովս. հաներ էմ կամքիս ուժովը:

**Արեղս** — Կամքիդ:

**Կոյր վաճակաճեր** — Դիմէ հաւատքիդ, ու սարբեր կ'եղնեն իրենց տեղէն. աչքն ինչ է, որ իր տեղը մնա:

**Արեղս** — (Քիչ մը մտածելէն ետքը տարակոյսով) Եւ դուն կ'ըսես թէ՛ երկրպագեր ես արեղին:

**Կոյր վաճակաճեր** — Այն, մեղանչեր էմ, արեղս: Եւ ճիշտ ատոր համար է, որ կը հասկընամ քեզի, կը տեսնեմ քու հողիդ ու կ'ըսեմ քեզի՝ «զգուշ, դեւն է, որ արթնցեր է մէջդ, մէջիդ սեւ դեւը:»

**Արեղս** — Ա՛տ է քու հասկըցածդ: Ինձի քաշողը ինքը լոյսն է ու դեղեցկութիւնը. ինձի քաշողը ասուածներն են:

**Կոյր վաճակաճեր** — Բոլոր դեւերն ալ երբեմն ասուած են եղած, արեղս: Ընկճեած ասուածներն են ատոնք. պէտք է որ ընկճես:

3

**Վաճակաճեր** — (Կը մտնէ տխուր ու կրքած) Ողջոյն ձեզի:

**Կոյր վաճակաճեր** (Կ'եղնէ ոտքի):

**Վաճահայր** — (Մօտենայով անկողնին) Ի՞նչպէս ես:  
Նոր եկա ցամաքէն. ըսին՝ ինծի կանչեր ես:

**Արեղան** — Այո, կ'ըզգամ ծովուն թարմութիւնը, որ  
հագուստներէդ կը բուրէ:

**Վաճահայր** — Նոր ելա լաստէն:

**Արեղան** — (Հիացումով) Լաստէն... լաստէն...

**Վաճահայր** — (Մոտոտաճ) Ինչո՞ւ ես կանչեր ինծի:

**Արեղան** — (Քիչ մը լուռ) Հայր, ես երկրպագեցի հին  
աստուածներուն:

**Վաճահայր** — (Դաժան ու խիստ) Շատ բնական է:

**Արեղան** — Ի՞նչ...

**Վաճահայր** — Անշուշտ, անշուշտ. կ'ըսպասէի: Չէ՞  
որ քեզի խոստացաւ իր տակի ձին, իր ձեռքի սուրբ  
ու իր սեփական աղջիկը. գուցէ և օր մըն ալ, ո՞վ  
գիտէ, իր իշխանական ցուպը:

**Արեղան** — (Սաստիկ վիրաւորած) Հայր...

**Վաճահայր** — Անշուշտ, շատ բնական է: Այդ բոլորի  
համար արժէ աստուած մը ուրանալ: (Ծանկարծ  
ու բարկութեամբ) Բայց ինծի՞, ինծի՞ ինչու ես  
կանչեր հոս:

**Արեղան** — (Ծանդիմանօրէն) Հապա ո՞վ կանչէի, վա-  
նահայր...

**Վաճահայր** — Մխալներ ես: Կանչէ՛ Հայր Անտոնը:

**Արեղան** — Վանահայր...

**Վաճահայր** — Հայր Անտոնին լաստը միայն կը հանէ  
քեզի հոն, ուր քո սիրտդ է:

**Արեղան** — Կը վունտես ինծի դձուրս:

**Վաճահայր** — Ես կը զրկեմ քեզի քու տենչացած աշ-  
խարհը:

**Արեղան** — (Դառն ու հանգիստ) Կը զրկես ինծի իմ աշ-  
խարհը...: Իսկ ո՞վ իրաւունք տւաւ քեզի՞ ուղած

ժամանակդ դուրս քաշես ինծի աշխարհէն, ուղած  
ժամանակդ ես նետես աշխարհ: Ո՞վ քեզի իրաւունք  
տւաւ, որ կապես հողիս, կապկպես զգացումներս:  
Ո՞վ քեզի իրաւունք տւաւ, որ հիմա կ'եր ես երե-  
սիս յանդիմանութիւն կը կարգաս:

**Վաճահայր** — (Կտորւած) Իրաւ ես: Ես. ուզեր եմ  
անկարելին: Ես ուզեր եմ ազատեմ քեզի այն եր-  
կար զայլարուն ճամբէն, որու դառնութիւններուն  
ու տառապանքներուն մէջէն միայն կը հասնին  
մարդիկ այս սուրբ մենարանը: Ես ուզեր եմ ան-  
կարելին: Հանէ՛ քուրձերդ ու գնա:

**Արեղան** — Երթամ. ինչո՞ւ. և ո՞ր:

**Վաճահայր** — Աշխարհ:

**Արեղան** — Աշխարհ... (Անխօս գլուխը կը շարժէ. եւ  
սուլալ չարախնդաց). Ո՞չ, վանահայր, հոս է իմ  
աշխարհս. աշխարհքը, սոյ, այս կողին է, ես հոս  
ճանչցա հին աստուածները, հոս ալ պիտի երկրպագեմ:

**Վաճահայր** — (Մախ զարմանքով կը դիտէ, վերջը  
ծանր ու վճռական) Ո՞չ, այդ մէկը չեմ թողներ,  
արեղա՛:

**Արեղան** — Կը թողնես. դուն ես այդպէս կամեցեր:  
Ես ուրիշ աշխարհ չեմ տեսած, ես հոս եմ շիներ  
իմ աշխարհս:

**Վաճահայր** — (Կտրուկ) Լսէ: Հոս մենարան է ու սրբ-  
բավայր, ուր այլ ես աշխարհիկ հիւր մըն ես գուն, պատահական  
ուխտաւոր մը: Իսկ ուխտաւորնե-  
րուն իրաւունքը, գիտես, երեք օր է միայն: (Դէ-  
պի դուրս):

**Կայր վաճակաճը** — (Շտեմէն) Վանահայր, շատ ես խիստ:

**Վաճահայր** — (Վիսովին Նայելով) Ո՞չ, հայր-սուրբ,  
հիւանդ էր ու զիջող եղաւ: Չի լսեցի՞ր, ամբողջ ե-



րեք օր տւի իրեն: Բայց երեք օրը չի լրացած պէտք է որ Հայր Անտոնին լաստը ցամաքը հանէ ատիկա: (Դուրս):

4

**Արեղան** — Լսատը... լսատը:

**Կոյր վանականը** — Մոռցիր, մոռցիր այն լաստը, արեղան: Մոռցիր քեզի աշխարհին կապող այդ երեքուն կամուրջը, մոռցիր այդ իրարու կապած երկու գերանի կտորը...

**Արեղան** — Իրարու կապած... այն... իրարու կապած:

**Կոյր վանականը** — Դեռ ուշ չէ. խեղդէ մէջդ այդ յուշերը, ընկճէ հին դեռ ու այս բոլորը թող դառնա հիւանդութիւն մը, որ եկաւ վրադ ու անցաւ: (Թեւերը տարածելով անոր վրա) Ապաւինէ Աստուծուն, արեղան: (Կերթա դէպի դուռը եւ կէս ճամբէն) Գիշերը եթէ պէտք ունենաս՝ գնա՛րկ պատը, գամ քեզի օգնելու:

**Արեղան** — Ինձի լինչ կրնաս օգներ դուն, կոյր. դուն, որ հաներ ես քու սեփական աչքերդ:

**Կոյր վանականը** — (Խարխալելով մուտքը կը փնտռէ) Կ'օգնեմ կերպ մը, արեղան, խարխալելով, խարխալելով...: Զննա՛րկ պատը, եթէ պէտք ունենաս: (Դուրս):

5

**Արեղան** — (Նստած է անկողնին մէջ ծունկերը գլրկած. քիչ մը ստնն լուռ ու անշարժ. վերջը հեգնտու ու գլուխը շարժելով) Խարխալելով... խարխալելով... և կ'ըսէ՝ մոռցիր լաստը:

**Սեղա** — (Դուսն մէջէն հագիւ կը նշմարուի) Մոռցիր, մոռցիր լաստը...

**Արեղան** — (Յընցելով ու շշուկով) Սեղան...

**Սեղա** — Մոռցիր և Սեղան:

**Արեղան** — Ես մոռնամ քեզի:

**Սեղա** — Մոռցիր ինձի. ես քու մէջի սև դեւն եմ:

**Արեղան** — Դուն իմ հոգիիս ճերմակ թիւն ես: Նստեր էի անապատի աւազին վրա տխուր, չոր ու միանակ, դուն էիր, որ եկար թև տւիր կեանքիս, ընդթիւնը տւիր զգայարանքներուս ու ծովը սրտիս. ծովը, ուրկէ արևները կը ծնին, ուր ես անգամ մը գրկեր եմ քեզի:

**Սեղա** — Մոռցիր, մոռցիր այդ բոլորը. դեռ ուշ չէ. եղիր նորէն ան, ինչ որ էիր. մտածէ. դեռ ամբողջ երեք օր տւին քեզի:

**Արեղան** — Ո՛չ, Սեղան, ո՛չ, ես դարձ չկա. ո՛չ կըրնամ, ո՛չ կ'ուզեմ: Ես երկրպագեցի քու աստուածներուդ, ես ձօնեցի քու աստուածներուդ, ես խումբեցի վայելքի եղջիւրէն: Ես հիմա միայն քեզի՛ ծարաւ եմ, ես հիմա միայն քու գիրկդ կ'ուզեմ:

**Սեղա** — (Քիչ մը առաջ գալով գրկաբաց) Եկու՛ր, ես քուկի՛նդ եմ:

**Արեղան** — (Ինքն ալ անկողնին վրայէն առաջ ծրոնելով) Սեղան... բայց չէ՞ որ դուն երազ մըն ես:

**Սեղա** — Եկու՛ր, դուն ալ դարձիր երանգ մը:

**Արեղան** — Երանգ մը:

**Սեղա** — Եկու՛ր նորէն հոն...

**Արեղան** (Վախցած ու յափշտակւած) Ծովը...

**Սեղա** — Հոն, ուր անգամ մը գրկեր ես ինձի...

**Արեղան** — Ուր դուն թեւերուս մէջ կը դողայիր քու մարմնիդ բոլոր մասնիկներովը...

**Սեղա** — Ուր ալիքները կը դողային ու փոթորիկը կը գոռար...

**Աբեղան** — Ուր զարկերուս տակ փրփուրը կ'եռար...

**Սեդա** — Հոն, եկուր, հոն, եթէ նորէն գրկել կ'ուզես ինձի, միայն հոն: Եկուր, հէնց որ նորէն ջրերը յուզւին, հէնց որ նորէն ծովը փրփրի:

**Աբեղան** — (Հետզհետէ ծովնկի գալով անկողնին վրա) Այո, երբ որ ջրերը յուզւին, երբ որ ծովը փրփրի...

**Սեդա** — Եկուր, փաթթւինք իրարու ու տանիմ քեզի գրկիս մէջ անդունդէ անդունդ, մթնոլորտէ մըթնոլորտ, տանիմ քեզի դէպի նոր անձանօթները, դէպի այն նոր աշխարհները, որոնց մասին դուն ու քու աշխարհքդ գաղափար անգամ չունիք: Եկուր:

**Աբեղան** — Կու գամ: Առաջին անգամ, երբ քեզի զըրկեցի, բացւեցան ինձի որքան, որքան անձանօթներ. գամ նորէն քեզի գրկելու ու թող բացւին նոր անձանօթներ:

**Սեդա** — Եկուր, տանիմ քեզի հեռու, հեռու քու կեանքիդ նեղ սահմաններէն, տանիմ քեզի նոր գոյութեան, նոր ձևերու, նոր էութեան...

**Աբեղան** — (Վերադառնալով) Նոր, նոր կեանքի, նոր էութեան:

**Սեդա** — Եկուր, ձուլւիս ծովին, ձուլւիս լոյսին ու ջերմութեան, ձուլւիս ինձի ու Աստղիկան, ձուլւիս Վահագնին ու ամուսններուն...

**Աբեղան** — Ա՛խ, շուտ, ա՛խ, շուտ:

**Սեդա** — (Ծտ-ետ քաշելով) Հէնց որ ջրերը յուզւին, հէնց որ ծովը փոթորկի:

**Աբեղան** — (Մտնելուս ծայրով) Հէնց որ ջրերը յուզւին, հէնց որ ծովը փոթորկի...

## Բ. ՏԵՍԱՐԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆ ԱՌՋԵՒԻ ԶՐԱՊԱՐԱԿԸ

Նոյնը, ինչ որ առաջին արարի երկրորդ տեսարանը Յերեկ է

1

Վանականները խուճաճ են ու կը խօսին յուզւած: Աբեղան լուռ ու կենդրոնացած կեցած է ծառի մը յեմած:

**Երիտասարդ վանական մը** — (Ապշտած) Ի՞նչ կ'ըսես, ի՞նչ կ'ըսես...

**Աղամ վանական** — Ո՞վ էր լսեր այս տեսակ բան:

**Ղազար վանական** — (Ժաղրով) Հա՛, հա՛, հա՛, վանահայրը խոտկեր է եկեղեցիէն:

**Սիմօն վանական** — Վերջ տուր այդ անպատկառ ծածաղիկ:

**Ռուբի վանական մը** — Բայց իրաւ է, որ ալ ժամ չի գար:

**Աղամ վանական** — Ո՞ւր է հիմա ինքը:

**Վանական մը** — Քաշուր է իր խուցը: Կը կարգա՛մ, կ'աղօթէ՞, ո՞վ գիտէ:

**Ծերունի վանականը** — Ա՛, այդ կարդա՛լը, կարդա՛լը: Չէ, այս բոլորէն աղւոր հոտ չի գար:

**Սիմօն վանական** — Ծերունի՛, մտածե՛ր ես՝ ինչ կը խօսիս:

**Ծերունի վանականը** — (Հեռանալով) Ես բան չըսի:

**Սիմօն վանական** — Մեր մեծաւորն է, մեր առաջնորդը:

- Ծեռուցի վանականը** — Ես բան մը չըսի: (Դուրս):
- Սիւօն վանական** — (Ծտեւէն դուրս ելնելով) Կեցի՛ր, հայր-սուրբ, կեցի՛ր:
- Դաւիթ վանական** — (Մտածկոտ) Ճիշտ է. ամբարտա-  
լանութիւնը մեղք է մահացու:
- Ադամ վանական** — Մարդս պէտք է հեզ ըլլա ու խո-  
նարհ:
- Վանական մը** — Խոնարհ, խոնարհ...  
Ու երեք միասին կ'եյնեն դուրս:
- Ղազար վանական** — (Տեսակ մը ինքնիրեն) Վանա-  
հայրը խոտվեր է եկեղեցիէն... (Ժիծաղը ափին  
մէջ խեղդելով անոնց ետեւէն կ'ելնէ դուրս):

2

- Աբեղան** — (Միշտ իր ծառին տակը՝ անշարժ):
- Դաւիթ վանականը** — (Ետխորդ խումբէն միակ մնացողը.  
Նախ քիչ մը կը մնա մէջտեղը մտածկոտ, ետ-  
քը բան չհասկցողի շարժումով կ'օրօրէ գլուխը  
ու կը մօտենա արեղային) Լսեցի՛ր, արեղան, լսե-  
ցի՛ր:
- Աբեղան** — Կը լսեմ, կը լսեմ... Թող ինձի, մի՛ խան-  
գարե՛ր՝ որ լսեմ:
- Դաւիթ վանականը** — (Զարմացած) Ի՞նչը:
- Աբեղան** — (Խորը մատնանիշելով) Ա՛յ, ականջ դի՛ր:
- Դաւիթ վանականը** — Ի՞նչ է որ:
- Աբեղան** — (Խորհրդատր) Զրե՛րը կը յուզուին, ջրերը  
յուզուիլ են սկսեր:
- Դաւիթ վանականը** — Է՛, ի՞նչ ընենք: Երեի, գիշերը  
փոթորիկ ենք ունենալու:
- Աբեղան** — (Սաստիկ յուզելով) Փոթորի՛կ, փոթորի՛կ...

**Դաւիթ վանականը** — (Անտարքեր) Գուցէ, եղանակնե-  
րը փոխեցան:

**Աբեղան** — (Յանկարծ բռնելով ընկերոջը թեւէն) Ու-  
րեմն այս գիշեր... կը կարծես՝ այս գիշեր...

**Դաւիթ վանականը** — Այդ ինչպէ՛ս կը դողաս: Խեղճ  
արեղան, այն փոթորկէն իվեր, երեի, աչքդ վախ-  
ցեր է: Հանգստացի՛ր, հանգստացի՛ր: Եկու՛ր, եր-  
թանք եկեղեցի. աղօթէ, սիրտդ կը թեթևի:

**Աբեղան** — (Յանկարծ) Եկու՛ր՝ երթանք ափը:

**Դաւիթ վանականը** — Ա՛. փը...

**Աբեղան** — Եկու՛ր, կ'ուզեմ տեսնեմ փոթորկին գալը:  
Բայց... բայց առանձին չեմ կրնար: Գիտե՛ս, կը  
քաշէ, կարծես կը քաշէ, կը քաշէ... (Ամուր կը  
սեղմի ծառին):

**Դաւիթ վանականը** — Աբեղան, աւելի աղէկ է՝ երթաս  
ու պառկիս: Դեռ փողուր ես ելեր ոտքի: Տես, աչ-  
քերդ կատարեալ տենդ ունին դեռ: Երթանք, տա-  
նիմ քեզի խուցդ:

**Աբեղան** — (Ժառիմ քսելով կամաց մը կ'իջնէ ու կը  
նստի) Թող, թող, թող ինձի: Թող, ես կ'ուզեմ  
տեսնեմ փոթորկին գալը:

**Դաւիթ վանականը** — (Կեցած է Աբեղայի գլխուն՝ չի-  
մանալով ինչ ընէ):

3

**Վանական մը** — (Ենթա վագելով) Վանահայրը, վա-  
նահայրը:

Կը լսելն ձայներ, գայլած աղմուկ ու մեկմեկ, եր-  
կու երկու՝ խառն կը մօնեն վանականները խոճու ու  
մտախոն: Կու գան ու լուս կը շարունակ իրարու ետ:  
Վանական մը կ'առաջնորդէ Կոյրը:

Ետի վանականը — Բայց ի՞նչ կա. է, ի՞նչ է պատահեր:  
Առաջնորդը վանականը — Ըսի՛ չգիտեմ. վանահայրն  
է պատերիբը:

Վանական մը — Սո՛ւս, եկաւ:

Պատիք վանականը — (Արթընցնելու պէս) Ոտքի, ա-  
րեղան. վանահայրն է:

Սրբեղան — (Կը նայի շուրջը ու կ'ելնէ ոտքի):

4

Վանահայր — (Կու գա խորքէն ծանր ու տխուր: Բո-  
լորը գլուխ կու տան. Լուս, երկար նայածը մ'ը  
կը նետէ խումբին վրա) Բոլորդ էք:

Ձայն մը — Այն, վանահայր:

Վանահայր — (Կը նստի բարձր քարի մը: Սպասու-  
ողական լռութիւն:) Բան ունիմ ձեզի ըսելու: (Կը  
մտածէ) Կը տեսնէք այս եկեղեցին, որ գրեթէ  
աւարտած է արդէն և ուր բաւական ժամանակէ  
իվեր մեր աղօթքները կը խնկենք մեր Աստծուն.  
այս եկեղեցին... այս եկեղեցին նւիրւած չէ մեր  
Աստծուն:

Ընդհանուր զարմանք ու շարժում:

Սիւսի վանականը — Ի՞նչ ըսիր, վանահայր:

Վանահայր — Այս եկեղեցին նւիրւած չէ մեր Աստծուն:  
Այս եկեղեցին, երբ ես կը շինէի, ես դեռ կտրւած  
չէի աշխարհէն... (Շշուկներ) Ես կը կարծէի թէ  
կտրւած եմ: Մենք բոլորս ալ, որ թողեր ենք աշ-  
խարհը ու եկեր անապատ, մեր հոգիին խորքը դեռ  
մեծ կտոր մը աշխարհ էինք բերեր մեզի հետ. ներ-  
քին վայելքի ծածուկ կարօտ մը, քողարկւած հա-  
ճոյքներու բարակ ծարաւ մը, մեր անցած կեանքի,

կուրի ու յուզումներու ամբողջ նուրբ ու կաշուն-  
ցանց մը. և ահամա վերյուշներ: Այս բոլորը դեռ  
մեզի հետ էր, երբ այս եկեղեցին կը շինէինք: Այդ  
ծածուկ, քողարկւած յուզումներն են շինելու այս եկե-  
ղեցին. աշխարհէն անապատ եկած, մեզի հետ ներս  
սպրդած աշխարհի այդ կտորն է շինելու այս եկեղե-  
ցին: Աշխարհինն է այդ եկեղեցին, մեր Աստծունը  
չէ: Ատոր կամարներուն տակ մենք այլ եւս աղօթել  
չենք կրնար. այդ կամարները պէտք է քանդուին:  
Ձայն — (Ապշած, սարսափած) Քանդուին... քան-  
դուին...

Աղամ վանականը — Մեր եկեղեցին քանդուի՞:

Միտասարդ վանական մը — Մեր նոր եկեղեցին քան-  
դուի՞:

Վանահայր — Այն. պէտք է քանդենք ու շինենք նորը:

Ձայն — (Ջարմանք ու հեզնութիւն) Նորը... նորը...

Աղամ վանականը — Շինենք նորը:

Վանահայր — Նորը: Եւ այդ նոր եկեղեցին պիտի  
շինենք մենք ինքներս: Աշխարհէն եկած դրամը  
աշխարհիկ զգացումներու նւէրն է, աշխարհէն եկած  
վարպետները աշխարհիկ հասկացողութիւն է, աշ-  
խարհի արւեստը: Մարդս ինք միայն կրնա շինել  
իր Աստծուն նւիրւած տաճարը, իր մէջքովը, իր  
ձեռքերովը, իր խելքովը: Թէ ինչ ձև է ունենալու  
մեր նոր եկեղեցին, դեռ ես ինքս ալ որոշ չգիտեմ.  
այ, կը նստինք միասին ու կը խորհինք. կը խոր-  
հինք ու կ'ըստեղծենք:

Չեբուկի վանականը — (Հեզնուտ) Մենք ինչ արհեստա-  
ւորներ ենք, վանահայր. մենք ի՞նչ կրնանք շի-  
նել, դիցուք, եթէ ուզենք ալ:

Վանահայր — Կամքը, ձեռունի. ուզէ ու կը շինես,  
եթէ մանանխի չափ հաւատք ունենաս քու կամքիդ:

Չեռուցի վանականը — է՛, անցեր են այն ժամանակները:

Վանահայրը — Ո՛չ, չեն անցեր. դեռ չեն եկեր այդ ժամանակները. իմ նոր եկեղեցիիս մէջէն պիտի երթանք դէպի այդ ժամանակները:

Չեռուցի վանականը — Լսէ՛, վանահայր, լսէ՛ ինձի, ես ծերունի մարդ եմ: Դուն շատ ես կարդացեր ու խախտեր ես ուղեղդ: Քու բռնած ճամբար ծուռ ճամբա է: Մի՛ չարչարեր գլուխդ, այդ ճամբան հերետիկոսներուն ճամբան է:

Վանահայրը — (Հպարտ) Այդ ճամբան առաքեալներու ճամբան է. այդ ճամբով է անցեր ինքը Քրիստոս:

Ղազար վանական — Ո՛ւ... կը լսէ՛ք:

Շեռկ ու վրդովում:

Չեռուցի վանականը — Մի՛ խօսիր այդպէս անմիտ, վանահայր:

Աղամ վանականը — Ո՛չ ալ այդպէս մեծամիտ:

Անտն վանականը — Եւ ձգէ հանդիստ մեզի ու մեր եկեղեցին. մեզի պէտք չեն նոր ձեւի շէնքեր. այս ձեւն է մեզի մեր պապերէն աւանդ հասեր:

Վանական մը — Մենք ո՛չ քարտաշ ենք, ո՛չ վարպետ:

Աղամ վանականը — Եւ չենք եկեր հոս պատեր քանդելու, պատեր շինելու:

Ուրիշ վանական մը — Մենք եկեր ենք հոս հանգստանալու:

Զաւարիա վանականը — Այո՛, հանգստանալու ու աղօթելու:

Միխատարի վանական մը — Եւ ինչո՞ւ քանդենք մեր նոր շինած սիրուն աղօթատեղին. ոչինչ չեմ հասկընար. միտքն ինչ է, ինչո՞ւ:

Զաւարիա վանականը — Որուն վրա այսքան ծախս է թափուեր, այսքան աշխատանք:

Ղազար վանականը — Եւ ի՞նչ ըսենք իշխանին, իշխանունիին, որոնք հոգացեր են բոլոր ծախքը:

Զայներ (Մատն) Իհարկէ՛, իհարկէ՛... իշխանը... իշխանունիին...

Զաւարիա վանականը — Եւ ո՞վ կու տա այն ատեն տասը չափ ցորենը, պարէնը, այսքան նւէրը:

Զայներ — (Մատն) Իհարկէ՛, իհարկէ՛... ցորենը... պարէնը...

Աղամ վանականը — Հանդիստ թո՛ղ մեզի ու մեր ապրուստը:

Զաւարիա վանականը — Քու շինելիք եկեղեցիդ հաց կու տա՞ մեզի:

Պաւիր վանականը — Որքան ալ ըլլա մեր սեղանը սակաւ, բայց հաց պէտք է, որ ապրինք:

Չեռուցի վանականը — Որ կեանքի հոգը չխեղդէ մեզի:

Մովսէս վանականը — Որ մեր աղօթքը չը խանգարի:

Չեռուցի վանականը — Ուշքի եկու՛ր, վանահայր, քանի կանուխ է ու թո՛ղ մեր անապատը խաղաղ ու հանդիստ:

Վանահայրը — (Նախ շարածի պէս է այս տարափին տակ, ետքը գլուխը վեր կ'առնէ, կը նայի շրջապատողներուն տեսակ մը սպշութեամբ) Դո՞ւք... հոս իմ շուրջս, կ'ս... հոս կեցած ձեր մէջը... Ե՛ս ձեր վանահայրը, դո՞ւք իմ միաբանութիւնս, իմ իսկ հիմնած: (Մատն) Միաբանութիւնս, ի՞նչ միութիւն ձեր ու իմ մէջ... (Աչքերը շիկեցով) Կարծես կապը կ'իյնայ աչքերէս: Ի՞նչ պէս է եղեր, որ ես չեմ հասկըցեր այսքան պարզ բանը, այսքան ակընյայտնի: Մինչև հոս, մինչև անապատ կըցեր ենք մենք միասին: Մինչև հոս ես կրնայի բերել ձեզի, մինչև հոս կարելի է բե-

ընկ մարդը, բայց հոսկէ անդին... հոսկէ անդին մարդ ինքը պիտի երթա: Ճշմարիտը դուք էք. այդ եկեղեցին պէտք է, որ մնա, ան է ձեր եկեղեցին. գացէք, գացէք ներս: ան կու տա ձեզի անվերջ աղօթքներ ու մխրթարանք, ան կը բանա ձեզի արքայութեան դռները, կ'ազատէ ձեզի բոլոր սատանաներէն, ան ձեզի ձեր հացն ալ կու տա ու ձեր հանդիստը. գացէք, գացէք ներս ու խաղաղութիւնը թող ըլլա ձեզի հետ: Իսկ իմ փնտռածս ատիկա չէ. իմ փնտռածս աշխատանքն է, ներքին անդուլ ու անկաշկանդ որոնումը, ներքին անվերջ նւաճումները բարձունքէ բարձունք, պարիսպէ պարիսպ, տարակոյսներու անդունդներուն վրայէն, ելքերով ու անկումներով. անգաղար խոյանք մը դէպի վերինը. տաժանակիր աշխատանք մը դէպի ճշմարտութիւնը: Գացէք, գացէք ներս դուք ձեր եկեղեցին, ես ալ երթամ շինեմ իմ եկեղեցիս. բայց այս անգամ ես, միայն ես, և կերտւածք մը, որ վայել ըլլա իմ Աստուծու բնակութեանը, որու կամարներուն տակ իմ խնկելիք աղօթքիս ոչ մէկ բառը կեղծ չի հնչէ, ոչ մէկ բառի արձագանգը դատարկ չի հնչէ:

Պաւլոս վանականը — (Ժաղրով) Ատ ո՛ւր պիտի շինես, վանահայր, քու նոր կերտածքը:

Ղազար վանականը — (Ժաղրով) Եւ ինչէ՞. կրանիդ պիտի ըլլա, թէ մարմարէ:

Վանահայրը — Կրանիդ ու մարմար, որձաքար ու ամեն տեսակ քար ես կը թողնեմ աշխարհի աստուածներուն: Իմ տաճարիս հիմքը իմ բանականութիւնս պիտի ըլլա, սիւնները իմ կամքս է, ու զմբէթս ալ ըլլալու է հաւատքս:

Ծերունի վանականը — Շատ խախուտ է, վանահայր նոր շէնքիդ հիմքը:

Վանահայրը — (Անխոյժ) Խախուտ է՛ կը փլի:

Պաւլոս վանականը — Եւ այն ատեն...

Վանահայրը — Կը շինեմ նորը:

Ծերունի վանականը — Բայց ատիկա վերջ չունի:

Վանահայրը — Կ'ուզէիր որ վերջ ունենար: Քանի կ'ապրինք՝ շինենք պիտի. պիտի շինենք մեր Աստուծուն իր տաճարը. շինենք ու փլի, շինենք ու քանդենք. շինենք ու շինենք միշտ, բայց երբէք, երբէք չաւարտենք: Հէնց որ աւարտի, ալ տաճար չէ Աստու, այլ... (Եկեղեցին մատնանիշ) կռատուն:

Ղազար վանականը — (Կատաղի) Կը հայհոյէ, կը հայհոյէ մեր Աստուծուն:

Վանահայրը — Ամենէն ստոր հողիները միայն հայհոյել կրնան այն Աստուծուն, որուն երբեմն երկրպագներ են: Բայց կը տեսնեմ՝ ալ մենք իրար չենք հասկընար: Մնաք-բարով, ձեր Աստուածը ձեզ հետ:

Կ'ուզէ երբա՛ Աբեղան առաջ կու գա ու նամբան կը կտրէ:

Աբեղան — Կեցիր:

Վանահայրը — Ի՞նչ է: Գուցէ կ'ուզես նորէն ինծի հետ, արեղան: Եկուր, քու հողիդ թռիչք ունի, ես գիտեմ:

Աբեղան — Կեցիր: Ըսէ. քու այդ նոր շէնքէդ երեւան պիտի արեւի ծագումը:

Վանահայրը — Մոռցիր արեւն ու իր ծագումը, որ ծագի քեզի ծագումներուն ծագումը, որ արեւէ քեզի արեւներուն արեւը:

Աբեղան — Կեցիր: Ըսէ. քու այդ նոր շէնքէդ լսե՛ պիտի, տես, այս աղմուկը... (Մոռքը մատնանիշ ընելով) Կը լսես:

Վանահայրը — Ի՞նչ աղմուկ. այդ լսողը ծոփն է ալեկո՛ծ:

**Աբեղան** — Այն, ատիկան:

**Վաճահայր** — Բու փնտռածդ, մանուկ, մարդու կառուցած առաջին եկեղեցին է, նախնականը:

**Աբեղան** — Չէ, ալ ինծի չես խաբեր քու այդ արհամարհոս բռներովդ: Խօսէ շիտակ. ըսէ. հասնելու է քու եկեղեցիդ ծովուն ձայնը:

**Վանահայր** — Իմ եկեղեցիս չէ հասնելու նչ-մէկ արտաքին յուզում, նչ-մէկ արտաքին աղմուկ: Եթէ կ'ուզես ինծի հետ՝ յոյսդ կտրէ արեւէն ու ծովէն:

**Աբեղան** — (Ճամբա դնելով) Անցի՛ր այն ատեն:

**Վանահայր** — (Հեռանալով) Ափսոս, արեղան, քու միտքդ երբեմն թեւեր ունէր: (Դուրս:)

**Աբեղան** — (Նտնելն) Ափսոս, վանահայր, քու սիրտդ երբեմն թեւեր ունէր:

**Կայր վանականը** — (Նրկու ձեռքերը ստաջ պարզելով) Ե՛ս... Ես կ'ուզէի քեզի հետ...

**Ձայներ** — (Շշուկով) Կո՛յրը... կո՛յրը...



## Գ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

### Բ Ա Ր Ձ Ր Ծ Ո Վ Ա Փ

Աջ ու ձախ ժայռեր: Քարբարոս գետինը ֆիչ-ֆիչ կը բարձրանա ու նակիին կը կազմէ ծովուն սեպ երուններ: Դիւեր է. այեկոծութիւն:

1

Ժայռի երուններն այիփներուն կասաղի ելեւեջը:

Այիփները, որոնք կնոջ մարմին ունին, կ'երեւան միայն մինչեւ մեջք ու կ'աշխատին կախիւն ժայռէն, բայց վայրկեան մը միայն, իսկոյն վար կը քափին նորէն շառաչելով:

Այնպէս որ անդադար շարժում է ու ելեւեջ, իրար հրելով, իրար փաշելով. եւ այդ իրարանցումին մեջէն է, որ կը խօսի.

**Ձանազան այիփներ**— (Բերնէ-բերան ու ընդհատ-ընդհատ)

- Պիտի կորչիս:
- Տեղ տուր լանջիս:
- Քարին փակչիս:
- Ա՛յ, հասանք, հասանք:
- Հոսանք է, հոսանք:
- Ի՛նչ վազեր ենք ափէ ափ:
- Ի՛նչ ցատկեր ենք չափէ չափ:
- Չո՞փ. ի՛նչ չափ:
- Անչո՞փ. անչո՞փ:
- Չո՞փ, չո՞փ:
- Ա.ս թռչիլ է, վազել չէ,
- Ա.ս եռալ է, ցատկել չէ:
- Կեցի՛ր, կեցի՛ր ու կանչէ:
- Չէ, չէ, անցի՛ր. աս ան չէ:

+ 62/119

- Ա՛ն է:
- Ան չէ:
- Է՛, մէկ չէ՞:
- Կանչէ, կանչէ:
- Մենք պարապ չենք:
- Ոչինչ՛, կանչենք:
- Կանչէ՛նք:
- Կանչենք:

**Խուսք մը ալիք** — (Միարերան)

Հէ՛յ, ահանջէ.  
 յոյզ ու տենչ է ամեն լանջէ,  
 կը շառաչէ.  
 քեզի ծոփն է, որ կը կանչէ,  
 հէ՛յ, ահանջէ:

**Ուրիշ խուսք մը** (Հեզնանքով ու հեռանալով)

Ա՛, չէ, չէ, չէ.  
 նստէ հողին ու քեզ տանջէ:

**Նախորդ խուսքին ձայնը** — (Աւելի հեռուէն)

Հէ՛յ, ահանջէ.  
 յոյզ ու տենչ է ամեն լանջէ...

Ու քիչ մը ասեմ ժայռի Երուսեմին լուսինն կը տեսնեմ. եւ ասելի որո՞ւ կը լսի բացերէն փոքորկի խոր ու խուլ աղմուկը:

2

**Արեղան** — (Ժայռերուն մէջէն կը նետուի ներս, մազերը խոլի, հագուստը խառնակ, աչքերը մուգ) Եկա՛, եկա՛... (Ու յանկարծ կը կենա, կը շփե՛ն սակատը, կը նայի ետ ու կ'ըսկսի բարկացած շեշտով մը) Դէ՛, մնաս-բարով, կողմի՛. մնաս-բարով, անապատ. մնաս-բարով դուք ալ մութ-մութ կամարները տաճարին, մնաս-բարով իմ աղօթքներս

ու խնկումը հողիս. մնաս-բարով և դուն, ո՛վ անողոք ու վրէժխնդիր Ասուած, որուն ուղղեր եմ իմ տենչերս ու աղօթքներս: Դուն ալ մնաս-բարով, խցիկս, իմ մենաւոր ու լուրի խցիկս, ալ չեմ դառնալու քեզի: Ա՛յ, դեռ կը վառի հող՝ ծոցիդ մէջ՝ ճրագիս աղօտ լոյսը. առաւան դէմ մինակը՝ մինակը մարի պիտի ու ալ երբէք չի պիտի վառի: Թ՛ող մարի:

Հովի ուժեղ քափը:

**Արեղան** — (Կը ցնցւի, կը դառնա ծովուն ու թեւերը կարօտակէզ առաջ պարզելով) Դէ՛, բաց գերկդ, Սեղա՛, բաց թեւերդ. անա՛ յոյզը ջրերուն, անա՛ վազը փոթորկին. բաց թեւերդ ու նորէն փարած քու խնկելի մարմնիդ, նորէն շունչդ շնչիս, ալիքներուն ծեծկուքին մէջէն, անցնիմ այն նոր ու մեծ անձանօթին, նոր գոյութեան ու նոր կեանքին. ան, որ խոստացեր ես ինձի: (Քայլ մը առաջ ընելով) Բաց գերկդ, Սեղա՛...

3

**Սիւօն վանական** — (Վերի ժայռին վրայէն շիտակ անոր առջեւ կը ցատկէ ու կը կտրէ ճամբան հեւալով) Կեցի՛ր: (Կուրծքը սեղմելով) Շունչս... շունչս...

**Արեղան** — (Յանկարծակիի եկած ու խոժոռ) Մէկդի՛ ճամբէս:

**Սիւօն վանական** — Կեցի՛ր, դժբաղդ, կեցի՛ր: Վախցի՛ր Աստուծամէ՛:

**Արեղան** — (Կուր պատրաստելով) Մի կտրեր առջիս:

**Սիւօն վանական** — Գու առջիդ մութ է ու անդունդ:

**Արեղան** — Ետ քաշէ, մարդ:



Սիմոն վանական — Վախցիւր այդ մութէն ու անդունդէն:

Աբեղան — (Կատողած) է՛, հերիք է, հեռու գացէք ձեր անդունդներովը ու մութերովը, հեռու ձեր անվերջ վախերովը: Վախ լոյսերէն ու բերկրանքէն, վախ մութէն ու տանջանքէն, վախ աստուածներէն, վախ դժոխքէն: Հեռու, բաց ճամբաս: Հոն ոչ մութ կա, ոչ անդունդ: Ծոփե՛ք է միայն ու փոթորիկը իմ առջևս:

Սիմոն վանական — Մահն է քու առջևդ, թշուառահան:

Աբեղան — Մահն ալ ձեր վախն է ու ձեր վախի հնարածը:

Սիմոն վանական — Աստուած իմ, խելագար է:

Աբեղան — Մահը սա է, հոս, այ, այս ձեր անապատը այս վախի ու մեռելութեան կեանքը: Իսկ հոն ազատն է. յոյզն ու շարժումը. հոն կեանքն է, և ես կ'ուզիմ կեանքին զիրկը... (Յանկարծ ուժով մը կը հրէ, կը նետէ զետին) Հեռու ճամբէս: Ես կ'ուզեմ ապրիմ, ապրիմ. Սեղա... (Կը նետի ծովը):

Սիմոն վանական — (Կէս մը զետնէն քարձրանալով, սարսափահար ու խեղդած ձայնով) Կորսու. կորաւ իր հոգին...

Լուսիւն. ալիքներուն աղմուկը:

4

Ժայռերուն մէջէն հետզհետէ կը հասնին վանականներ՝ հագուստ ու մագեր հովերուն:

Ադամ վանական — Ո՛ւր է, ո՛ւր է:

Դաւիթ վանական — Գտա՛ր. ճիշտ է. տեսա՛ր:

Զաբաբա վանական — Ո՞ր կողմը անցաւ:

Ղազար վանական (Մերս ցատկելով) Ո՛ւր է, ո՛ւր է:

Սիմոն վանական — (Ժովը մատնանիշ) Ա՛յ, հոն...

Խուճբը — (Սարսափով, կիսածայն) Ծոփը...

Սիմոն վանական — Կորսու իր հոգին:

Վանական մը — Ա՛յ անիծած է այս ժայռը. հոսկէ ճգնաւոր մըն ալ նետեր է ինքըզինքը ծովը:

Կոյր վանական — (Ուրիշ վանականի մը թեւէն կախուած շնչասպառ ու սաստիկ յուզած, թեւերը անկարգ խարխաբող շարժումներով ստաջ պարզած՝ կը մտնէ ներս):

Վանական մը — Եկաւ իր կոյրը, իր կոյրը...

Կոյր վանական — (Կը կենսա անշարժ ու ամբողջ հասակովը ուղղելով, ընդհանուր լուսթեան մէջ) Իրան է, իրան է:

Քուրթ — (Քար լուծին. զլուխները կը կախնն վար):

Կոյր վանական — (Չեղբերը վեր բարձրացնելով) Ուրեմն... Աստուած իմ:

Ղազար վանական — Այո, աստուած: Աստուած վրէժն էր ասիկա: Եկեղեցին քանդել ուզելը անպատիժ չէ մնար: Մեծի վրէժը ինկաւ ամենէն փոքրի զլխուն:

Մովսէս վանական — Ա՛խ, մեր խեղճ, մեր բարի, մեր մաքուր արեղան...

Ադամ վանական — Հեղ ու բարի, համեստ ու սուրբ:

Խուճբը մը — Ան սուրբ էր, սուրբ:

Զաբաբա վանական — Եզերքն իջնենք, եղբորք, զուցէ գանենք դիակը. գոնէ դիակը:

Երիտասարդ վանական մը — Երթանք բերենք լաստը:

Անտոն վանական — Դժուար է. բայց պէտք է, որ բերենք լաստը:

Կոյր վանական — Լաստը...

Անտոն վանական — Զարմանք բան է. ինքը ազատեց

ուրիշի մը կեանքը ծովէն ու իր կեանքը տաւ  
ծովուն:

Մրիսասարդ վանական մը — Երթանք, երթանք, որո-  
նենք:

Մովսէս վանական — (Աչքերը վեր յառած ու մարգա-  
րէական շեշտով մը) Լսեցէք, եղբայրք: Եթէ Աստ-  
ւած ողորմի ու դիակը գտնենք, պէտք է տանինք  
թաղենք նոր եկեղեցիի սեմին: Զոհի նոխարը կը  
մորթին տաճարի սեմին:

Պատիք վանական — Տէրը կը խօսի քու բերնովդ: Թա-  
ղենք եկեղեցիի սեմին:

Խումբը (Հեռանալով) — Թաղենք, թաղենք եկեղեցիի  
սեմին:

Բոլորը դուրս. կը մոռցի կոյրը, որ կը մնա մինակ:

5

Կոյր վանականը — (Մորտակած գլուխը կը շարժէ)  
Գացէք... թաղեցէք... ձեր եկեղեցիի սեմին. հին  
աստուածներու սեմին. ա՛, կարող են, հզօր, այդ  
հին աստուածները. դեռ շատ են հզօր...

Չայն մը — Իզո՛ւր հանեցիր աչքերդ:

Կոյր վանականը — (Մորին յուզումով ու ահաբեկ) Ո՞վ  
է ատ, որ կը յանդգնի...

Չայնը — Իզուր հանեցիր աչքերդ:

Կոյր վանականը — (Վախէն ետ-ետ երթալով) Որո՞նչ  
ձայնն էս դուն... կ'ուզէի նայիմ աչքերուդ խորքը...

Չայնը — Իզո՛ւր հանեցիր աչքերդ:

Կոյր վանականը — Իզո՛ւր...



Ար. Քրիստիան Կ. Բրնն

ՀՀ Ազգային գրադարան



NL0347707



47.379